11389

ԲԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՊՐԱԿ I

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ. 1928

3(02)
Ք-16

3(02)
Ֆ.-16

25 SEP 2006
1 DEC 2009

ԲԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Բ. Ո Լ' Խ Ո Վ Ո Ց

1003
(14409)

Հանձնարարված է Լենկոմյերիտմիության
Կենտկոմի Ագիտ-Պրոպ բաժնի կողմից

ՊՐԱԿ I

1495

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ, 1928

29 AUG 2013

11389

62-92

Главлит № 98327 Зак. № 1936. Тираж 5000 экз.

Книжн. ф-ка Центральн. Изд-ва Народов СССР. Москва, Шлюзовая наб., 6.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I ՊՐԱԿ

	էջ
1. ԹՄՀԱՐ յեվ կապիտալիստական աշխարհը	5
2. Կապիտալիստական հասարակակարգը	31
3. Իմպերիալիզմը կապիտալիստական հասարակակարգի վերջին ասիճանն է	53
4. Պրոլետարական հեղափոխությունը յեվ պրոլետարիատի դիկտատուրան	73
5. Կոմունիզմը—պրոլետարիատի վերջնական նպատակն է .	100

II ՊՐԱԿ*

6. Կուսակցության տնտեսական հաղթականության հիմքերը:
7. Կուսակցության անելիքները արդյունաբերության բնագավառում:
8. Կուսակցության անելիքները գյուղական տնտեսության բնագավառում:
9. Կուլտուրական հեղափոխությունը:
10. Սոցիալիզմի շինարարների նոր կադրեր պատրաստելը:

III ՊՐԱԿ*

11. Համ. Կոմկուսը (բ) բանվոր դասակարգի առաջավոր ջոկատն է:
12. Համ. Կոմկուսի (բ) կանոնադրության հիմունքները:
13. Համ. Լենինյան Կոմյերիտմիությունը:
14. Համաշխարհային հեղափոխության ուղիները:
15. Համաշխարհային հեղափոխության ուղիները (շարունակություն):

---

* *Դասագրքի II և III պրակները մամուլի տակ են և շուտով լույս կտեսնեն:*

Այս դասագիրքը կազմել են՝ ԲՐՈՆԻՆ, ԿԱՍԻՐԵՆԿՈ, ԿՈԼԵՍՆԻԿՈՎ, ՌԵԶՆԻԿ յեվ ԼԵՈՆՏԻՑԵՎ. ընդհանուր խմբագրությունը՝ Բ. ՈԼ'ԽՈՎՈՑԻ: Հայերեն բարգմանությունը (փոխադրությունը) կատարված է ձեռագրից:

Շտապ լույս ընծայելու (ժամանակին հասցնելու) համար, դասագիրքը հրատարակում ենք յերեք պրակով: II յեվ III պրակները մամուլի տակ են: I-ին պրակին վերաբերող մի քանի դիագրամներ կտրվին II պրակի վերջում: Դասագիրքը կազմված է համաձայն այն ծրագրի (1928—29 ուս. տար.), որ Լենկոմյերիտմիությանը կենտկոմը հաստատել է բաղդպրոցների համար:

10 սեպտեմբերի 1928.
Մոսկվա.

Ջրույց առաջին

ԽՍՀՄ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

1. ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՀԱՂԹՈՂ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Մորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը ծնվեց պրոլետարական հաղթական հեղափոխության հետևանքով: 1917 թ. հոկտեմբերին բանվոր դասակարգը, չքավոր գյուղացիության հետ միացած, տապալեց կապիտալիստների կառավարությունը Ռուսաստանում և հայտարարեց Մորհուրդների Իշխանության: Պրոլետարական հեղափոխությունը պատրաստվում է ամբողջ նախընթաց զարգացումով այն հասարակակարգին, որ կոչվում է կապիտալիզմ: Կապիտալիզմի գլխավոր հատկանիշը հանդիսանում է հասարակության բաժանումը յերկու հիմնական դասակարգերի—կապիտալիստների, որոնք տիրում են ֆաբրիկներին, գործարաններին և ընդհանրապես արտադրության բոլոր միջոցներին, ու պրոլետարների, որոնք զրկված են արտադրության միջոցներից և այդ պատճառով էլ իրենց բանվորական ուժը ծախում են կապիտալիստներին: Բացի այդ հիմնական դասակարգերից, ամեն մի կապիտալիստական յերկրում կան բազմաթիվ մանր սեփականատերեր, մանր տնտեսություններ (գյուղացիներ, տնայնագործներ, արհեստավորներ և այլն), որոնք տիրում են արտադրության միջոցներին, սակայն որոնց ոգնությանը իրենք են աշխատում: Մանր սեփականատերերը (մանր բուրժուազիան) միջանկյալ տեղ են բռնում բանվոր դասակարգի ու գյուղացիության միջև և կապիտալիզմի որոք իրենցից ներկայացնում են մինչ կապիտալիստական հասարակության ձևի հնացորդները: Կապիտալիզմի զարգացմամբ, մանր սեփականատերերի մեծ մասը քայ-

քայվում է և անցնում պրոլետարիատի շարքերը, իսկ չնչին մասն աճում է դեպի վեր, անցնելով բուրժուազիայի շարքերը (որ. կուլակը դյուղում)։ Բանվոր դասակարգը կապիտալիստների դասակարգի կողմից չենթարկվում է շահագործման, այսինքն կապիտալիստները յուրացնում են բանվորների աշխատանքի արդյունքի վորոշ մասը։ Այդպիսի շահագործումը (մի դասակարգի կողմից մյուս դասակարգի աշխատանքի յուրացումը) հնարավոր է այն պատճառով, վոր կապիտալիստների դասակարգը արտադրության միջոցների տերն է հանդիսանում (այդ մասին ավելի մանրամասն կասվելու է հերկրորդ գրուցում)։ Մինչդեռ բանվորները ձգտում են բանվորական որը կրճատել և աշխատավարձը բարձրացնել, այսինքն իրենց շահագործումն կապիտալիստների կողմից պակասեցնել, կապիտալիստներն ընկած շահույթի չափից, ձգտում են բանվորների դրության վատթարացմանն։ Կապիտալիզմը շահագործում է ոչ միայն բանվորներին, այլև մանր սեփականատերերին (գյուղացիներին, ոնայնագործներին և այլն)։ Ցարական Ռուսաստանում գյուղացիները չենթարկվում էին չափազանց շահագործման՝ անապին քանակությամբ հողերին տերող կալվածատերերի կողմից։ Սակայն, մինչդեռ մանր արտադրողների շահագործումը կատարվում է ամեն տեսակի քողարկումներով և սեփական արտադրության միջոցների առկայությունը մանր արտադրողին կապում է տնտեսության բուրժուական սիստեմի հետ—«ֆաբրիկ-գործարանային պրոլետարիատի շահագործումը շատ մեծ է, համայնացված և համակենտրոնացված... Բանվորն արդեն չի կարող չտեսնել, վոր կապիտալը ճնշում է իրեն և վոր բուրժուական դասակարգի դեմ պետք է կռվել» (Լենին)։

Այդ պատճառով էլ մեծամեծ ձեռնարկություններում, խոշոր մասսաներով կենտրոնացված պրոլետարներն ավելի շուտ են հասկանում իրենց դասակարգային շահերի ընդհանրությունը և կամ ինչպես ասում են, համերաշխությունը, քան շահագործվող մանր սեփականատերերը։ Բանվոր դասակարգի շահագործումը հանդես է գալիս ամենապարզ կերպով, և նա իր ամենաանհրաժեշտ տընտեսական կարիքների բավարարման համար (աշխատավարձի բարձրացումը, բանվորական որվա կրճատումը) մղվող պայքարում անխուսափելիորեն ընդհարվում է շահագործող դասակարգի

հետ, և այդ նրան հասցնում է դասակարգային պայքարին։ Այդ իսկ պատճառներով բանվոր դասակարգը, հանձինս յուր ավելի առաջավոր ներկայացուցիչների, գալիս է այն եզրակացության, վոր բանվորների դրության լուրջ բարելավումը կապիտալիզմի որոք անհնար է, վոր շահագործումից ազատվել կարելի է միայն կապիտալիստական հասարակակարգի կործանման և նոր հասարակակարգին—կոմունիզմին անցնելու միջոցով։ Ջանազան յերկրների պրոլետարների դրության միատեսակ լինելը, կապիտալի կողմից տարբեր յերկրների տնտեսության միացումը համաշխարհային տնտեսության մեջ, հանգում է նրան, վոր բանվոր դասակարգի պայքարը կապիտալիստների դասակարգի դեմ ընդունում է միջազգային բնույթ, սահմանվում է բանվորների ինտերնացիոնալ համերաշխությունն, վորովհետև կապիտալիզմին վերջնականապես հաղթելը հնարավոր է միայն միջազգային հեղափոխության հետևանքով։ Պրոլետարական հեղափոխությունն առանձին յերկրներում դառնում պրոլետարիատի միջազգային հեղափոխության միայն բաղադրիչ մասը։

Ֆաբրիկ-գործարանային արտադրության պայմանների շնորհիվ, յուր դասակարգային աճող միաձուլության հետևանքով, կապիտալիստական սիստեմում ամեն տեսակ շահագրգռվածություն չունենալու հետևանքով — քանի վոր պրոլետարները վոչինչ չունեն կորցնելու, բացի իրենց շղթաներից» (Կ. Մարքս)—բանվոր դասակարգը շահագործողների՝ կապիտալիստների և կալվածատերերի դեմ մղվող պայքարում առաջ է քաշվում վորպես ճնշվող և շահագործվող ամբողջ աշխատավորության առաջավոր ներկայացուցիչ։ Այսինքն, կապիտալիզմի դեմ մղվող պայքարում պրոլետարիատը խաղում է գլխավորող դեր, հանդիսանալով միակ դասակարգը, վորն ընդունակ է պարզ և վճռողականորեն առաջադրել հեղափոխական խնդիրներ ու մինչև վերջը կռվել նրանց իրագործման համար։

Միաձուլությունը, կազմակերպվածությունը և գիտակցության զարգացումը բանվոր դասակարգի շարքերում աճում են կապիտալիզմի աճման հետ միասին, վորպիսի հանգամանքը ֆաբրիկներում ու գործարաններում ավելի յև կենտրոնացնում բանվորական մասսաներ, քայքայված ու պրոլետարների վերածված մանր սեփականատերերի ավելի և ավելի խոշոր մասսաներ։

Սակայն այստեղից հարց է ծագում՝ արդյոք հենց այդ պատճառով չպետք է պրոլետարական հեղափոխությունը սկզբում տեղի ունենա այն երկրներում, որտեղ կապիտալիզմն ավելի բարձր է զարգացած, որտեղ արդյունաբերությունն ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ կազմում է խոշորագույն մասը։ Յեվ ինչով բացատրել, որ պրոլետարական հեղափոխությունը սկզբում տեղի ունեցավ այնպիսի չհասունացած երկրում, ինչպիսին Ռուսաստանն է։

Նախկին ռուսական իմպերիան, որի տերրիտորիայի վրա սկսվեց և հաղթեց պրոլետարական հեղափոխությունը, իսկապես պատկանում էր ավելի չհասունացած կապիտալիստական երկրների թվին։ 1913 թ. արդյունաբերության տարեկան պրոդուկցիան կազմում էր ժողովրդական տնտեսության ամբողջ պրոդուկցիայի 40,7%-ը (ներառյալ գյուղական տնտեսությունը)։ Այսպիսով երկրում արտադրվող ամբողջ արժեքների կեսից շատ ավելին արտադրում էին ցերուցան և մանր գյուղական տնտեսությունները։ Կապիտալիզմի առաջավոր երկրներում (Անգլիա, Ամերիկա, Գերմանիա, Ֆրանսիա) արդյունաբերությունը ժողովրդական տնտեսության մեջ արդեն վաղուց անհամեմատ կերպով ավելի մեծ տեղ է բռնում, քան գյուղատնտեսությունը։

Ռուսաստանում կապիտալիզմն սկսեց զարգանալ ավելի ուշ, քան մյուս երկրներում։ Բարածուխի, պողպատի և չուգունի արդյունաբերությամբ Ռուսաստանը, չնայած յուր ահագին բնական պաշարներին և մեծությանը, մյուս խոշոր պետությունների շարքում բռնում էր 5-րդ տեղը։ Անգլիայում 1913 թվին հանված էր 243.043 հազար տոննն ածուխ, Հյուսիս. Ամերիկ. Միաց. Նահանգներում 517.057 հազար, իսկ ՄՍՀՄ տերրիտորիայի վրա ընդամենը հանված էր 36.010 հազար տոննն։ Մեխանիքական էներգիայի քանակի սպառումը բնակչության մի անձի վրա, նույնիսկ այժմ, ՄՍՀՄ մեջ գալիս է 20,5 անգամ քիչ, քան Միաց. Նահանգներում, 4 անգամ քիչ, քան Գերմանիայում և 2 անգամ քիչ, քան Ճապոնիայում։

Գյուղատնտեսությունը, որ արդյունաբերությանը նշանակալի չափով մատակարարում է հում նյութ, նույնպես կանգնած էր զարգացման շատ ցածր մակարդակի վրա։ Ռուսաստանում 1911 թվին ամբողջ հողից մշակման համար հարմար հող հաշվում էին միայն 40,4%-ը։ Այնինչ Ֆրանսիայում հարմար հողերի տոկոսը կազմում էր 94,5%, Ավստրիայում՝ 94,3%, Գերմանիայում 94,9% և այլն։ Ռուսաստանում մինչև վերջին պատերազմը ցորենի բերքը յերկու անգամ ցածր էր, քան Ավստրիայում ու Ֆրանսիայում, և չորս ու կես անգամ ցածր՝ քան Դանիայում։ Վարսակի բերքը Ռուսաստանում $2^1/_2$ անգամ ցածր էր քան Դանիայում, գետնախնձորինը՝ 2 անգամ։ Ցեթե յերկրում յեղած ազգային ամբողջ հարստությունը և արժեքները հավասար բաժանել ազգաբնակչության միջև, ապա Անգլիայում յուրաքանչյուր մարդուն կընկներ 1522 դոլլար, իսկ Ռուսաստանում՝ 355 դոլլար։ Բայց կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում կատարվեց այնպիսի ժամանակ, յերբ համաշխարհային կապիտալիզմի զարգացումն սկսեց առանձին յերկրների տնտեսությունը ավելի և ավելի միացնել համաշխարհային տնտեսության մի ընդհանուր սիստեմում։ Այդ պատճառով պրոլետարական հեղափոխության պայմանների հասունացումն սկսեց կախում ունենալ ամբողջ կապիտալիստական սիստեմի վիճակից, համաշխարհային տնտեսության ներքին հակասություններից, համաշխարհային կապիտալիզմի զարգացման մակարդակից։ Այսպիսով, կազմվեց համաշխարհային կապիտալի միացյալ ճակատ և բոլոր յերկրների հեղափոխական շարժման միացյալ ճակատ։ Ստեղծվեցին պայմաններ, որոնց շնորհիվ կապիտալի ֆրոնտը պիտի պատռվեր այնտեղ,—վոչ պարտադրապես այնտեղ, որտեղ տնտեսության զարգացումն ավելի բարձր է, որտեղ բանվորությունն ավելի շատ է, այլ այնտեղ, որտեղ կապիտալի ֆրոնտը ավելի թույլ էր, որտեղ կապիտալիզմին հատուկ հակասություններն ավելի ուժեղ կերպով էին հանդես գալիս։ Այստեղից ստեղծվեց այդ ֆրոնտը ճեղքելու հնարավորություն նույնիսկ այնպիսի յերկրում, որտեղ արդյունաբերությունն ավելի քիչ է զարգացած, քան ուրիշ յերկրներում։ Համաշխարհային կապիտալի ֆրոնտի հենց այդպիսի պատռումն կատարվեց Ռուսաստանում 1917 թ. հոկտեմբերին։

Ռուսաստանում ինչպիսի՞ պայմաններ նպաստեցին բուրժուական իշխանության տապալմանը։

Չնայած Ռուսաստանի արդյունաբերության համեմատաբար վոչ մեծ տեսակարար կշռի, նա հասավ այնպիսի համակենտրո-

նացման, որն անցավ առաջավոր յերկրների համակենտրոնացումից։ Մինչդեռ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում հինգհարյուր բանվորից ավելի մարդ ունեցող ձեռնարկություններում աշխատում եր ամբողջ բանվորների 33%-ը, Ռուսաստանում նույն մասշտաբի ձեռնարկություններում զբաղված եր ամբողջ բանվորների 54%-ը։

Շահագործման խայտառակ ձևերը միանում եյին ամենածանր քաղաքական ճնշման հետ, որը բանվորների ամեն մի դրժածադուլ անխուսափելիորեն դարձնում եր ընդհարում՝ պետության հետ։ Դրանով ռուսական բանվոր դասակարգը ստացավ իրեն մինչև ուղղակի հեղափոխական դարձնող քաղաքական կոփվածություն։ Մեր յերկրի բանվոր դասակարգը հասավ հոկտեմբերյան հեղափոխության, անցնելով ցարիզմի և բուրժուազիայի դեմ մղվող հեղափոխական պայքարի առաջին դպրոց։ Կալվածատերերի անսահման իշխանությունը գյուղում և ճնշումը ցարիզմի կողմից, սակավահողությունից առաջացող գյուղացիներին ստիպեցին միանալ բանվոր դասակարգի հետ, որպես հիմնական հեղափոխական ուժի։

Վերջապես, իմպերիալիստական պատերազմը ցարիզմի և բուրժուազիայի լուծը դարձրեց անտանելի, բանվորների և գյուղացիների թշվառությունը ծայրահեղ չափերի հասավ։ 13.000.000 բանվորներ և գյուղացիներ խրամատային տանջանքների մատնվեցին, յերկիրն այնպիսի խորը ցնցումներ կրեց, որ արձակվեցին հեղափոխական ուժերը։ Այսպիսով ստեղծվեցին այն բոլոր պայմանները, որոնց շնորհիվ 1917 թ. փետրվարին սկսած հեղափոխությունը Ռուսաստանում, որպես բուրժուական-դեմոկրատական հեղափոխություն, այսինքն, յուր առաջ ունենալով ցարիզմի, կալվածատիրական հողատիրության և չինովնիկների անսահմանի իշխանության լիկվիդացիայի խնդիրները՝ կարողացավ 1917 թ. հոկտեմբերին դառնալ պրոլետարական հեղափոխություն, այսինքն, յուր առաջ դնել կապիտալիզմի տապալման, պրոլետարական դիկտատուրայի սահմանման խնդիրները, և միևնույն ժամանակ լուծել փետրվարյան հեղափոխության կողմից չլծված՝ բուրժուական-դեմոկրատական հեղափոխության խնդիրները (կալվածատերերի հողատիրության լիկվիդացիան և այլն)։

Պրոլետարիատի քաղաքական ապես կոփված լինելը, նրա միաձուլությունը՝ շնորհիվ արտադրության համակենտրոնացման, և չքավոր գյուղացիության հետ միասին դուրս գալու հնարավորությունը, ապահովեցին կապիտալիստների կործանումը բանվոր դասակարգի կողմից։ Սակայն կապիտալիստների իշխանությունը կործանելով, պրոլետարիատը տակավին չի լուծել այն բոլոր խնդիրները, որոնք կանգնած են յուր առաջ։

«Իշխանության դրավումը—դա միայն գործի սկիզբն է։ Մի յերկրում տապալված բուրժուազիան, շատ պատճառների շնորհիվ, դեռ յերկար ժամանակ ավելի ուժեղ է մնում, քան իրեն տապալող պրոլետարիատը։ Այդ պատճառով էլ ամբողջ գործն այն է, որպեսզի պահել իշխանությունը, ամրացնել այդ և դարձնել անհաղթելի։ Ի՞նչ է անհրաժեշտ այդ նպատակին հասնելու համար։ Դրա համար անհրաժեշտ է լուծել հաղթանակի «հաջորդ որում» պրոլետարիատի առաջ կանգնող առնվազն յերեք գլխավոր խնդիրներ.

ա) Ջախջախել հեղափոխության կողմից տապալված և եքսպրոպրիացիայի (բռնագրավման) յենթարկված կալվածատերերի ու կապիտալիստների դիմադրությունը, լիկվիդացիայի յենթարկել կապիտալի իշխանությունը վերականգնելու ամեն մի փորձ.

բ) շինարարությունը կազմակերպել ամբողջ աշխատավորության պրոլետարիատի շուրջը համախմբելու վոգով և այդ աշխատանքը տանել՝ դասակարգերի լիկվիդացիան, վոչնչացումը պատրաստող ուղղությամբ.

գ) պինդ հեղափոխությունը և կազմակերպել հեղափոխության բանակը արտաքին թշնամիների դեմ կռվելու համար»։ (Ստալին)։

Բուրժուազիայի ճնշման և սոցիալիզմի կառուցման պայմանները ստեղծելու համար—այսինքն, այնպիսի հասարակակարգ, որի որոք պետք է վոչնչացվի ամեն մի շահագործում, մարդկանց ամեն մի բաժանում դասակարգերի—բանվոր դասակարգը պետք է սահմանի յուր դիկտատուրան վոչ՝ վոքի հետ չբաժանելով իշխանությունը։ Իշխանությունը պետք է պատկանի բանվոր դասակարգին, որպես ամբողջ աշխատավորության ավելի միաձույլ

կայուն և կոփված ավանդարդի։ Սակայն իրականացնելով սոցիալիզմի կառուցման խնդիրը, բանվոր դասակարգը այդ գործի մեջ պետք է ներգրավի մեր յերկրի ազգաբնակչության անապին մեծամասնությունը կազմող աշխատավոր գյուղացիության ամենալայն խավերին։ Այդ խնդիրների իրականացման գործում բանվոր դասակարգին վիճակված է հաղթահարել մի շարք դժվարություններ, վորոնք բղխում են՝ առաջին, նրանից, վոր հեղափոխությունը կատարվեց տեխնիքապես և տնտեսապես յետամնաց յերկրում, յերկրորդ՝ նրանից, վոր պրոլետարիատի կողմից իշխանությունը գրավված է միայն մի յերկրում, իսկ նրան շրջապատում են յերկրներ, վորտեղ իշխում են կապիտալիստները։

Չե վոր ԽՍՀՄ մոտավորապես բռնում է յերկրագնդի միայն մի վեցերորդ մասը։ Համաշխարհային պատերազմը արթնացրեց հեղափոխական շարժումը նաև մի շարք ուրիշ յերկրներում։ Ավստրիայում և Գերմանիայում հեղափոխության ճնշման տակ տապալվեցին միապետությունները և այդ տեղերի իմպերատորների գլուխներից վայր գլորվեցին թագերը։ Վենգրիայում և Բավարիայում կարճ ժամանակով գոյություն ունեցան նույնիսկ խորհրդային հանրապետություններ։ Իտալիայում 1920 թվին բանվորները սկսեցին ֆաբրիկանների և գործարանների բռնի գրավումը։ Սակայն, վորոշ չափով, շնորհիվ բանվորներին արած ժամանակավոր զիջումների, իսկ գլխավորապես, շնորհիվ սոցիալ-դեմոկրատիայի դավաճանության, շնորհիվ Արևմտքում այն ժամանակ դեռ նոր ծնված կոմունիստական կուսակցությունների թուլության և վերջապես շնորհիվ այն հանգամանքի, վոր արևմտյան յեվրոպական պրոլետարիատը զուրկ եր ռուսական բանվորի հեղափոխական պայքարի փորձից,—բուրժուազիային հաջողվեց ջախջախել և ճնշել հեղափոխությունը բոլոր յերկրներում, բացի ԽՍՀ Միության մեջ։ Նույնիսկ նախկին ռուսական իմպերիայի առանձին մասերում (Լատվիա, Լիտվա, Եստոնիա, Ֆինլանդիա և Լեհաստանը, վորին միացավ Գերմանիայից և Ավստրիայից պատկանող տերրիտորիաների մի մասը), վորոնց մեծամասնության մեջ մի ժամանակ սահվանված եր խորհրդային իշխանություն, համաշխարհային կապիտալի ոգնությամբ բանվորական շարժումը ջարդվեց և քշվեց պոդպոլիա։

Կապիտալիզմից կոմունիզմին անցնելը—պատմական մի ամբողջ եպոխա յե։ Մինչև սոցիալիզմը չդառնա կատարված փաստ, մինչև չանհետանան դասակարգերը, բուրժուազիան շրջանակելու յե հույս դնել հին, մինչհեղափոխական կարգերի վերադառնալու վրա։ Իսկ յերբ պրոլետարիատը միայն մի յերկրում է հաղթանակում, այդ հույսերը բուրժուազիայի մոտ առանձնապես մեծ են։ Տապալված բուրժուազիան դեռ բավականաչափ ուժեղ է յուր միջազգային կապերով. միակ բանվորական պետության դեմ կանգնած է ամբողջ միջազգային կապիտալը։ Բացի դրանից, շահագործողները հեղաշրջումից հետո յել դեռ յերկար ժամանակ շարունակում են պահել մի շարք պետական առավելություններ, առաջին հերթին՝ կապերը, կառավարելու, կազմակերպելու ունակություններ, յերկրորդ՝ ավելի բարձր կրթություն ու մոտիկությունը տեխնիքապես բարձր պերսոնալի (բուրժուաբար ապրող և մտածող) հետ։ Յեվ վերջապես այն մանր արտադրությունը, վորը պահպանվում է հեղափոխությունից հետո, ծնում է կապիտալիզմ և ծառայում նրան վորպես աննդարար միջավայր։

Այդ պատճառով էլ յերբ իշխանությունը գրավում է բանվոր դասակարգը, այդ չի նշանակում, վոր դասակարգային պայքարը վերջանում է։ Ընդհակառակը, նա չի անհետանում կամ բթանում, այլ ընդունում է նոր ձևեր և բռնում սոցիալիզմին հասնելու ամբողջ անցողական շրջանը և վերջնականապես անհետանում է միայն սոցիալիստական հասարակակարգի ստեղծումով, այսինքն այնպիսի հասարակակարգի, վորտեղ չկան դասակարգեր։

2. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Սոցիալիզմ — նշանակում է տնտեսության լիակատար համայնացում։ Սոցիալիստական տնտեսության հիմքը կարող և լինել միայն խոշոր արտադրությունը, խոշոր արդյունաբերությունը։ Առանց այդպիսի արդյունաբերության, չի կարելի ազատ

վել արդյունաբերության տեսակետից ավելի առաջավոր կապիտալիստական յերկրների տեխնիքական կախումից։ Առանց խոշոր արդյունաբերության, չի կարելի գյուղական տնտեսությունը դնել նոր տեխնիքական հիմքի վրա, ստեղծել պայմաններ ինչպես նրա համայնացման, այնպես էլ վերջին հաշվով քաղաքի ու գյուղի միջև յեղած տարբերությունը վոչնչացնելու համար։ Հաղթող պրոլետարիատի առաջ խնդիրը դրված՝ արտադրական ուժերի զարգացման բնագավառում հասնել և անցնել կապիտալիստական յերկրներն ու այդպիսով ցույց տալ նոր տնտեսական կարգի առավելությունները։

Վերևում արդեն ասացինք, թե Ռուսաստանը տնտեսապես վորքան յետամնաց եր։ Իմպերիալիստական յերկարատև պատերազմը և այնուհետև արտասահմանյան բուրժուազիայի ոգնության վրա հենվող սպիտակ գվարդիականների դեմ մղված քաղաքացիական կռիվը ժողովրդական տնտեսությունը խիստ քայքայեցին։ Քաղաքացիական կռվի ընթացքում սպիտակ գվարդիականությունը պաշտպանող ռուսլյերկրյա բուրժուական բանակների խորհրդային յերկիրը ներխուժելու ժամանակվա ընթացքում, քայքայվեցին 3672 յերկաթուղային կամուրջներ, 3597 սովորական շինություններ և այլն։ Արդյունաբերությանը հասած կորուստը հաշվվում է 10 միլիարդ ռուբլու։ Իսկ յերկրին հասած ամբողջ կորուստը հավասար է 46 միլիարդ 330 միլիոն ռուբլու։

Քաղաքացիական կռվի վերջանալուց հետո խորհրդային իշխանությունն առաջին հերթին այդ վերքերի շուտափույթ բուժման խնդիրն առաջադրեց։

Տնտեսության խորհրդային սիստեմի առավելությունները հանդես յեկան նրանում, վոր 5—6 տարվա ընթացքում այդ ծանրագույն վերքերը բուժվեցին և մեր յերկիրը վերականգնման շրջանից անցավ ռեկոնստրուկցիայի շրջանին, այսինքն, ժողովրդական տնտեսությունը նոր տեխնիքական բազայի վրա վերակառուցելու շրջանին։ Պրոլետարիատը գրավելով իշխանությունը, խլեց կապիտալիստներից նաև տնտեսական գլխավոր

բարձունքները՝ խոշոր արդյունաբերությունը, տրանսպորտը, բանկերը և բանվորական պետությանը հանձնեց արտաքին առևտրի վարումն ու սահմանեց նրա մենաշնորհ։ Ժողովրդական տնտեսության այդ մասը գտնվում է բանվորական պետության անմիջական ղեկավարության տակ և պատկանում է բանվոր դասակարգին։ Նայած թե ինչպես է զարգանում արդյունաբերությունը, կարելի յե դատել նաև այն մասին, թե ինչպես են ամրանում բանվոր դասակարգի դիրքերը։ Իսկ այդ աճումը տալիս է հետևյալ պատկերը։ Յեթե մինչպատերազմյան ռուսական արդյունաբերության համար, արդյունաբերության հիմնական կապիտալների աճումը հանում [եր՝ 1885—95 թ.թ. 20,4%, 1895—905 թ.թ. 10,7%, 1905—13 թ.թ. 8,4%, իսկ Հյուսիս. Ամերիկ. Միաց. Նահանգներում՝ 1899—904 թ.թ. 8,2%, 1904—1909 թ.թ. 9%, 1909—14 թ.թ. 4,7%, ապա ԽՍՀՄ հիմնական կապիտալների աճումը մի տարվա մեջ, ըստ ամենազգուշ հաշիվների, 12%-ից պակաս չեն։ Այսպիսով մեր աճման տեմպն առաջ անցել կապիտալիզմի պայմաններում յերբևիցե հանդիպած ամենաարագ տեմպից։ Այդ տեմպը հարկավոր է պահել և ուժեղացնել նրա համար, վորպեսզի «կապիտալիստական յերկրներից առաջ անցնել»։

Մեր զարգացման տեմպը (թափը) ցույց է տալիս, վոր տեխնիքական յետամնացությունը հաղթահարելի յե։ Դա միանգամայն հասկանալի յե, վորովհետև տնտեսության խորհրդային սիստեմի առավելությունն այն է, վոր նա, շնորհիվ արդյունաբերության, բանկերի, հողի և արտաքին առևտրի ազգայնացման, հնարավորություն ունի տարեց-տարի ավելի և ավելի պլանային կերպով ազդել ամբողջ ժողովրդական տնտեսության վրա, վոր նա չդիտե կապիտալիզմին հատուկ կոնկուրենցիան (մրցումը), ձեռնարկությունների պայքարը միմյանց դեմ, վոր ԽՍՀՄ մեջ, համեմատած կապիտալիզմի յերկրների հետ, նվազագույն չափի յե հասցված [պարազիտ (ձրիակեր) դասակարգերի սպառումը, վոր բանվորն արտադրության բարձրացմանը այնպես է վերաբերվում, ինչպես մի խնդրի, վորում ինքն արյամբ և շահագրգռված։ Սակայն ԽՍՀՄ դեպի սոցիալիզմն ընթանալու դժվարությունների պատճառը մեր յերկրի միայն տեխնիքական յետամնացությունը չե։

Բացի նրանից (տեխնիքական չեռամիացությունից), կան դժվարություններ, հակասություններ, որոնք գոյություն են մեր յերկրի տնտեսական չեռամիացության, և մեզ մոտ զանազան տնտեսական ձևերի միաժամանակ գոյություն ունենալու մեջ։

Սոցիալիզմի կառուցում—նշանակում է հակասությունների, ներհակությունների յերկու խմբերի հաղթահարում։

Ներհակությունների առաջին խումբը գտնվում է այն հակասությունների մեջ, որոնք գոյություն ունեն տնտեսության սոցիալիստական ելեմենտների (տարրերի) և կապիտալիզմի մնացորդների մեջ։ Բանվոր դասակարգի և կապիտալիստ-ձեռնարկատերերի արմատական շահերը անհաշտելի յեն, չնայած որ ԽՍՀՄ պայմաններում կապիտալիստներին, հանձինս նեպմանների (քաղաքում) և կուլակների (գյուղում), մասնավոր չափով և վորոշ պայմաններով թույլ և տրված մասնակցել յերկրի տնտեսական կյանքին։ Մեզ մոտ ԽՍՀՄ մեջ կան մասնավոր ձեռնարկատերերին կապալով (արենդով) տրված ֆաբրիկաներ և գործարաններ, կան կապիտալիստներին պատկանող ոտարյերկրյա կոնցեսիաներ, կան մասնավոր մագազիններ, առևտրական ընկերություններ և այլն։ Մեզ մոտ ԽՍՀՄ մեջ գյուղում կան կուլակային տնտեսություններ, որոնք նույնպես հանդիսանում են շահագործող և կապիտալիստական տնտեսություններ։ Այդ բոլոր մասնավոր ձեռնարկատերերի նպատակը—իրենց շահույթը շատացնելն է։ Գործարանի կապալառուի կամ կոնցեսիոների համար դա հնարավոր է՝ միայն բանվորների շահագործումն ուժեղացնելու դեպքում։ Կուլակի համար շահույթի շատացումը կախում ունի բատրակներին շահագործելու աստիճանից և աղքատների հետ կնքված կաբալային (սարկացնող) պայմաններից։ Տընտեսական սոցիալիստական ձևերի ուժեղացումը, պետական արդյունաբերության և առևտրի ամրացումն ու կոոպերացիայի բարելավումը՝ սպառում են շահագործողների ուժերը։ Ամբողջ սակարգային հասարակակարգը, որը ձգում է կառուցել պրոլետարիատը՝ հանդիսանալու յեն շահագործողների վերջը, դրա համար էլ նրանք իրենց ամբողջ ուժերով աշխատում են խոչըն-

դոտ հանդիսանալ նրա կառուցման և այդ է պատճառը, որ տնտեսության սոցիալիստական ձևերի զարգացումը վոչ թե թուլացնում է կապիտալիստական ելեմենտների դիմադրությունը այլ ուժեղացնում է։

Հանդիսանալով սոցիալիզմի թշնամիները, նրանք (կապիտալիստական ելեմենտները) անխուսափելի և անսահմանափակ զարգացման դեպքում սկսելու եյին նեղել սոցիալիստական ելեմենտներին, սկսելու եյին զարգացնել ճիշտ այնպիսի շահագործում, որպիսին գոյություն ունի կապիտալիստական պայմաններում։ Պրոլետարիատի խնդիրն ամենից առաջ այդ կապիտալիստական ելեմենտների աճման սահմանափակումն է։ Խորհրդային իշխանությունն այդ նպատակի համար մասնավոր կապիտալը յենթարկում է համապատասխան տուրքի։ Աշխատանքի խորհրդային օրենսդրությունը, որը ամբողջապես պարտադիր է և մասնավոր ձեռնարկությունների համար, պաշտպանում է բանվորներին չափից դուրս շահագործումից, սահմանում է ութժամյա բանվորական օր, աշխատավարձի մինիմում և աշխատանքի պարտադիր պայմաններ։ Բայց միևնույն ժամանակ մեր սոցիալիստական արդյունաբերությունը և կոոպերատիվ ու պետական առևտուրը նպատակ ունեն աստիճանաբար և վերջնապես դուրս մղել մասնավոր կապիտալը։ Վորքան արագ են աճում մեր արդյունաբերությունը և առևտուրը, այնքան շատ և պակասում մասնավոր կապիտալի տեսակարար կշիռն առևտրի և արդյունաբերության մեջ։ Զարգացումը տեղի յե ունենում այնպես, որ պետական և սոցիալիստական ելեմենտների գերակշռությունն ամբողջ ժամանակ ավելանում է։ Յեթե վերցնենք շատ թե քիչ խոշոր ձեռնարկությունները, ապա մասնավոր կապիտալի տեսակարար կշռի պակասումը տեղի կունենա հետևյալ կերպով։ 1923/24 թվին մասնավոր արդյունաբերությունն ուներ՝ ձեռնարկությունների ամբողջ քանակի 19,7%-ը, բանվորների ամբողջ թվի 2,8% և պրոդուկցիայի 4,4%-ը։ 1927 թվին մասնավոր կապիտալը, ներառյալ կոնցեսիաները, արդեն ունի՝ ձեռնարկությունների միայն 12,4%-ը, բանվորների 1,8%-ը և պրոդուկցիայի 2,2%-ը։ Սակայն մեր արդյունաբերության այդ ուժեղացումն, դեռ ամբողջապես չի վերացնում մասնավոր կապիտալի հարցը։ Մենք առայժմ սահմանված ենք պետական միջոցները կենտրոնացնել տնտեսական ֆոնդի ավելի կարևոր-

1003
14409

գույն մասերում։ Դրանից ոգտվում են արտակարգ կերպով կենսունակ և ճարպիկ մասնավորները, որոնք շատ շուտ հարմարվելով կացութեան փոփոխութիւններին, տեղափոխում են իրենց գործունեութիւնն ավելի պակաս սպասարկվող մասերում։ Այսպես, այժմ մասնավոր կապիտալն առանձին ուժով ձգտում է դեպի տնայնագործական արդիւնաբերութիւնը, արտելները և այլն, արհեստագործական կոոպերացիայի դրոշի տակ շահագործելով տնայնագործներին, կառուցող բանվորներին և ուրիշներին։

Բացի մասնավոր կապիտալի վրա դրված տուրքերի ուժեղացումից, բացի մեր արդիւնաբերութեան և առևտրին ոժանդակելու նպատակով պետական իշխանութեան բոլոր առավելութիւններն ոգտագործելուց, մենք պետք է աշխատենք, որ մեր արդիւնաբերութիւնը և առևտուրն իրենց ճկունութեամբ, սպառողին հասնելով, եժանութեամբ ու վորակով ասպարեզից դուրս քշեն մասնավորին։ Մեր եկոնոմիկայի առավելութիւնները պետք է հանդես գան մասնավոր կապիտալի հետ մրցելու, կոնկուրենցիայի պրոցեսում։

Խորհրդային իշխանութիւնը պայքարի այդպիսի գիծ է տանում նաև շահագործող կուլակային տնտեսութիւններին դուրս մղելու համար։

Քաղաքի և գյուղի կապիտալիստական ելեմենտների վրա հարձակվելը, նրանց կողմից ամենաուժեղ պայքար է առաջացնում սոցիալիստական ելեմենտների դեմ։ Գյուղում կուլակութիւնը պայքար է մղում կոլեկտիվ տնտեսութիւնների դեմ, վորոնք միացած գյուղացիներին հնարավորութիւն են տալիս ապրելու՝ առանց կուլակութիւնից վոխառութիւն անելու, առանց նրանց պատկանող մեքենաներն ոգտագործելու։ Կուլակութիւնը հացամթերման ժամանակ վոչ միայն ինքը հաց չէր տալիս մթերող որգաններին, այլև աղքատների և միջակների մեջ ագիտացիա էր մղում հաց տալու դեմ։ Առանձին դեպքերում կուլակները կազմակերպելով կեղծ կոլեկտիվներ և մի կերպ մտնելով կոոպերատիվների ընտրական որգանների մեջ, աշխատում են իրենց նպատակների համար ոգտագործել նույնիսկ կոլեկտիվ տնտեսութիւնները։

Առաջին խմբի հակասութիւնների, այսինքն տնտեսութեան սոցիալիստական և կապիտալիստական ելեմենտների միջև յեղած

հակասութիւնների հաղթահարումը կատարվում է պետարդյունաբերութեան և կոոպերացիայի զարգացման հիման վրա, կապիտալիստին ժողովրդական տնտեսութեան բոլոր տեղերից վերջնականապես դուրս քշելու միջոցով։ Վորչափ վոր պետարդյունաբերութիւնը և կոոպերացիան ընդգրկեն նորանոր բնագավառներ, այն չափով էլ տնտեսապես ավելորդ պիտի դառնան կապիտալիստը, կուլակը և նեպմանը։

Ավելի բարդ է հակասութիւնների յերկրորդ խումբը, հակասութիւններ, վոր գոյութիւն ունեն արտադրութեան սոցիալիստական ձևի և ուրիշի աշխատանքը չշահագործող գյուղացի ու տնայնագործ մանր ապրանք-արտադրողների միջև։ Մանր արտադրութիւնը շարունակ կապիտալիզմ է ծնում։ Սակայն հարստանում են շատ քչերը, իսկ քայքայվում և կործանվում են բավական խոշոր շերտեր։ Գյուղացիութեան մեջ շնորհիվ շերտավորման այդպիսի պրոցեսի, այսինքն շնորհիվ վոմանց շարժմանը դեպի վեր, իսկ վոմանց՝ դեպի ցած, ունենք յերեք խումբ։ Վերևը (վերխուշկան) կազմում են կուլակները, վորոնք ավելի հարստանալու նպատակով զբաղվում են վարձու աշխատանքի շահագործումով։ Ներքին ստրատիֆիկացիան բռնում և չքավորութիւնը, վորը վոչ միայն վոչ վոքի չի շահագործում, այլ յուր տնտեսութեան մեջ ծայրը ծայրին չի հասցնում, զրկված և արտադրութեան անհրաժեշտ միջոցներից և շատ անգամ գնում է վարձվելու։ Այդ յերկու ծայրահեղ խմբերի միջև միջանկյալ տեղ են բռնում միջակները՝ գյուղացիները, վորոնք ուրիշի աշխատանքը չեն շահագործում, ունեն աշխատանքի անհրաժեշտ գործիքներ և իրենք իրենց բանվորական ուժը չեն ծախում (սեզոնային դատումներն ի հարկե, չեն հաշվվում)։ Կապիտալիստական զարգացման որոք միջակների և ինքնուրույն տնայնագործների գրուպպան անընդհատ լուծվում է վերին (վերխուշկայի) և ներքին հարկերի միջև։ Կապիտալիստական զարգացումը մանր արտադրողին չէ կարող ապահովել կայուն գոյութեամբ։ Այդ պատճառով էլ մանր արտադրողն ևս շահագրգռված է խոշոր սեփականատերերի վոչնչացման, հին կարգերի չվերադառնալուն և հետևապես պրոլետարիատի դիկտատուրայի ամրացման ու վերջին հաշվով, սոցիալիզմի կառուցման հարցերում։ Կապիտալիստական փակուղուց դուրս գալու այլ յեղք,

բացի պրոլետարիատի կողմից ստեղծելի հասարակակարգից՝ չկա։ Այդ պատճառով էլ պրոլետարիատի և մանր արտադրողների արմատական շահերը զուգադիպվում են և մեկ են։ Սակայն մանր արտադրողը յուր բնույթամբ յերկուական է—մի կողմից նա կրում է կապիտալիզմի պայմաններում տիրապետող կոնկուրենցիայի հարվածները, վորի ժամանակ նրան հարվածում է ավելի խոշոր սեփականատերը, մյուս կողմից նա ունի արտադրության միջոցներ, սեփականություն, վորոնց հետ նրան կապում է սովորության ուժը։ Մանր սեփականատերերն, այդ յերկվության շնորհիվ, ներկայացնում են իրենցից տատանվող մասսա։ «Նա (այդ մասսան) շարժվում է և տատանվում, այսօր գնում է պրոլետարիատի յետևից, վաղը վախենում է հեղաշրջման դժվարություններից, խուճապի յե մատնվում բանվորների առաջին պարտությունից կամ կիսապարտությունից, ջղայնանում է, դես ու դեն վազում, մղկտում, վախչում բանակից բանակ» (Լենին)։ Գյուղի չքավորը, վոր զուրկ է սեփականությունից և կիսով չափ պրոլետար (կիսապրոլետար)՝ ներկայացնում է իրենից ավելի կայուն ուժ և դրա համար էլ հանդիսանում է պրոլետարիատի հենարանը։ Բայց միջակը ներկայացնում է իրենից խոշոր «տատանումների ուժ»։ Սոցիալիզմի կառուցման պայմաններում, յերբ բանվոր դասակարգի կողմից իշխանությունն արդեն նվաճված է, ստեղծվում են պայմաններ՝ ինչպես միջակին բանվոր դասակարգի կողմը գրավելու, այնպես էլ բանվոր դասակարգի և գյուղական չքավորության՝ միջակի հետ դաշինք կնքելու համար։ Այդ դաշինքն էլ մեր յերկրի բանվոր դասակարգն իրականացնում է մի շարք տարիների ընթացքում։ Բանվոր դասակարգի առաջ խնդիր է դրված՝ աշխատել մանր-ապրանքային տնտեսությունն աստիճանաբար համայնացնել և նրան էլ, խոշոր արդյունաբերության նման, դնել սոցիալիստական ռելսերի վրա։ Կապիտալիստներին և կուլակատերերին կարելի յե վոչնչացնել տնտեսությունից վռնդելով և դուրս մղելով։ Մանր արտադրողներին «չի կարելի վռնդել», նրանց չի կարելի ճնշել, «նրանց հետ պետք է կարողանալ ապրել, նրանց կարելի յե (և պետք է) վերամշակել, վերադաստիարակել՝ միայն շատ յերկարատև, զգնդաղ և զգուշ կազմակերպչական աշխատանքով» (Լենին)։ Ի՞նչում պետք է կայանա այդ կազմակերպչական աշխատանքը։ Անհրաժեշտ է աշխատել ցիրուցան, մաս-մաս յեղած մանր տնտեսություններից անցնել կոլլեկտիվ տնտեսության, այսինքն ցիրուցան ու մաս-մաս յեղած արտադրության միջոցների միացման։ Առաջին աստիճանի վրա մանր-ապրանքային տնտեսությունների վերասարքման կարևորագույն լծակը հանդիսանալու յե կոոպերացիան, վորը թույլ է տալիս միացնել հասարակական կազմակերպությունը, միությունը՝ անձնական շահագրգռվածության հետ։ Վորպես բարձր աստիճաններ ծառայելու յեն կոմունաները, վորոնց մեջ արտադրության ամբողջ պրոցեսը համայնացված է։ Ինդիրն այն չէ՝ ստիպել գյուղացիներին, վոր նրանք թեկուզ չուզենալով՝ մտնեն կոոպերացիայի և կոմունաների մեջ։ «Այստեղ գործել բըռնությամբ, նշանակում է կործանել ամբողջ գործը։ Այստեղ անհրաժեշտ է յերկարատև դաստիարակչական աշխատանք։ Գյուղացուն՝ վորը վոչ միայն մեզ մոտ, այլև ամբողջ աշխարհում հանդիսանում է գործնական և ռեալիստ, ապացուցելու համար, վոր կոմունան ամենից լավն է՝ պետք է ցույց տանք կոնկրետ օրինակներ» (Լենին)։

Տնայնագործների վերաբերյալ ևս մեր առաջ կանգնած են ոգնելու, մանր արտադրողներին միացնելու և նրանց մեր շինարարության մեջ քաշելու խնդիրները։ Սխալ կլիներ ձգտել, վոր տնայնագործները վերջ տային իրենց աշխատանքին։ Արդյունաբերության թերի զարգացման և ծավալման պայմաններում շուկայի շատ կենսական պահանջները բավարարում է տնայնագործի պրոդուկցիան։ Սակայն տնայնագործներին էլ գյուղացիների նման հարկավոր է միացնել կոոպերացիայում և պատրաստել համայնական արտադրության համար։

Մանր արտադրողներին վերամշակելու համար հարկավոր է կարողանալ ապրել նրանց հետ։ Պրոլետարիատի առաջ խնդիր է կանգնած՝ ապահովել մշտական և ամուր միությունը միջակ գյուղացիության հետ, այնպիսի միություն, վորում ղեկավարող դերը պատկանում է բանվոր դասակարգին և վորի նպատակն է դասակարգերի վոչնչացումը և սոցիալիստական կարգերի ստեղծումը։

Մանր արտադրողներին պետք է ներգրավել՝ մասնակից անելու համար այն պայքարին, որը մղում է պրոլետարիատը կապիտալիստական հարաբերությունների ճնշողների դեմ։ Զբաղվոր գյուղացիությունը, որպես պրոլետարիատի ամենամոտիկ ոգնական, պետք է պայքար մղի կուլակի դեմ, միջակների վրա ազդեցություն ձեռք բերելու և գյուղացիական տնտեսությունները միացնելու համար։

Ներհակությունների յերկրորդ խումբը, որը կայանում է արտադրության սոցիալիստական ձևի և մանր ապրանք-արտադրողների սեփական շահերի միջև գոյություն ունեցող հակասություններում՝ այսպիսով լուծվում է այդ մանր-ապրանքային տնտեսությունները վերասարքելու յերկարատև աշխատանքով։ Մանր արտադրողին վերամշակելու համար պետք է կարողանալ նրա հետ ապրել։ Գյուղացիական տնտեսությունների վերասարքումն, նրանց կոլլեկտիվացումը հնարավոր է միայն անհրաժեշտ մեքենաներ ու արտադրության միջոցներ պատրաստող խոշոր ինդուստրիայի ոժանդակության դեպքում։ Այստեղ սոցիալիստական արդյունաբերության և գյուղացիական տնտեսությունների միջև գոյություն ունեցող դաշինքը մի կողմից ամրացնում է բանվորների և գյուղացիների միությունը, որը ստեղծված է ընդհանուր թշնամիների դեմ պայքարելու հիման վրա և որը սակայն կարող է ամրանալ միայն անտեսական հիմքի վրա, իսկ մյուս կողմից՝ նյութական պայմաններ է ստեղծում մանր արտադրողներին վերամշակելու համար։ Քանի դեռ չի հաղթահարված յերկրորդ հակասությունը (սոցիալիզմի և մանր ապրանքային արտադրության միջև), չի անհետանալու հողը նաև առաջին խմբի հակասությունների (սոցիալիզմի և կապիտալիզմի միջև) համար, որովհետև մանր արտադրությունը հանդիսանում է այն հողը, որի վրա աճում է կապիտալիզմ։

Հակասությունների այդ յերկու խմբի հաղթահարումը նշանակում է սոցիալիզմի կառուցում մեր յերկրում։ Դուրս մղելով կապիտալիստական յելեմենտները և վերամշակելով մանր արտադրողների սեփականատիրական ընդունակությունը, մենք վոչնչացնում ենք արտադրության սոցիալիստական ձևի հետ հակասության մեջ գտնվող տնտեսական ձևերը և իրականացնում սոցիալիզմի հաղթական կառուցումը։

3. ԽՍՀՄ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՈՂԱԿՈՒՐԸ

Ներքին հակասություններով (որ մենք կարող ենք մեր սեփական ուժերով հաղթահարել) չեն սպառվում այն դժվարությունները ու հակասությունները, որոնց հետ մեզ վիճակվելու յե գործ ունենալ։ ԽՍՀՄ և կապիտալիստական պետությունները ներկայացնում են իրենցից յերկու բոլորովին հակադիր սիստեմներ, որոնք կողք-կողքի յերկար ժամանակ գոյություն ունենալ չեն կարող։ Կապիտալիստական աշխարհը շատ մեծ վախով և նայում մեր տնտեսական հաջողությունների վրա, որովհետև նրանք միջազգային պրոլետարիատին ավելի և ավելի շատ են համոզում ու ապացուցում 1917 թ. հոկտեմբերին ընտրած մեր ճանապարհի ճշտությունը։ Վաղ թե ուշ, պետք և տեղի ունենա այն ընդհարումը, որը վերջանալու յե այդ յերկու սիստեմներից մեկի վոչնչացումով։ Այդ ընդհարումը կարող է վերածվել մի շարք պատերազմների, մի շարք պատերազմական ցնցումների, բայց վերջին հաշվով, խորհրդային և կապիտալիստական պետությունների միաժամանակ գոյություն ունենալը ավարտվելու յե սոցիալիզմի և կապիտալիզմի միջև տեղի ունենալիք վճռողական բախմամբ, յեթե այդ բախումները չկանխակալվեն պրոլետարական հեղափոխությամբ Արևմուտքում։ Խորհրդային իշխանության գոյության առաջին տարիներում միջազգային կապիտալը սպիտակ գվարդիական բանակներին փողով, զենքով և մարդկանցով խիստ ոգնելով, աշխատում եր չթողնել առաջին բանվորական պետությունը։ 1918 թվի գարնան յապոնացիները ռազմական նավերից վլադիվոստոկ դեսանտ են իջեցնում և գրավում քաղաքը։ Յապոնացիներից հետո գալիս են անգլիացիների, ֆրանսիացիների և ուրիշների զորքերը թվով մինչ հարյուր հազար։ 1918 թվի ամրան Արխանգելսկ և Մուրմսկ են ուղարկվում անգլիական եսկադրա և ափ իջեցվում նույնպես դեսանտ։ 1919 թվի վերջում անգլիական մի ուրիշ եսկադրա յերևան է գալիս Նովոռոսիյսկում։ Բագուն գրավում են անգլիական զորքերը, իսկ Ոդեսա յեն գալիս ֆրանսիական նավերը, իջեցնելով 12000

մարդուց բաղկացած դեսանտ։ Բացի այդ զինված ուժերից, Անգլիան, Ֆրանսիան և ուրիշները սպիտակ գվարդիականներին ոգնություն էին ցույց տալիս նաև վողով ու զենքով։ Ըստ զենեբալ Դենիկինի տվյալների, մենակ յուր բանակը 1919 թվի մարտից մինչև սեպտեմբերը Անգլիայից և Ֆրանսիայից ստացել է 558 թնդանոթ, 12 տանկ, մեկուկես միլիոնից ավել թնդանոթային զնդակներ, 160 միլիոնից ավել հրացանային փամփուշտներ և այլն։ Սակայն զինված ուժի միջոցով միջազգային կապիտալը խորհրդային իշխանությանը ջարդել չկարողացավ։ Դրան վորպես հիմնական արգելքներ ծառայեցին իրեն միջազգային կապիտալի ներսում գտնվող հակասությունները։

Հենց Հոկտեմբերյան հեղափոխության մոմենտին կապիտալիզմը պատակված երկերկու, մահվան չափ թշնամի բանակներ։ Շնորհիվ նրա, վոր միմյանց դեմ կռվող իմպերիալիստները հնարավորություն չունեցան իրենց ուժերը կենտրոնացնել յերիտասարդ խորհրդային իշխանության դեմ, պրոլետարիատը հնարավորություն ստացավ լուրջ և ուժեղ կերպով կազմակերպել յուր ուժերը, ամրացնել յուր իշխանությունը և պատրաստել սպիտակ գվարդիական բանակների ջախջախումը։

Խորհրդային իշխանությանը ահագին ոժանդակություն ցույց տվեց նաև միջազգային հեղափոխական պրոլետարական շարժումը։ Պատերազմից հետո ամբողջ Յեվրոպայում տարածվեց հեղափոխության ալիքը։ Նա չլինելով այնքան ուժեղ, վորպեսզի կարողանար փշրել տիրող կապիտալիստական կարգերը, միևնույն ժամանակ կապիտալիստներին ստիպեց կենտրոնացնել իրենց ուժերը ներքին հակասությունների դեմ։

Ինտերվենցիայի (զինված միջամտության) անհաջողությունից հետո սկսվեց դադար, անկայուն հավասարակշռություն, վորով բնութագրվում են ԽՍՀՄ և կապիտալիստական աշխարհի փոխհարաբերությունները։ Այդ հավասարակշռությունն, առաջին հերթին, կախում ուներ այն պայմաններից, վորոնց մեջ ընկավ կապիտալիստական աշխարհը իմպերիալիստական պատերազմից հետո։ Ստացվեց այնպիսի դրություն, վորին Լենինը բնութագրեց հետևյալ խոսքերով՝ «վոչ մենք նրանց, վոչ նրանք մեզ», այսինքն ստացվեց այնպիսի դրություն, յերբ մի կողմից պրոլետարական հեղափոխությունը չուներ այնքան ուժ, վորպեսզի հաղթեր ամբողջ աշխարհում, բայց այդ ուժը բավական եր նրա համար, վոր պաշտպաներ Խորհրդային յերկիրը, իսկ մյուս կողմից բուրժուական հակահեղափոխությունն ևս այնքան ուժեղ չեր, վոր կարողանար խեղդել ԽՍՀՄ, բայց ուժեղ եր Արևմուտքի յերկրներում իր իշխանությունը պահելու համար։ Պարզ է վոր այդպիսի դադար շատ թե քիչ յերկար ժամանակով կարող է շարունակվել, բայց հավիտյան գոյություն ունենալ չի կարող։

Այդ դադարը շարունակվում է մինչև այսոր, թեև ըստ բոլոր տվյալների նրա ժամանակամիջոցը կրճատվում է։ Կապիտալիզմն կրծող և քայքայող հիմնական հակասությունները չեն կարող վոչնչացվել, մինչև վոր չվոչնչացվի ինքը՝ կապիտալիստական սիստեմը։ Սաձում են հակասությունները Ամերիկայի և Անգլիայի, Ամերիկայի և Յապոնիայի միջև։ Դաղութները շարունակում են ներկայացնել իրենցից վառոդային շտեմարաններ և մերթ ընդ մերթ բռնկում են նորանոր ապստամբություններ կապիտալիստական ճնշման դեմ (Ինդոնեզիա, Չինաստան)։ Բանվորական շարժումը ապրում է ուժերի արագ կուտակման շրջան, վոր արտահայտվում է կոմկուսների կողմից ավելի և ավելի խոշոր բանվորական մասսաներ գրավելով (Գերմանիա, Ֆրանսիա, Անգլիա)։ Սակայն միևնույն ժամանակ, բանվոր դասակարգին ուժեղ շահագործելու միջոցով, կապիտալիզմին հաջողվում է բուժել յուր վերքերը, արդյունաբերության շատ ճյուղերում հասնելով մինչպատերազմյան մակարդակին, իսկ մի քանիսում նրանից առաջ անցնելով։ Բանվորների հեղափոխական շարժումը մի շարք յերկրներում յենթարկվեց ջախջախման և կապիտալիզմը նույնիսկ սկսեց հարձակվել բանվորների վրա՝ իջեցնելով աշխատավարձը, յերկարացնելով բանվորական որը, փողոց շպրտելով բանվորական մասսաները և այլն։ Տեղի ունեցավ, այսպես կոչված, կապիտալիզմի ստաբիլիզացիա, այսինքն, վերջ տրված պատերազմից հետո սկսված տնտեսական փլուզումին և կապիտալիստական տնտեսությունը սկսեց վոտքի կանգնել։ Կապիտալիզմի ստաբիլիզացիան ցանկություն է ծնում կապիտալիստների մեջ ավելի ամրանալ՝ Խորհրդային Միությունը վոչնչացնելու միջոցով։ ԽՍՀՄ դեմ պատերազմելու համար նրան դրդում են նաև հետևյալ հանգամանքները։

Նոր տնտեսական քաղաքականությանն անցնելու առաջին շրջանում միջազգային բուրժուազիան հույսեր ունեցավ, որ խորհրդային իշխանությունը կվերասերվի։ Միջազգային կապիտալը տեսնելով նոր տնտեսական քաղաքականության մեջ զիջում մասնավոր կապիտալին, սպասում էր նորանոր զիջումների և նահանջների։ Սակայն ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացումը կործանեց այդ հույսերը։ Բանվոր դասակարգը վոչ միայն ամբողջությամբ պահեց յուր ձեռքում հրամայող բարձրունքները հանձինս խոշոր ինդուստրիայի, տրանսպորտի և արտաքին առևտրի ու բանկերի ազգայնացման, այլև առևտրի համայնացման գործում հասավ ահագին հաջողությունների։ Խորհրդային Միության ուժեղացումը միջազգային կապիտալի համար հանդիսանում է անհանդուրժելի մի յերևույթ, թեկուզ հենց այն պատճառով, որ հաջողությամբ սոցիալիստական տնտեսությունը կառուցող բանվորական պետության գոյության փաստը, ինքնըստինքյան ծառայում է վորպես վոգևորող որինակ միջազգային պրոլետարիատի պայքարում։ Բացի դրանից միջազգային կապիտալի կոկորդին է հասել և խեղդում է նրան արտաքին առևտրի մենաշնորհը մեր յերկրում, վորովհետև այդ մենաշնորհը խանգարում է կապիտալիզմին և չի թույլ տալիս, վոր նա առևտրի միջոցով մեր յերկիրը գաղութ դարձնի յուր համար։ Այդ պատճառով էլ կապիտալիստական պետությունները ձգտում են կարճացնել դադարի շրջանը և շուտափույթ կերպով կռիվ են պատրաստում Խորհրդային Միության դեմ։ Այդ նպատակով էլ ստեղծվում է ՍՍՀՄ սահմանակից պետությունների (Լեհաստան, Ռումինիա) ռազմական միություններ, տարվում է հակախորհրդային պրոպագանդ, վորն Անգլիայում վերջացավ ՍՍՀՄ հետ հարաբերությունների խզումով, և պատրաստվում են հակահեղափոխական ամեն տեսակ յելույթներ (ընկ. Վոյկովի սպանությունը, սպիտակ գվարդիականների առաքումը ՍՍՀՄ և այլն)։

Միաժամանակ բուրժուական պետություններն աշխատում են ամեն կերպ դժվարացնել Խորհրդային Միության տնտեսական զարգացումը։ Յեվրոպական պետությունների խոշոր մասի տնտեսական վերականգնումը պատերազմից հետո, տեղի ունեցավ շնորհիվ արտաստահմանյան միջոցների խոշոր ներհոսման։ Մինչև պատերազմը ռուսական արդյունաբերությունը կարողացավ այդպիսի անսովոր արագ թափով զարգանալ, գլխավորապես շնորհիվ ոտարյերկրյա կապիտալների։ Բացի ռուսական արդյունաբերությանը հատկացված վարկերից ու փոխառություններից, Ռուսաստանում ոտարյերկրյա կապիտալիստներին պատկանող ձեռնարկությունների արժեքը գնահատվում էր 400 միլիոն ռուբլուց ավելի։ Խորհրդային Միությանը բուրժուական պետությունները վարկ և փոխառություն չեն տալիս, բացի Գերմանիայից, վորը հատկացրել է մեզ 150 միլիոն ռուբլու յերկարատև վարկ։ Այն վարկերը, վոր Խորհրդային Միությանը պատրաստվում էին տալ անգլիական մի քանի բանկեր, չստացվեցին, վորովհետև Անգլիայի կողմից ՍՍՀՄ հետ կապերի խզումը բացառաբար ազդեց բանկերի հետ բանակցելու վրա։ Կոնցեսիաների ձևով մեր կողմից ներգրաված կապիտալների չափը ընդամենը հասնում է միայն 47 միլիոն ռուբլու։ Մի քիչ ավելի լավ են գործերը արտաքին առևտրի մեջ, սակայն ընդհանուր շրջանառությունը կազմում է մինչպատերազմականի 40%-ից վոչ ավելին։ ՍՍՀՄ բաժինը համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ 3,7%-ից (1913 թվին) իջել է մինչև 1,2% (1926 թվին)։

Կապիտալիստները ներկայացնում են մեզ մի շարք պահանջներ, վորոնց ընդունելու դեպքում նրանք կհամաձայնվեին նորմալ գործնական հարաբերությունների մեջ մտնել մեզ հետ։ Սակայն դրանք հանդիսանում են այնպիսի պահանջներ վորոնց բավարարել նշանակում է ՍՍՀՄ յենթարկել կապիտալիզմին։ Այդ պահանջներից մեկը հանդիսանում է ցարական պարտքերը վճարելու պահանջը, պարտքեր, վորոնք կազմում են մոտ տասը միլիարդ ռուբլի և վորոնք ցարական կառավարության կողմից ծախսված են պատերազմներ մղելու և հեղափոխական շարժման դեմ պայքարելու համար։ Նմանապես անմիտ է նաև արտաքին առևտրի մենաշնորհը վոչնչացնելու պահանջը։ Այդ պահանջը բավարարելու դեպքում, մեր արդյունաբերության զարգացումը, կախում ունենալով արտաստահմանյան դրերեղ ինդուստրիայի հետ հաջող մրցելուց, ճնշվելու յեր և խորհրդային տնտեսությունը տրվելու յեր կապիտալիստական դիշատիչներին թալանելու համար։ Անմիտ են նաև կոնցեսիոներների համար աշխատանքի որենսդրությունը փոխելու պահանջները և այլն։

ԽՍՀՄ բնական ահագին հարստությունները չեն թույլ տալիս, որ կապիտալիստները բոլորովին հրաժարվեն մեզ հետ առևտուր անելուց։ Սակայն ԽՍՀՄ տնտեսական կապերն արտահանման հետ, համեմատած յեզած հնարավորությունների հետ, շատ չնչին են։ Ամեն կերպ աշխատելով խանգարել ԽՍՀՄ տնտեսական զարգացումը, կապիտալիստները դիմում են տնտեսական հակահեղափոխական գործիքին, կաշառելով և գնելով տեխնիկներին ու ինժեներներին, ծախելով մեզ անպետք մեքենաներ, կազմակերպելով հրդեհումներ և պայթեցումներ (Դուբրովինսկու ֆաբրիկան հրդեհելը)։ Յեվրոպական կապիտալի ուղղակի ոժանդակությամբ, գործում են արտասահմանում գտնվող հակահեղափոխական սպիտակ գվարդիական կազմակերպությունները, որոնք խորհրդային ձեռնարկություններում կազմակերպում են փճացումներ (Շախտերի գործը), տերորիստական ակտեր և այլն։

ԽՍՀՄ հետ հարաբերությունների խզելն Անգլիայի կողմից, հարաբերությունների վատանալը Ֆրանսիայի հետ, վկայում են այն մասին, որ ԽՍՀՄ համար միջազգային կացությունն սկսում է դասավորվել ավելի սուր կերպով։ Սակայն Խորհրդային միությունը ծնվել և պրոլետարական հեղափոխության հետևանքով, իսկ մենք արդեն ասացինք, որ ժամանակակից պայմաններում պրոլետարական շարժումը, ինչպես և կապիտալիզմը, առանում են համաշխարհային ընդգրկում (ծավալ)։ Յեթե Խորհրդային միությունը հանկարծ դրկվեր համաշխարհային պրոլետարիատի ոժանդակությունից, ապա համաշխարհային բուրժուազիայի ղուցե հաջողվեր ընկճել իրեն առելի սոցիալիզմի հայրենիքը։ Սակայն միջազգային պրոլետարիատի համակրանքը դեպի ԽՍՀՄ աճում և ամրանում է. պատերազմը ԽՍՀՄ դեմ կարող է ավելի շուտ գերեզման հանդիսանալ միջազգային կապիտալի համար, քան սոցիալիզմ կառուցող յերկրի համար։

Ինտերվենցիայի, այսինքն՝ ԽՍՀՄ վրա գինված կերպով հարձակվելու և բուրժուազիայի իշխանությունը վերականգնելու վտանգը դոյություն է ունենալու այնքան ժամանակ, որքան մեզ ողակում են կապիտալիստական պետությունները։ Այդ պատճառով էլ սոցիալիզմի վերջնական հաղթանակը, սոցիալիստական հասարակակարգի՝ հետագայում անվտանգ զարգանալու համար յերաշխիքներ ստեղծելը, հնարավոր է միայն միջազգային հեղափոխության հաղթանակի հետևանքով։ Դրա համար էլ սոցիալիզմի կառուցումը ԽՍՀՄ մեջ չի կարելի անջատել միջազգային բանվորական շարժումը ուժեղացնելու և զարգացնելու աշխատանքից։ ԽՍՀՄ հանդիսանում է վորպես բազա ապագա միջազգային հեղափոխության համար, սակայն ապագա միջազգային հեղափոխությունն էլ յուր հերթին ներկայացնելու յի իրենից հոկտեմբերյան հաղթանակի անհրաժեշտ ավարտումը և ամրացումը։

ԽՍՀՄ դեմ պատերազմ պատրաստելը կարող է թուլացվել և կասեցվել միայն այն ժամանակ, յերբ ամբողջ աշխարհի բանվորական ամենալայն մասսաները արիաբար և աննկուն կերպով պաշտպանեն Խորհրդային Միությունը։ Կոմինտերնում միացված գանազան յերկրների կոմկուսները հեղափոխական հայացքների պրոպագանդա յեն մղում բանվորական մասսաներում, կազմակերպում են բանվորներին համաշխարհային բուրժուազիայի դեմ կռվելու և սոցիալիստական հայրենիքը—ԽՍՀՄ՝ պաշտպանելու համար։ Այդ աշխատանքի ընթացքում պետք մղել դժվար և լուրջ պայքար համաձայնողական, մենշեվիկական կուսակցությունների դեմ, վորոնք, ոգտվելով այն բանից, վոր բուրժուական մամուլը չի տալիս Խորհրդային Միության կյանքի ճշմարիտ պարզաբանում և խիստ դժվար է ստանալ ճշգրիտ տեղեկություններ ԽՍՀՄ մասին—ղրպարտում են ԽՍՀՄ։ Սակայն բանվորների մեջ գնալով ավելի և ավելի յե աճում ձգտումը դեպի ԽՍՀՄ— ձգտումն՝ անձամբ իմանալու, համոզվելու, թե ԽՍՀՄ մասին ասվածներից վորն է ճիշտ և վորը սուտ։ Ջնայած պրոֆմիություններից հեռացնելուն, աշխատանքից ղրկելուն, համաձայնողական կուսակցություններից վտարելուն՝ հարյուրավոր բանվորական պատգամավորներ գալիս են ԽՍՀՄ և վերադառնալով իրենց ծննդավայրերը, մերկացնում են համաձայնողականների ղրպարտությունները։ ԽՍՀՄ հետ ծանոթանալը համոզում է բանվորական մասսաներին, վոր կարելի յե հաղթական կերպով կատարել հեղափոխություն և կառուցել նոր հասարակակարգ։ Խորհրդային Միությունը գնալով ավելի և ավելի յե դառնում պրոլետարական մասսաների հեղափոխական գիտակցության շարժիչ ուժ։

Մեր Միության տնտեսական ուժի ամրացումը, այն է՝ սոցիալիստական շինարարությունը, մոտեցնելով մեզ սոցիալիստական նոր հասարակության, միևնույն ժամանակ բարձրացնում է մեր պաշտպանունակությունը և արգելք հանդիսանում իմպերիալիստների հարձակողական պլաններին, իսկ մյուս կողմից՝ նպաստում է հեղափոխական դաշափարների տարածմանը արևմտյան պրոլետարիատի մեջ։ Հեղափոխական մարտիկների ուղին լուսավորող ջահի նույն դերը մեր Միությունը նաև խաղում է Արևելքի ճնշված ժողովուրդների համար, որոնք ահեղում են հավասար իրավունքներ վայելող ազգերի համամտերմությունը մեր սոցիալիստական հանրապետություններում։

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՊՐԱՆՔԱՑԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերյան հեղափոխությունը վոչնչացրեց կապիտալիստական կարգերը մեր յերկրում։ Բայց մնացած ամբողջ աշխարհը մինչև այսոր էլ գտնվում է կապիտալի տիրապետության ներքո։ Մեր ընկերները և յեղբայրները, այն է՝ բոլոր յերկրների բանվորները, կոմունիստները մահացու պայքար են մղում կապիտալիզմի դեմ։ Համաշխարհային պատերազմն ևս յուր կողմից ատամ է սրում և ծանր ու թեթև անելով մտածում, թե ինչպես ջնջի աշխարհի յերեսից իրեն ատելի խորհրդային յերկիրը։ Միևնույն ժամանակ մեր յերկրում մենք տանում ենք սոցիալիզմը կառուցելու խոշոր աշխատանք, հաղթահարելով մեր տնտեսության մեջ գտնվող կապիտալիզմի մնացորդները։ Ահա այդ պատճառով էլ անհրաժեշտ է ծանոթանալ կապիտալիստական կարգերի եությեան հետ։ Այժմ մենք պետք է ուսումնասիրենք կապիտալիստական տնտեսության այն որենքները, վոր հայտնաբերել է պրոլետարիատի մեծ ուսուցիչ՝ Կարլ Մարքսը։

Բնատնտեսությունը յեվ ապրանքային տնտեսությունը.—Յեթե ուշադրություն դարձնենք, թե ինչպես է տարվում տնտեսությունը կապիտալի տիրապետության որոք, ապա ամենից առաջ կտեսնենք, վոր այստեղ յուրաքանչյուր մարզ արտադրում է զանազան առարկաներ վոչ թե յուր սեփական սպառման համար, այլ ծախելու համար։ Մետաղագործական վորևե գործարանի բանվորներն արտադրում են չուգուն և պողպատ, վորոնց կեսիքն իրենք բոլորովին չունեն։ Դագաղագործն իր ամբողջ կյանքում պատրաստում է միմիայն դագաղներ. պարզ է, վոր նա այդ դագաղները չի պատրաստում վոչ իր և վոչ էլ յուր ընտանիքի համար։ Նման բոլոր դեպքերում արտադրությունը տար-

վում է փոխանակության համար, նա ինկատի ունի ապառումը։

Հին ժամանակ չկար այնպիսի արտադրություն, որ տարվեր բացառապես ծախելու համար։ Շատ հին ժամանակներում ամեն մի տնտեսություն յոլա էր գնում ինքն իր պատրաստածով։ Քաղաքից գնում էին միայն աղ և մեծ տոների համար ցորենի ալյուր։ Ձերեկոները վառում էին մարխ, իրենց կտավհատից և կանեփից գործում էին կտավ, իսկ վոչխարների մորթուց կարում էին քուրք և այլն։ Միայն շատ հազվագյուտ դեպքերում գյուղացիները տոնավաճառներում գնում էին քաղաքային զանազան ապրանքներ, վորոնք այն ժամանակ շատ քիչ էին։

Շատ յերկար և դանդաղ կերպով «իշխան կապիտալը քայքայեց հին կարգերը», ինչպես յերգվում է ժողովրդական յերգերում։ Գյուղացին արդեն սկսում է ծախել կտավհատը և գնել քաղաքային գործվածքներ, ծախել բուրդն ու կաշին և գնել կոշիկներ ու մահուդ, ծախել հացը և գնել գուբիան, ցաքան և այլն։

Ամեն մի իր, վոր ծառայում է վորևե կարիք բավարարելու համար և վորը մարդ կարող է ստանալ միայն աշխատանք թափելով, կոչվում է պրոդուկտ։ Պրոդուկտ—դա մարդկային աշխատանքի ամեն մի արտադրածն է։ Այն առարկան, վորը պատրաստված է սեփական սպառման համար, մենք պիտի անվաննենք պրոդուկտ։ Յեթե պրոդուկտը պատրաստված է վոչ սեփական պահանջների, այլ ծախելու համար, ապա նա, այսինքն այդ պրոդուկտը կոչվում է ապրանք։ Յերբ հին ժամանակ գյուղացին ցանում էր ցորեն, բերքը հավաքում, հետո կալսում, աղում և հաց թխում իր ընտանիքի համար, ապա այդ հացն ապրանք չէր։ Բայց յերբ նույն գյուղացին սկսեց ծախել իր ցորենը, ապա այդ ցորենն արդեն դարձավ ապրանք։

Մենք տեսանք, վոր ապրանքային տնտեսություն (կամ փոխանակական տնտեսություն) այսինքն, այնպիսի կարգ, յերբ պրոդուկտները պատրաստվում են վոչ թե սեփական սպառման, այլ ծախելու, փոխանակելու, շուկայի համար, մի շատ դյուրություն չի ուննեցել։ Ընդհակառակը, հնագույն դարերից պահպանել և բնատնտեսությունը, վորի որոք, ամեն մի գյուղական ընտանիք, յուր կարիքները բավարարել է սեփական աշխատանքով պատրաստած իրերով։

Փոխանակությունը յեվ մասնավոր սեփականությունը.—Իսկ ինչո՞ւ ապրանքային տնտեսությունը քայքայեց բնատնտեսության կարգերը։ Նրա համար, վոր նա հին բնատնտեսական կարգերից ավելի ձեռնտու հանդիսացավ։ Ձուտ բնատնտեսությունը պիրապետում էր միայն այն ժամանակ, յերբ դեռ մարդիկ դուրս չէին յեկել վայրենի վիճակից։ Այդ հին պալեոնական ժամանակներում մարդիկ հավասար էին, բայց դա աղքատության և չքավորության հավասարություն էր։ Մարդն ամբողջ ժամանակ մտածում էր այն մասին, թե ինչպես յուր որվա ապրուստն ապահովի. փոխանակելու վոչինչ չկար։ Բանի դեռ գոյություն չուներ փոխանակություն, մարդիկ շատ մեծ դժվարությամբ էին ձեռք բերում իրենց համար ամենաանհրաժեշտը։ Բայց չե վոր ամեն մարդ դիտե, վոր աշխատանքն այնքան լավ և շուտ է կատարվում, վորքան աշխատողը վարժված է և իր աշխատանքին սովորած։ Իսկ վորպեսզի մարդս սովորի, ասենք ղերձակություն, հարկավոր է, վոր մի ուրիշը նրա համար հաց թխի, կոշիկ կարի, մահուդ գործի, տուն շինի և այլն։ Այնպիսի կարգը, յերբ յուրաքանչյուր մարդ կատարում է միայն մի վորոշ աշխատանք՝ մենք կոչում ենք աշխատանքի բաժանում։

Հետո, ապրանքային տնտեսության համար անպայման հարկավոր է, վոր լինի մասնավոր սեփականություն։ Փոխանակել կարելի յե միայն այն, ինչ վոր քեզ է պատկանում։ Իսկ վորպեսզի պատրաստի ապրանքը պատկանի արհեստավորին կամ մանufակտուրային, հարկավոր է, վոր նրան պատկանեն նաև հում նյութը, արհեստանոցը, գործիքները և այլն։ Արհեստավորը կամ մանufակտուրը տիրում է իր գործիքներին և արհեստանոցին, վորպես մասնավոր սեփականության։

Գործիքները, աշխատանքի մատերիալները, արհեստանոցը և ընդհանրապես այն բոլորը, ինչ վոր անհրաժեշտ է մարդկային աշխատանքի համար, մենք կոչում ենք արտադրության միջոցներ։ Ուրեմն ապրանքային տնտեսության համար անհրաժեշտ է՝ մասնավոր սեփականատիրություն արտադրության միջոցների վրա։

Յերբ գոյություն ունի ապրանքային տնտեսություն և մասնավոր սեփականություն, ապա անխուսափելի է պայքարն ապ-

բանքներն արտադրող առանձին մարդկանց միջև։ Նույնիսկ, երբ դեռ գոյություն չունեին խոշոր ֆաբրիկատները և գործարանատերերը, այլ կային միայն աշխատավոր արհեստավորներ, ապա հենց այդ արհեստավորներն էլին միմյանց դեմ կռվում հոգուտ գնողի, և շատ հաճախ, այդ կռվում քայքայում միմյանց։

Արդեն ապրանքային այն տնտեսությունը, որը հիմնված է աշխատավոր մանր մանր սեփականության վրա, թագցնում է յուր մեջ կապիտալիզմի, խոշոր սեփականության և մասսայի քայքայման սաղմերը։

Գինը յեվ ապրանքի արժեքը.—Ապրանքային տնտեսության որոք, ապրանք արտադրելը դեռ քիչ է, հարկավոր է դա նաև ծախել։ Նմանապես դեռ քիչ է նաև ծախելը, հարկավոր է դա ծախել լավ գնով։ Գործարքների ամբողջ մասսան, այսինքն ապրանքների առանձին ծախումները և գնումները ամբողջովին վերցրած՝ սովորաբար անվանում են շուկա։ Մի՞նչդամային հասկանալի չէ, թե ինչպիսի հակայական նշանակություն ունի շուկան փոխանակական տնտեսության մեջ։ Փոխանակական տնտեսության որոք յուրաքանչյուր արտադրող արտադրում է վոչ թե վորոշ պատվիրատուի, այլ շուկայի համար, շուկայի, վորտեղ այսոր առնող կարող է լինել, իսկ վաղը վոչ, և ապրանքը կարող է չծախվել։ Այդ պատճառով էլ ապրանք արտադրողների միջև, շուկայի, ապրանքը ծախելու և գնողի համար առաջ եգա-լիս պայքար։

Կապիտալիստական շուկայում ապրանքների գները սովորաբար տատանվում են, վորի շնորհիվ հաճարի փութը նայած բերքին և ուրիշ հանգամանքներին, կարող է արժենալ 80 կոպ., 1 ռուբ., և կամ 1 ռ. 20 կոպ.։ Միևնույն կրկնակոշիկների համար, զանազան դեպքերում, կարելի չէ վճարել և 3, և 4 ռուբ.։ Սակայն յուրաքանչյուրը հեշտությամբ կարող է նկատել հետաքրքրական մի յերևույթ։ Չնայած գների տատանումներին, նրանց մեջ կա ինչ-վոր կայուն բան, ինչ-վոր կայուն հիմք։ Այսպես, վոսկու մի փութը միշտ էլ շատ ավելի թանգ է, քան պղնձի, կրկնակոշիկների մի զույգն ավելի ժամանակ է մահուդե կոստյումից, հաճարի փութը՝ ցորենի փթից և այլն։ Ահա ապրանքների գների այդ կայուն հիմքը մենք անվանում ենք ապրանքի արժեքը (կամ արժողությունը)։

Աշխատանքը վորպես արժեքի հիմք.—Դժվար չէ նկատել, վոր վորքան շատ աշխատանք է հարկավոր թափել վորևե ապրանք պատրաստելու համար, այնքան էլ նա թանգ է լինում։ Շատ թանգ են թանգագին քարերը, որինակ, ալմաստը։ Նրանք շատ քիչ են գտնվում յերկրի վրա և այդ պատճառով էլ նրանց գտնելու համար, անգին աշխատանք է թափվում։ Նմանապես հեշտ է նկատել նաև այն, վոր յեթե վորևե արտադրության մեջ մտցվում են նոր մեքենաներ և աշխատանքն ավելի արդյունավետ է դառնում, ապա այդ արտադրության ապրանքների գներն ընկնում են։

Դեռ մի քանի տասնյակ տարի սրանից առաջ, ալյումինն ավելի թանգ եր արծաթից։ Սկսած այն ժամանակից, յերբ հնարեցին ավելի քիչ աշխատանք թափելով ալյումին ձեռք բերելու միջոց՝ նա խիստ էժանացավ։ Ներկայումս ալյումինից պատրաստում են հասարակ ամաններ։ Այսպիսով մենք տեսնում ենք, վոր յեթե հասարակությունը վորևե ապրանք պատրաստելու համար շատ աշխատանք է թափում, ապա այդ ապրանքը թանկ է գնահատվում։ Իսկ յեթե վոր և է ապրանք պատրաստելու համար քիչ աշխատանք է պահանջվում, ապա նա ավելի էժան է լինում։ Այստեղից շատ հեշտ է հասկանալ, վոր ապրանքի արժեքը (կամ արժողությունը), վորոշվում է աշխատանքի այն քանակով, վորն անհրաժեշտ է նրա պատրաստման համար։ Պարզ է և հարկե, վոր աշխատանքի քանակը չափվում է այն ժամանակով, վորի ընթացքում մարդն աշխատում է (որինակ մի ժամ)։

Սակայն յեթե ապրանքի արժեքը կախում ունի պատրաստելու համար թափված աշխատանքի քանակից, ապա կարծես, թե պետք եր առաջ գային զարմանալի յերևույթներ։ Յենթադրենք, վոր յերկու կոշկակարներից մեկն աշխատում է շատ արագ և մի զույգ կոշիկը պատրաստելու համար ծախսում է աշխատանքի մի որ։ Իսկ մյուս կոշկակարը, յենթադրենք, ավելի վատ վարպետ է, և միևնույն ժամանակ հարբեցող ու ճիշտ նույնպիսի մի զույգ կոշիկ կարելու համար քարշ է գալիս ամբողջ յերեք որ։ Կարելի չէ արդյոք մտածել, վոր յերկրորդ վարպետի պատրաստած կոշիկները յերեք անգամ ավելի թանգ պիտի լինեն առաջինից, քանի վոր նրանց արտադրության վրա յերեք անգամ ավելի շատ աշխատանք է թափված։ Հասկանալի չէ, վոր վոչ

Գնողը վոչ մի գործ չունի նրա հետ, թե յուրաքանչյուր առանձին աշխատող վորքան աշխատանք է թափել։ Շուկայում միևնույն վորակն ունեցող ապրանքների արժեքը մեկ է։ Շատերն ապրանքը պատրաստում են ավելի կարճ ժամանակամիջոցում, իսկ վոմանք յերկար։ Վոմանք աշխատում են հին պապենական գործիքներով, իսկ վոմանք՝ նորագույն մեքենաներով։ Սակայն շուկայում այդ բոլոր տարբերությունները վոչնչացվում են։ Ապրանքի արժեքը վորոշվում է վոչ թե առանձին առանձին աշխատողի աշխատանքով, այլ այդ ապրանքի արտադրության վրա թափած հանրօրեն անհրաժեշտ բանվորական ժամանակով։

Հանրօրեն անհրաժեշտ աշխատանքի տակ հասկացվում է տվյալ ժամանակամիջոցում, տվյալ հասարակության նորմալ պայմաններում աշխատող մի ջին աշխատավորի (այսինքն վոչ ամենալավի և վոչ ամենավատի) աշխատանքը։ Յեթե տվյալ յերկրում կոշիկների խոշոր մասը պատրաստվում է ձեռքով, ապա այդ յերկրի հանրօրեն անհրաժեշտ աշխատանքը լինելու յե տնայնագործ կոշկակարի աշխատանքը։ Իսկ յեթե շուկայի նշանակալի մասը կոշիկներով մատակարարվում է ֆաբրիկանների կողմից, ապա կոշիկների արժեքը սահմանվելու յե համապատասխան աշխատանքի այն քանակի, վորն անհրաժեշտ է կոշիկների ֆաբրիկային արտադրության համար։

Այս հարցին կարելի յե մոտենալ նաև ուրիշ կողմից։ Ապրանքային տնտեսության որոք վոչ վոք ուժով չի ստիպում մեկին թխվածքներ անել, իսկ մյուսին՝ կոշիկներ կարել։ Մի զույգ կոշիկի և մի զույգ անդրավարտիկի վրա տասական ռուբլու մաքերիալ է ծախսվում։ Նրանց պատրաստելու վրա էլ հավասար աշխատանք է թափվում, յենթադրենք՝ մեկական բանվորական որ։ Սակայն ահա շուկայում նրանց գները տարբեր են. անդրավարտիկի համար վճարում են 13 ռուբլի, իսկ կոշիկների համար միայն 12 ռուբլի։ Հետևապես, միևնույն ժամանակվա աշխատանքի համար դերձակը ստանում է 13 ռուբլի, իսկ կոշկակարը 12 ռուբլի։ Դա լինում է այն ժամանակ, յերբ անդրավարտիկներ համեմատաբար քիչ են արտադրվում և դրա համար էլ պահանջը նրանց վրա բարձրանում է և ահա, չնայած վոր հավասարաչափ աշխատանք է թափված, անդրավարտիկի գները

լինում են ավելի բարձր, քան կոշիկների գները։ Պարզ է, վոր կոշկակարը դոհ չի լինելու այդպիսի դրությունից։ Նա մտածելու յե յուր դարդերին դարման անելու մասին և դուրս գալու յելք հեշտությամբ է գտնելու։ «Դե, ուրեմն յես էլ կսկսեմ անդրավարտիկներ կարել»—ասելու յե նա ինքն իրեն։ Այն ժամանակ, անդրավարտիկների թիվը սկսելու յե շատանալ շուկայում, իսկ կոշիկներինը պակասել։ Հետևանքը՝ անդրավարտիկների գինն իջնելու յե, կոշիկներինը՝ բարձրանալու։

2. ԱՐԺԵՔԻ ՈՐԵՆՔԸ ՎՈՐՊԵՍ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՌԵԳՈՒԼՅԱՏՈՐ (ԿԱՆՈՆԱՎՈՐԻՉ)

Ինչպես է արժեքի որենքը ապրանքային տնտեսության մեջ արտադրությունը վարում.—Այսպիսով մենք տեսնում ենք, վոր ապրանքի արժեքը կախում ունի իրեն պատրաստելու համար թափված անհրաժեշտ աշխատանքի մեծությունից։ Ապրանքների գները, վորոնցով նրանք գնվում և ծախվում են, կախում ունեն վոչ միայն այդ արժեքից, այլ նաև պահանջից ու առաջարկից։ Յեթե պահանջը բարձր է առաջարկից (այսինքն՝ յեթե առնողները շատ են, իսկ ապրանքը քիչ), ապա գներն արժեքից բարձր են, իսկ յեթե ընդհակառակը, առաջարկն է բարձր պահանջից (յեթե ապրանքը շատ է, իսկ առնողները քիչ), այն ժամանակ արժեքն է գներից բարձր։

Շուկան, գների տատանման միջոցով և նայած նրան, թե տվյալ ապրանքի գինը վորքան բարձր է, կարծես առանձին աշխատող արհեստավորներին և ընդհանրապես արտադրողներին հրամայում է, ցույց տալով, թե ով պետք է ավելի լայնացնի յուր արտադրությունը, և ով, ընդհակառակը՝ կրճատի։ Ապրանքների գների տատանումները արժեքից վեր ու վար, այսպիսով ազդում են աշխատանքի բաշխման վրա արտադրության առանձին ճյուղերի մեջ։

Այնպիսի հասարակակարգում, վորտեղ մարդկանց միմյանց համար աշխատելը կատարվում է շուկայի վոխանակության համար ապրանքներ արտադրելու ձևով, առանձին արտադրողներին կամ ձեռնարկատերերին վոչ վոք չի ասում, չի ցույց տալիս, թե ի՞նչ և վո՞ր քանակով պետք է արտադրել։ Այնինչ հասարակու-

թյունը յուր ամբողջությամբ կարիք ունի ամեն տեսակ ապրանքների միայն վորո՛շ քանակության։ Վո՞րտեղից գիտե արտադրողը, թե ինչ և հարկավոր հասարակության և ինչ քանակով, և չի՞ սկսել մի ուրիշը հենց այդ ապրանքների արտադրության գործը։

Յերբ արտադրողը (որինակի համար վորևե տնայնագործ) սկսում է յուր աշխատանքը, նա այդ ամենի մասին վոչինչ չը գիտե։ Բայց ասենք, ապրանքը պատրաստ է և դուրս է բերված ծախելու համար։ Ահա հենց այստեղ է, վոր մեր արտադրողը տեսնում է յուր հաշիվների ճիշտ կամ սխալ լինելը։

Յեթե նրա ապրանքները հասարակության պետք չեն, և գներն ընկնում են, տնայնագործը չի արդարացնում յուր ծախսերն ու աշխատանքը և սոսկված, վաղ թե ուշ, սկսում է աշխատել արտադրության մի ուրիշ ճյուղի մեջ։ Ահա այսպիսի ձևով են կրճատվում արտադրության վորոշ ճյուղերը և լայնանում ուրիշները։

Այսպես է գործում շուկայի փոխանակության մեխանիզմը՝ տարերայնորեն, անկազմակերպ։ Դրանումն է փոխանակության, շուկայի, գների շարժման և աշխատանքային արժեքի որենքի գլխավոր նշանակությունը։ Այսպիսի ճանապարհով է ապրանքային տնտեսության մեջ ստեղծվում վորոշ կանոնավորում և արտադրության վորոշ ղեկավարում։ Սակայն ինքնըստինքյան հասկանալի չի, վոր դա այն գիտակցաբար կանոնավորումը և ղեկավարումը չէ, վորպիսին տանում են մեր պլանային որգանները ԽՍՀՄ մեջ։

Դա այնպիսի կանոնավորում և ղեկավարում է, վորը կատարվում է ինքն իրեն, անդեկ, անկազմակերպ, և կամ ինչպես ասում են՝ անիշխանական, անարխիստական ձևով։

Յեթե գոյություն չունենար աշխատանքային արժեքի որենքը, յեթե ապրանքների փոխանակությունը կատարվեր պահանջի և առաջարկի կողմից բոլորովին պատահական կերպով սահմանված գներով, ապա ապրանքային արտադրությունը չէր կարող գոյություն ունենալ, չէր կարող ապրել։ Նա զրկվելու էր յուր միակ ռեգուլիատորից, վորով արտադրության զանազան ճյուղերի մեջ պահպանվում և վորոշ կարգ, վորոշ կանոն։

3. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԱՆ ԵՑՈՒԹՑՈՒՆԸ

Հասարակ ապրանքային տնտեսությունը յել կապիտալիզմը.— Այնպիսի տնտեսություն, վորի մասին խոսեցինք վերևում, հասարակ ապրանքային տնտեսություն է կոչվում։ Հասարակ ապրանքային տնտեսությունն ունի հետևյալ առանձնահատկությունները. 1) մասնավոր սեփականություն այն բոլորի վրա, վորն անհրաժեշտ է աշխատանքի համար (կամ ինչպես ասում են՝ արտադրության միջոցների վրա), 2) ապրանքների արտադրություն շուկայի համար, 3) վարձու աշխատանքի բացակայություն։

Մենք արդեն տեսանք, թե ինչպես արհեստավորների, գյուղացիների և տնայնագործների հասարակ ապրանքային տնտեսությունը թագցնում է յուր մեջ կապիտալիզմի սաղմերը։ Կապիտալիզմը ծնվում է և աճում հասարակ ապրանքային արտադրությունից։ Սակայն հարկավոր է ուշադիր կերպով տարբերել հասարակ ապրանքային տնտեսությունը և կապիտալիստական տնտեսությունը։

Յուրաքանչյուր պրոլետար, վոր հեղափոխությունից առաջ աշխատել է ֆաբրիկայում կամ գործարանում, շատ լավ գիտե և հիշում է, թե վորն է կապիտալիստական ձեռնարկության առանձնահատկությունը, տարբերությունը։ Ամենից առաջ այդ ձեռնարկությունը պատկանում է այնպիսի մարդկանց, վորոնք սովորաբար նրա մեջ չեն աշխատում։ Միայն յերբեմն, այն էլ շատ քիչ դեպքերում կապիտալիստները ինքն և ղեկավարում յուր գործերը։ Դա սովորաբար լինում է միայն մանր ձեռնարկություններում։ Մեծ մասամբ ֆաբրիկայի կամ գործարանի գլխին կանգնած են վարձու ծառայողներ, վորոնց և կապիտալիստները հանձնում են իրենց բարիքների մասին հոգալու գործը։ Ուսաստանում գտնվող շատ ֆաբրիկանների և գործարանների տերերն ապրում էին յոթ աշխարհից այն կողմը, շատ հաճախ, անգամ վոչ մի գաղափար չունենալով, թե վորտեղ են գտնվում իրենց ունեցվածքները։

Ո՞վ և ուրեմն աշխատում կապիտալիստական ձեռնարկություններում։ Աշխատում են վարձու բանվորները։

Ինչպես և ծնվում կապիտալիզմը.— Այսպիսով մենք տեսնում ենք կապիտալիստական տնտեսության յերկու կարևորագույն

պայմաններ։ Առաջին, անհրաժեշտ է, որ արտադրության միջոցները (շենքերը, մեքենաները, հողը և այլն) դառնան փոքրաթիվ հարուստների՝ կապիտալիստների դասակարգի սեփականություն։ Երկրորդ, անհրաժեշտ է, որ գյուղացիների, արհեստավորների, անայնագործների խոշոր մասսաները քայքայվեն և դառնան վարձու բանվորներ։ Կապիտալիզմը ծնվում և աճում է մանր անտեսարարների կարգերից։ Ինքնուրույն մանր անտեսարարների կարգերի որոշ, փոխադարձ կատաղի պայքարն անխուսափելի յե։ Հետևանքն այն է լինում, որ վոմանք հարստանում են, իսկ վոմանք էլ (սկի՛ շեշտենք, որ մեծ մասը) քայքայվում են։ Հենց այդպիսով ծնվեցին և մեծացան որևնակի համար, կենտրոնական Ռուսաստանի վիթխարի մանվածագործական (տեքստիլ)* ֆաբրիկաները։ Բոլոր այդ խոշորագույն մանվածագործական տուղերի՝ Մորոզովների, Բուրըլլինների, Պրոխորովների և ուրիշների պապերն ու նախապապերը յեղել են ճոթ գյուղացիներ, ճիշտ այնպես, ինչպես և իրենց բանվորների և բանվորուհիների պապերը։ Շնորհիվ իրենց ճարպիկությանն, իրենց համագյուղացիներին ու նախկին տեր-կալվածատերերին խաբելու միջոցով, այդ յերեկվա ճորտերը կառուցեցին հազարավոր բանվորներ ունեցող ահագին կորպուսներ։ Իսկ այդ Մորոզովների և այլն քայքայված հայրենակիցները, սոխված պիտի գնային նրանց մոտ և վարձվեյին որպես բանվորներ, վորովհետև քայքայված գյուղացու կամ արհեստավորի համար ուրիշ յելք չկա։

Կապիտալիստական շահագործումը.— Կապիտալիզմի որոշ, բոլոր դաշտահները և մեքենաները, հում նյութի ամբողջ պաշարը, բոլոր գործարաններն ու հանքերը, մի խոսքով ամբողջ հարստությունը խլել և հարուստների մի փոքրիկ խմբակի։ Իսկ աշխարհագործության մասսան դրանցից վոչինչ չունի և դրա համար էլ ստիպված է գնալ և մինչև ծռել կապիտալիստների համար։

Սմենն մարդ գիտե, վոր ֆաբրիկանտները վոգորմածության համար չեն, վոր պրոլետարներին աշխատանք են տալիս. նրանք այդ անում են նրա համար, վոր շահույթ, վաստակ ստանան։ Բանվորը ծախում է կապիտալիստներին յուր աշխատելու ընդունակությունը կամ, ինչպես ասում են, ծախում է յուր բանվորական ուժը։

Բանվորական ուժը դնելով, ինչ է անում ֆաբրիկանտը այդ ուժի հետ։ Նա նախորոք ձեռք է բերում համապատասխան շենքեր, մեքենաներ, հում նյութ, քարածուխ կամ նավթ և էլ ուրիշ մատերիալներ, իսկ յերբ բանվորները գալիս են, նա ստիպում է նրանց աշխատել, արտադրել վորոշ ապրանք։

Վորպեսզի պարզենք, թե վորտեղից է ավելանում կապիտալիզմի շահույթը (շահը, վաստակը), առաջադրենք այսպիսի մի հարց. վո՞րքան է բանվորի կողմից արտադրած ապրանքի արժեքը։ Առաջին, այդ ապրանքը ծծում է յուր մեջ ծախսված հում նյութի, մատերիալների, կահավորման ու ֆաբրիկայի շենքերի մաշված մասի և այլն արժեքները։ Յերկրորդ, այդ ապրանքին և անցնում նաև մի նոր արժեք, վորը ստեղծվում է բանվորների աշխատանքով։ Յենթադրենք, վոր 25 որվա ընթացքում, որական տասական ժամ ֆաբրիկանտի մոտ աշխատում են 100 մարդ. ուրեմն նրանք ծախսում են 25 հազար ժամվա աշխատանք (այսինքն՝ $100 \times 25 \times 10$)։ Յեթե ծախսված մատերիալների, դազգահների և այլն արժեքը հավասար է, ասենք, 15 հազար ժամվա աշխատանքի, այն ժամանակ պատրաստված ապրանքի լրիվ արժեքը լինելու յե $25.000 + 15.000 = 40.000$ ժամվա աշխատանքի։ Հիմա տեսնենք, թե այդ ապրանքն ինչ արժե կապիտալիստի համար։ Մատերիալների, հում նյութի, դազգահների և շենքի մաշված մասերի և այլն համար նա վճարում է նույն 15 հազար ժամվա աշխատանքի արժեքը։ Բացի այդ 15 հազար ժամվա աշխատանքից, վոր կազմում է ծախսված արտադրության միջոցները, ապրանքի ընդհանուր արժեքի մեջ մտնում է նաև 25 հազ. ժամվա աշխատանք, վորը ծախսված է ֆաբրիկայի բանվորների կողմից։ Վճարից արդյոք կապիտալիստը բանվորներին նույն արժեքը, թե վոչ։ Ահա հենց այստեղ է թաղնված կապիտալիստի հարստանալու գաղտնիքը։

Ֆաբրիկանտը յուր հարյուր բանվորին վճարում է և վոչ թե 25.000 ժամվա աշխատանքի արժեքը, այլ միայն, յենթադրենք, 12 հազար ժամվա աշխատանքի արժեքը, իսկ մնացած ժամանակը բոլորովին չի վարձատրում։ Ի՞նչպես նա հնարավորություն ունի այդպիսի ֆոկուս անելու։ Այլ բան է այն աշխատանքի քանակը, վորը թափում է յուրաքանչյուր բանվոր գործարանում և բոլորովին ուրիշ բան է այն արժեքը, վորը կապիտալիստը

վճառում է բանվորին։ Պարզենք այս հարցն ավելի մանրամասն կերպով։

Բանվորական ուժը վորպես ապրանք. բանվորական ուժի արժեքը.—Կապիտալիստը բանվորից գնում է նրա բանվորական ուժը։ Կապիտալիզմի որոք բանվորական ուժը շարունակ գնվում և ծախվում է։ Նա ևս մյուս բոլոր ապրանքների նման դառնում է ապրանք։ Նա ևս, ինչպես ամեն մի ապրանք, պետք է ունենա յուր գինը։ Ինչի՞ց կախում ունի այդ գինը։ Մենք արդեն տեսանք, վոր ամեն մի ապրանքի գին կախում ունի աշխատանքի այն քանակից (մյուս բոլոր ապրանքների հավասարության դեպքում) վորն անհրաժեշտ է նրա արտադրության համար։ Պարզ է, վոր բանվորական ուժի գինն էլ կախում ունի նույն պայմաններից (վորովհետև նա էլ ապրանք է)։ Բայց ինչ է նշանակում «բանվորական ուժի արտադրություն»։ Յերբ բանվորը վերջացնում է աշխատանքը, նա հոգնած է, սոված, նա այլևս աշխատել չի կարող։ Նրա բանվորական ուժն արդեն ծախսված է։ Այդ ուժը վերականգնելու համար անհրաժեշտ է ուտել, քնել կամ հանգստանալ, ու կարող է պատահել, նաև զվարճանալ։ Այդ բոլորից հետո կարելի կլինի նորից սկսել աշխատանքը։

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր յերբ բանվորն սպառում է,—դա հենց բանվորական ուժի արտադրելն է։ Բանվորին անհրաժեշտ են սպառելու վորոշ ապրանքներ՝ ուտելիք, հագուստ, լվացքներ, գրքեր և այլն։ Այդ բոլոր ապրանքներն աշխատանք արժեն։

Ակնհայտ է, վոր այդ ապրանքների արժեքները կազմում են և բանվորական ուժի արժեքը։ Բանվորական ուժի արժեքի մեջ մտնում են նաև բանվորի ընտանիքը պահելու ծախքերը։ Բանն իհարկե, բոլորովին այն չէ, վոր կապիտալիստը հոգ է տանում յուր ազատազուրկ սորուկների ընտանեկան յերջանկության մասին։ Կապիտալիզմը կարիք ունի, վոր անընդհատ հոսե թարմ բանվորական ուժը։ Իսկ դրա համար պետք է բանվորներին հնարավորություն տրվի բազմանալ, պահել իրենց ընտանիքը։ Հակառակ դեպքում կապիտալիզմը մի գեղեցիկ որ կարող եր մնալ առանց մի հատիկ բանվորի։ Բայց կապիտալիստները նորից աշխատում են կրճատել այդ ծախսերը մինչև վերջին աստիճանի։ Նրանք արտադրության մեջ են գրավում վոչ միայն

չափահաս բանվորներին, այլ և նրանց կանանց ու անչափահաս յերեխաներին։ Կապիտալիստը վճարելով բանվորական ընտանիքը պահելու ծախսերը, դրա փոխարեն քամում է այդ ընտանիքի բոլոր անդամների ամբողջ հյութերը։

Հետո, շատ հաճախ, կապիտալիստներին հարկավոր են սովորած, վորակյալ բանվորներ։ Բայց սովորելու ժամանակվա վրա բանվորը պետք է վորոշ ծախսեր անի։ Այսպիսով, բանվորական ուժի արժեքի մեջ մտնում են նաև բանվորների սովորելու վրա արված ծախսերը։

Բանվորական ուժի գնողը—ֆաբրիկանտը—աշխատավարձի ձևով վճարում է բանվորական ուժի հենց այդ արժեքը։

Վերևում մենք ասացինք, վոր ֆաբրիկայի տերը, յուր 100 բանվորներին 25 որվա աշխատանքի համար, վճարեց 12.000 ժամվա աշխատանքի արժեք։ Դա նշանակում է, վոր 25 որվա մեջ մի բանվորի ուժի արժեքը կազմում է միայն 125 ժամվա աշխատանք։ Ուրեմն բանվորին մի որ պահելու համար անհրաժեշտ սպառման միջոցները կարելի յե արտադրել 5 ժամվա ընթացքում։ Բայց ֆաբրիկանտների մոտ յուրաքանչյուր բանվոր որական աշխատում է վոչ թե 5 ժամ, այլ 10 ժամ։ Հենց այդ ամենորյա 5-ական հավելյալ ժամերն են, վոր կազմում են կապիտալիստի հարստացման աղբյուրը։ Մեր որինակում կապիտալիստը 13.000 ժամվա աշխատանքի ոգուտ է ստանում։ Կապիտալիստի կողմից բանվորին այդ չվճարած աշխատանքը կոչվում է հավելյալ արժեք։

Հավելյալ արժեքի յեվ նրա բաշխումը.—1913 թվին (պատերազմից առաջ), Ռուսաստանի ամբողջ ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության մեջ աշխատում էին $2^1/_2$ միլիոնից ավելի բանվորներ։ Մի տարվա մեջ նրանք արտադրում էին 5.620 միլիոն ռուբլու ապրանք։ Կապիտալիստների արած ծախսերը հում նյութի մատերիալների, մեքենաների մաշվելու և այլն վրա կազմում էին 3.840 միլ. ռուբլի։ Ուրեմն մի տարվա մեջ բանվորներն արտադրում էին $5.620 - 3.840 = 1.780$ միլիոն ռուբլու նոր արժեքներ։ Այդ գումարից, վորպես աշխատավարձ, բանվորներն ստանում էին կեսից քիչ,—ընդամենը միայն 820 միլ. ռուբլի։ Կեսից ավելին—960 միլ. ռուբլի—կազմում էր հավելյալ արժեք։

Յուրաքանչյուր բանվոր մի տարվա ընթացքում ստանում էր միջին հաշվով 291 ռուբլի աշխատավարձ։ Իսկ յուրաքանչյուր բանվոր արտադրում էր կլոր թվով 660 ռուբլու նոր արժեքներ։ Այսպիսով ֆաբրիկանտները յուրաքանչյուր բանվորից մի տարվա ընթացքում ստանում էին 369-ական ռուբլի շահույթ (ոգուտ, շահ, վաստակ)։ Եթե բանվորական որը միջին հաշվով հավասար էր 11 ժամի, ապա դուրս կգա, որ բանվորը յուր համար աշխատում էր միայն 5 ժամ, իսկ կապիտալիստի համար՝ 6 ժամ։

Կապիտալիզմի որոք ստացվող բոլոր անաշխատ յեկամուտների աղբյուրը՝ դա բանվոր դասակարգի կողմից արտադրվող հավելյալ արժեքն է։ Այդ հավելյալ արժեքը մտնում է տիրող դասակարգերի գրպանները։ Մի մասը ստանում է ֆաբրիկատեր-գործարանատերը — դա նրա ձեռնարկատիրական շահույթն է։ Մի մասն ընկնում է առևտրականների գրպանը։ Մի մասը հասնում է հողատեր-կալվածատիրոջը և վերջապես, մնացած մասն էլ պետությունն է վերցնում որպես տուրք։ Ցեկեղեցիները, հասարակական անները, բուրժուազիայի վարձու գրչակները, նրա քաղաքականությունը կյանքի մեջ կիրառողները, նրա դերասանները—այդ բոլորն էլ ապրում են նմանապես հավելյալ արժեքի հաշվին։

Բանվորներից քամած հավելյալ արժեքի մի մասը կապիտալիստները միացնում են իրենց կապիտալի հետ և թողնում գործի մեջ։ Նրանք գնալով ավելի և ավելի յեն ստիպում բանվորներին աշխատել, կառուցում են նորանոր ֆաբրիկներ և գործարաններ, մացնում են նոր մեքենաներ և այլն։ Առանձին կապիտալիստների միջև սկսվում է կատաղի պայքար, ամեն մեկն ուզում է կուլ տալ յուր ախոյանին։ Յուրաքանչյուրն աշխատում է, արտադրելով ավելի եժան և ավելի լավ ապրանքներ քան յուր հակառակորդը, ջախջախել նրան մրցման պայքարում և այդպիսով ստանալ ավելի և ավելի խոշոր յեկամուտներ։

Կապիտալիզմի հիմնական հակասությունների զարգացումը. — Կապիտալիզմի որոք արտադրությունը կատարվում է առանց վրև և պլանի։ Յուրաքանչյուր ֆաբրիկատեր ազատ է արտադրելու ցանկացած տեսակի և քանակի ապրանքներ։ Վոչ վոք նախորոք չի կարող ասել, ծախվելու յեն արդյոք յուր պատրաստած ապրանքները, թե վոչ։ Այսպիսի կարգը կոչում

ենք արտադրության անարխիա (անիշխանություն)։ Դա կապիտալիստական մեխանիզմի հիմնական պակասություններից մեկն է։ Կապիտալիզմի մյուս կարևորագույն հակասությունը հանդիսանում է բուրժուազիայի և պրոլետարիատի միջև գտնվող և շարունակ աճող անդունդը։ Մարդկանց նորանոր մասսաներ, վորոնք անցյալում ինքնուրույն էին, ոտիլված ընկնում են կապիտալի լծի տակ։ Բոլոր տեխնիկական դյուտերը և գիտական հայտնաբերությունները, վորոնք դյուրացնում են մարդու աշխատանքը, գլխավորապես գնում են բուրժուազիայի ոգտի համար։ Կապիտալիզմը շահագործում է բանվորներին վոչ միայն հարուստ, առաջավոր յերկրներում։ Նա գաղութներում, յետամնաց յերկրներում ևս սարկացնում է միլիոնավոր մարդկանց, վորոնք անցյալում ինքնուրույն արտադրողներ էին։ Բանվորների այդ նոր բանակներն այժմ ավելի վատ են ապրում, քան յեվրոպական բանվորը սրանից հարյուր տարի առաջ։

Կապիտալիզմին հատուկ է՝ անվերջ ձգտել շահագործելու։ Ցեվ բնատնտեսության շրջանում էլ կար շահագործում, վորովհետև կալվածատերերն ապրում էին իրենց ճորտերի աշխատանքի հաշվին։ Սակայն մինչ ապրանքա-փողային հարաբերությունների լայն տարածվելը, այդ շահագործումն ուներ բավական նեղ շրջանակներ։ Կալվածատերը պահանջում էր այնքան միս, հաց, կտավ և ուրիշ մթերքներ, վորքան նա կարող էր ապահովել յուր ընտանիքի և բազմաթիվ ծառաների հետ։ Ծախելու տեղ չկար։ Նույնը չէ կապիտալիզմի որոք։ Այստեղ յուրաքանչյուր ապրանք կարելի է վերածել փողի, իսկ փողի ծարավը չգիտե վոչ մի սահման։

Շահույթի անսահման ծարավը դրդում է կապիտալիստներին ավելի և ավելի ուժեղ վոլորել շահագործման պտուտակները։ Ամեն տեղ ուր հնարավոր է, ֆաբրիկանտները աշխատում են յերկարացնել բանվորական որը, իջեցնել աշխատանքի գնահատումները, չափահասների թանկ աշխատանքը փոխարինել յերեխաների աշխատանքով և այլն, սակայն այդ գործում ֆաբրիկանտները իսկույն հանդիպում են բանվորական մասսաների դիմադրության։ Բանվորները շատ յերկրներում ամենակատաղի պայքարի միջոցով ստիպում են հրատարակել ֆաբրիկային այնպիսի

որենքները, որոնք սահմանափակում են բանվորական որվա տևողությունը և շատ թե քիչ պաշտպանում են կանանց ու յերեխաներին տմարդաբար շահագործելուց։

Բայց կապիտալիստները գիտեն և ուրիշ միջոցներ իրենց շահույթը բարձրացնելու և շահագործումն ուժեղացնելու համար։ Մեքենաների աճող զործադրումն ավելորդ և դարձնում բանվորների մի մասը և միևնույն ժամանակ հնարավորություն և տալիս դուրս քամել արտադրության մեջ ծնացած մասից ավելի շատ հավելյալ արժեք։ Փոխադարձ պայքարը և մրցումը դրդում են արդյունաբերողներին կատարել նորանոր բարելավումներ։ Արտադրության տեխնիկան գնալով ավելի յե կատարելագործվում։ Բարձրանում է մարդու աշխատանքի արտադրողականությունը։ Աճում է նաև կապիտալիստների դրպանը հոսող հավելյալ արժեքը։

Կապիտալիզմը յուր զարգացման ամբողջ ընթացքով անհրաժեշտորեն պատրաստում է հասարակության ուրիշ, ավելի խելացի սկզբունքների վրա վերակառուցելու հնարավորություն։ Կապիտալիզմը հանձինս պրոլետարիատի՝ վոչ միայն պատրաստում է յուր գերեզմանափորին, այլև նա պատրաստում է նոր հասարակության ծնվելու համար անհրաժեշտ բոլոր պայմանները, հասարակության, վորը գալիս է փոխարինելու կապիտալիզմին։ Կապիտալիզմը յուր հետ բերում է տեխնիկայի կատարի զարգացումը, մարդու՝ բնության վրա իշխելու արագ աճում։ Այդ մտքով կապիտալի յերեք հարյուր տարվա տիրապետության շրջանում մարդկությունն ավելի շատ է առաջ գնացել, քան շատ հազար տարիներ կազմող յուր ամբողջ նախընթաց ժամանակվա ընթացքում։

Կապիտալիզմը ստիպում է մարդկանց աշխատել այնպիսի վիթխարի ձեռնարկություններում, վորոնց մեջ աշխատում են հազարավոր բանվորներ։ Բանվորների անջատ-անջատ աշխատելու պատենական ձևը գնալով ավանդության գիրկն է ընկնում։ Մնում է միայն տապալել կապիտալի իշխանությունը և համայնական, սոցիալիստական արտադրության անցնելն ապահովված է։ Իսկ մարդու իշխանության զորեղ աճումը բնության վրա, վստահություն է տալիս, վոր սոցիալիստական հասարակակարգը բերելու յե յուր հետ վոչ թե աղքատության հավասարություն,

այլ ընդհակառակը,—լիության, առատության, հավասարության և ամբողջ մարդկության յերջանկության։

Կապիտալիզմի հակասությունները ուժեղ կերպով յերևան են գալիս ճգնաժամերի (կրիզիսների) ժամանակ։ Կապիտալիստական հասարակության մեջ ամեն տեսակ ապրանքներ տարեցտարի արտադրվում են ավելի շատ։ Կարծես, դրանից լավ ինչ կարելի յե ուզել։ Սակայն այդպես չի դուրս գալիս։ Ցուրաքանչյուր վորոշ ժամանակամիջոցներից հետո — մոտավորապես յուրաքանչյուր տաս տարուց — հասնում է այնպիսի ժամանակ, յերբ ապրանքներն առնող չկա, յերբ սպառում չկա։ Բայց առնող չկա վոչ թե նրա համար, վոր այդ ապրանքներն ավելորդ են և վոչ վոք կարիք չունի։ Ընդհակառակը, կան շատ քաղցածներ, վորոնք հացի յեն կարոտ, կան շատ բոբիկներ, վորոնք կոշիկ չունեն, կան շատ մարդիկ, վորոնք շոր չունեն, տուն չունեն։ Իսկ միևնույն ժամանակ հացի, վոտնամանների և շորերի անագին լեռներ են ընկած պահեստներում ու գնող չունեն։ Ցավն այն է, վոր այդ բոլոր մերկերը, բոբիկները, սովածները վող չունեն, վորպեսզի գնեն այն ապրանքները, վորոնց կարիքն այնքան ուժեղ են զգում։ Ապրանքների սպառումը դժվարանում է և վերջապես կանգ առնում։ Կապիտալիստներն սկսում են կրճատել արտադրությունը։ Ֆաբրիկանները փակվում են, բանվորական մասսաները վողջ շպրտվում։ Աճում է անգործությունը։ Կրիզիսների գլխավոր ծանրությունն ընկնում է բանվոր դասակարգի վրա, և աշխատավոր մասսաների առանց այն էլ ծանր դրությունն ավելի յե վատանում։ Պրոլետարիատի շարքերում ավելի և ավելի յե ամրանում կապիտալիստական հասարակակարգը՝ բռնության և ճնշման այդ հասարակակարգը քար ու քանդ անելու դաղափարը։

Այսպիսով կապիտալիզմի զարգացումը նյութական տվյալներ է պատրաստում նոր, ավելի կատարելագործված հասարակակարգի՝ սոցիալիզմին անցնելու համար, վորովհետև նա անկասկած, վիթխարի կերպով զարգացնում է տեխնիկան, ուժեղացնում մարդու իշխանությունը բնության վրա, բարձրացնում մարդու աշխատանքի արտադրողականությունը, կենտրոնացնում արդյունաբերությունը հսկա ձեռնարկություններում։ Իսկ այդ բոլորը ստեղծում են տնտեսությունը պլանաչափորեն ղեկավա-

րելու հնարավորությունն։ Մյուս կողմից կապիտալիզմի նույն զարգացումն արմատապես կոտրում, կոփում ու բովում է պրոլետարական բանակի շահագործվող կադրերը։ Վորոնք առելությամբ են լցված դեպի կապիտալիզմը, վորոնք լիքն են պատրաստակամությամբ՝ պայքարելու կապիտալիզմի վոչնչացման և պրոլետարական հեղափոխության համար։ Կապիտալիզմը պատրաստում է յուր սեփական գերեզմանափորին՝ հանձինս պրոլետարիատի։

4. ՄԱՆՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՈՐՈՔ

Մաևր արտադրության դուրս մղվելը խոշոր արտադրության կողմից.—Կապիտալիստական աշխարհում ֆաբրիկան և գործարանը անընդհատ պայքար են մղում անշնագործի և արհեստավորի դեմ։ Այն ապրանքները, վոր առաջ արտադրում էին արհեստավորները (կոշիկներ, հագուստներ, կողպեքներ և այլն), հետզհետե դուրս են քշվում ֆաբրիկաներում պատրաստված ապրանքների կողմից։ Արդեն պատերազմից առաջ շուկան լցված էր ֆաբրիկանների արտադրած ամաններով, կոշիկներով, հագուստեղեններով և գործարանային ամեն տեսակի մետաղե ապրանքներով։

Հսկա ֆաբրիկան դուրս է քշում մանր տերերին և դա զարմանալի չէ։ Որինակ, մի զույգ կոշիկ ձեռքով կարելու համար հարկավոր է յերկու որ, իսկ մեքենայով կարելիս պահանջվում է միայն յերկու ժամ։ Բայց չէ վոր շուկայում մի որինք կա՝ միևնույն տեսակի և վորակի վորևե ապրանքի համար—միևնույն գինն է վճարվում։ Ցեվ արժեքի այդ անողորմ որենքը յուր սուր կողմը դարձնում է ինքնուրույն մանր արտադրողի դեմ և մատնում նրան կործանման. մանր արտադրողը դառնում է խոշոր կապիտալին յենթակա։

Վո՞րն է խոշոր ձեռնարկության առավելությունը մանրի հանդեպ։ Խոշոր ձեռնարկությունը տնտեսում է շինքի, վառելիքի, լուսավորության և այլն վրա։ Ֆաբրիկատերը հում նյութը և մյուս բոլոր մատերիալները գնում է մեծ քանակությամբ, և դրա համար էլ նրա վրա ավելի եժան է նստում, քան մանր-արտադրողի վրա։ Բայց գլխավոր առավելությունն այն է, վոր խոշոր ձեռնարկության մեջ կարելի չէ գործադրել մարդու աշխատանքի արտադրողականությունը չափազանց բարձրացնող այնպիսի մեքենաներ, վորոնց կիրառումը մանր ձեռնարկություններում, տնայնագործի արհեստանոցում և փոքրիկ ֆաբրիկայում անհնար է։ Ցեխի գործերը վատ են գնում, կապիտալիստը կարող է սպասել մինչև նրանց լավանալը, իսկ արհեստավորը քայքայվում է և ստիպված ծախում յուր աղքատիկ գործիքները։ Ինչքան էլ մանր արտադրողը ճգնի և ուժ թափի, միևնույն է, նա յերբեք չի կարողանա մրցել խոշոր կապիտալիստի հետ, վորը շուկան գրավելու բոլոր առավելություններն ունի։

Բայց կապիտալը վոչ միայն դուրս է քշում և քայքայում մանր արտադրողին, այլ և նրան յենթարկում է իրեն։ Ձորտատիրական իրավունքի ժամանակ ձեռագործ անող կանայք գործվածքներ էին պատրաստում իրենց տերերի համար։ Ճորտատիրության անկումից հետո պետք էր այդ գործվածքները մի վորևե տեղ ծախել, նրանց համար շուկա գտնել։ Մի քանի ավելի հարուստ և ավելի համարձակ գործող կանայք սկսում են այդ գործը։ Շուտով նրանք դադարում են աշխատելուց և սկսում են զբաղվել ուրիշների գործվածքները ծախելով։ Այսպես և յերևան գալիս գնորդ-միջնորդը։ Հետզհետե նա տնայնագործին ավելի ու ավելի յե խճճում յուր ցանցերի մեջ։ Նա նրան պարտքով տալիս է հում նյութ, յերբեմն հաց, փող և այլն։ Բայց դրա փոխարեն տնայնագործը պետք է յուր պատրաստած ապրանքները ծախի միայն այդ գնորդ-միջնորդին, վորը գնում է շատ չնչին գնով, իսկ ծախում մեծ ոգուտներով։ Շահագործելով տնայնագործներին, գնող-միջնորդը հարստանում է։ Շատ հաճախ, նա վերջիվերջո ձեռք է բերում ֆաբրիկա և իր կողմից քայքայված տնայնագործները, աշխատանք ճարելու համար, ստիպված գնում են նրա մոտ վարձվելու։

Խոշոր կապիտալիստները քայքայում են վոչ միայն արհեստավորներին, այլ խեղդում են նաև իրենց ախոյաններին՝ ավելի փոքր կապիտալիստներին։ Մանր արտադրողները ճնշված են, նեղված, և քայքայվում են հսկա գործարանների և ֆաբրիկանների կողմից։

Ահա թվեր, որոնք ցույց են տալիս, թե Ռուսաստանում ինչպես է կատարվում խոշոր արտադրության աճումը՝ հաշիվ մանրի։

Տարիները	10—50 բանվոր ունեցող (մանր) ձեռնարկությունները	50—500 բանվոր ունեցող (միջակ) ձեռնարկությունները	500-ից ավելի բանվոր ունեցող (խոշոր) ձեռնարկությունները
1895	15,9%	38,9%	45,2%
1915	8,2%	30,6%	61,2%
	պակասում 7,7%-ով	պակասում 8,3%-ով	աճում 16%-ով

Խոշոր յեվ մաՙր արտադրությունը գյուղական տնտեսության մեջ.—Ինչպես արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության մեջ խոշոր արտադրությունն ավելի ոգտակար է, քան մանրը։ Խոշոր կալվածքում ավելի հեշտ է տնտեսությունը վարել գիտականորեն։ Շատ հաճախ գյուղատնտեսական մեքենաները (տրակտորը, ցանիչ, հնձիչ, կալսող) բոլորովին անմատչելի յեն փոքր տնտեսության տեր գյուղացու համար։ Այդ մեքենաները կարող են ոգտագործվել ինչպես պետք է միայն խոշոր արտադրության դեպքում։ Ձիյով կամ յեզներով վարող գութանը կարող է լինակատար կերպով ոգտագործվել միայն 30 հեկտարից (մի հեկտարը 10.000 քառ. մետր է, կամ $^{11}/_{12}$ դեսյատինն) վոչ պակաս հող ունեցող տնտեսության մեջ, հասարակ ցանիչը, հընձիչը և կալսողը՝ 70 հեկտարից վոչ պակաս տնտեսության մեջ, շոգեկալսիչը՝ 250, շոգեգութանը՝ 1000 հեկտար ունեցող և այլն։ Հողի լավացման (վոռոգման, ճահիճների չորացման) աշխատանքները նույնպես մատչելի յեն միայն խոշոր տնտեսության մեջ։ Ինչպես արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության մեջ խոշոր տնտեսությունը շատ ծախսեր տնտեսում է։

Սակայն գյուղատնտեսության մեջ մանր տնտեսության նեղվելը և դուրս քշվելը խոշորի կողմից տեղի յե ունենում ավելի դանդաղ և դժվարությամբ, քան արդյունաբերության մեջ։

Բանն այն է, որ կապիտալիզմն անդունդ է փորում արդյունաբերության և գյուղատնտեսության միջև, քաղաքի և

գյուղի միջև։ Գիտության և տեխնիկայի բոլոր նվաճումներն առաջին հերթին քաղաքին են ծառայում։ Գյուղը խորթ զավակի տեղ է բռնում. նրա վայրենությունն ու անկուլտուրականությունը շատ ուշ են անհետանում նույնիսկ ամենահարուստ յերկրներում։ Կապիտալի գլխավոր մասսաները գնում են արդյունաբերության և վոչ գյուղատնտեսության մեջ։

Յեվ շատ հասկանալի յե, թե ինչու կապիտալն առանձնապես չի ձգտում դեպի գյուղական տնտեսությունը։ Ամենից առաջ կապիտալիզմի որոք հողը մշակելու թուլությունն է պետք է փող վճարել հողատեր-կալվածատիրոջը։ Այդ տուրքն անվանում են ռենտա, ըստ վորում նա այնքան շատ է, վորքան բերրի և հարմար է հողամասը։ Կարելի յե, իհարկե, հողը գնել կալվածատերից, բայց դա կնշանակեր, վոր կապիտալիստը համարյա իզուր է այդ փողերը տալիս, քանի վոր պահանջն ուտելիքի մթերքների վրա չի կարող ածել այնպես, ինչպես արդյունաբերության ապրանքների վրա։ Յեվ իսկապես, յեթե անց և կացվում մի մեծ յերկաթուղի, ապա միանգամից պահանջվում է ռելսերի (գծերի) և ուրիշ մատերիալների ահագին քանակություն։ Ռելսերի ֆաբրիկատները կարող են կրկնապատկել կամ քառապատկել իրենց արտադրությունը։ Նույնը չե գյուղատնտեսության մեջ։

Կապիտալը վախենում է նույնպես և բերքի անկայունությունից, այնինչ արդյունաբերության մեջ յեղանակի վերաբերյալ նա վոչ մի ռիսկ չի անում։ Վերջապես գյուղատնտեսության մեջ ամեն ինչ ընթանում է շատ դանդաղ, ապրանքի արտադրության ժամանակամիջոցը կախում ունի բնական պայմաններից։ Որինակ, անասնապահության դեպքում սահմանված պետք է սպասել մինչև անասունը մեծանա, հողագործության դեպքում չի կարելի բերքը հավաքել ժամանակից առաջ։ Իսկ արդյունաբերության մեջ նոր գյուտերի և կատարելագործումների միջոցով կապիտալը կարող է ավելի և ավելի կրճատել ապրանքի արտադրության ժամանակամիջոցը, ավելի և ավելի արագ բաց թողնել ապրանքները և ավելի շատ փող աշխատել։

Գյուղական տնտեսության յեւոպական պայմաններում մանր արտադրությունը գյուղում ավելի կենսունակ է լինում և ապրում է ավելի յերկար, քան քաղաքում։ Սակայն դա ձեռք է բեր-

վում թանգ գնով։ Կապիտալիզմի որոք գյուղացին մատնված է ծանր աշխատանքի։ Նա ճիգ է անում, կաշվից դուրս է գալիս, միայն թե պահպանի յուր չնչին «ինքնուրույն» տնտեսությունը։ Հողը ուժից ընկնում է, վատանում է անասունների խնամքը, ինքը գյուղացին և ընտանիքը ապրում են ավելի և ավելի վատ, ճնշում են տուրքերը. հարկավոր է վճարել հողի կապալավարձը և այլն։ Գյուղացին շատ հեշտությամբ դառնում է վաշխառույին գերի, վորը ծծում է նրա արյունը։ Յուր հացը և անասունները սովորաբար նա ծախում է գնորդ-միջնորդին—վո՞րտեղից նրան ուժ և ժամանակ, վոր գնա շատ հեռուները՝ ապրանքը ծախելու համար։ Վաշխառուն և առևտրականը ամուր կերպով պահում են գյուղացուն իրենց ճանկերի մեջ։ Գյուղի վրա հետզհետե ավելի և ավելի ուժեղ կերպով աճում է կապիտալի ճնշումը, կապիտալի, վորն ահագին փնդունդ է փորում՝ յուր տեխնիկայով, գիտությամբ, գիղարվեստով առաջավոր քաղաքի, և խուլ, մութ, յուր զարգացմամբ հարյուրավոր տարիներով քաղաքից յետ մնացած գյուղի միջև։ Այդ անդունդը կարող է վոչնչացնել միայն սոցիալիզմը։

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՐԳԻ ՎԵՐՋԻՆ ԱՍՏԻՃԱՆՆ Է

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Նախապես ծագումն առնելով Արևմտյան Յեվրոպայում, կապիտալիզմը սկսեց արագ տարածվել վողջ յերկրագնդի վրա, ընդգրկելով մի յերկիրը մյուսի յետևից։ Շատ յերկրներում կապիտալիզմը հանդես եր գալիս յեվրոպական պետությունների զրահակիրների, զորքերի և արտիլլերիայի ուղեկցությամբ։ Կապիտալիստական յերկրները—ամենից առաջ Անգլիան և Ֆրանսիան վինված բռունցքով տիրացան յերկրագնդի ամենահամեղ պատառներին, վողջ շրջաններ ու հսկայական յերկրներ իրենց գաղութներ դարձրին։

Կապիտալիզմը սրանից մի հիսուն տարի առաջ մտնում եր զարգացման նոր շրջան։ Կապիտալիստական տնտեսությունը վերասերվում է. այդ պրոցեսը ավարտվում է միայն XX-րդ դարի սկզբին։ Կապիտալիզմի այդ նոր շրջանին մենք *իմպերիալիզմ* անունն ենք տալիս։ Իմպերիալիզմի ժամանակ կապիտալիզմի բոլոր հիմնական հակասությունները արտակարգ սուր բնույթ են ստանում։ Տնտեսական կյանքը դառնում է ավելի անհամաչափ քան առաջ, շարժվում է վոստյունների։ Իմպերիալիզմի ժամանակ բացարձակապես գծագրվում է կապիտալիզմի աղջամուղջը. «իմպերիալիզմը ճիշտ նախորյակն է հեղափոխության»,—ինչպես ասում է ընկ. Լենինը։ Դիտենք մանրամասնաբար թե ինչպես է կապիտալիզմի զարգացումը հասնում իր իմպերիալիստական շրջանին և պարզենք, թե ինչ նոր հատկագծեր է ստանում իմպերիալիզմի եպոխայի կապիտալիզմը։

Ազատ կոնկուրենցիայից դեպի մոնոպոլիայի գերիշխանությունը.—Կապիտալիզմի հիմնական առանձնահատկություններից

մեկը խոշոր արտադրության հաղթանակն է մանր արտադրության վրա։ Սակավաթիվ հարուստների ձեռքերում կենտրոնանում են անագին կարողություններ ի հաշիվ մանր ձեռնարկողների կործանման։ Տարեց տարի խոշորանում են նրանց կուտակումները և խոշորագույն կապիտալիստների հարստությունները աճում են սարից գլորվող ձյունագնդի նման։ Կատարվում է, ինչպես ասում են, կապիտալի կոնցենտրացիա (խոշորացումը, խտացումը) և կենտրոնացումն՝ սակավաթիվ խոշորագույն կապիտալիստների ձեռքերում։

Դեռ մի կես դար սրանից առաջ կապիտալիստական յերկիրների ձեռնարկությանց մեծամասնությունը պատկանում էր առանձին անձանց։ Հետզհետե պատկերը սկսում է փոխվել։ Առանձին տերերին փոխարինում է բաժնետիրական ընկերությունը։ Բաժնետիրական ընկերության էությունը նրանումն է, վոր խոշոր կապիտալիստները ոգտագործում են մանր կապիտալիստների կապիտալները և յերբեմն, նույնիսկ ծառայողների, պաշտոնյաների, գյուղացիների և բանվորների խնայողությունները։ Յուրաքանչյուրը մտցնելով վորոշ գումար, այդ գումարի փոխարեն ստանում է բաժնետոմսերի համապատասխան քանակ։ Բաժնետոմսը—մի վկայական է՝ ձեռնարկությունների մեջ մաս ունենալու։ Բաժնետոմսի տերը կարող է ծախել իր բաժնետոմսը յերբ և ում կամենա։ Բաժնետոմսերի վաճառքն ու գնումը կատարվում է բորսաներում։

Բաժնետիրական ձեռնարկության գործերի քննության, կառավարիչ անձանց նշանակման, յեկամուտների բաժանման ժամանակ յուրաքանչյուր մասնակցող ունի իր բաժնետոմսերի քանակին համապատասխան ձայներ։ Պարզ է, վոր խոշոր կապիտալիստները բացարձակ իշխում են բաժնետիրական ձեռնարկություններում։

Սակայն գործը չի սահմանափակվում բաժնետիրական ընկերությունների ծավալումով։ Աճում են արագաբար կապիտալիստների միությունները՝ սինդիկատները, տրեստներն ու կարտելները։ Ի՞նչպես են սրանք առաջանում։ Մանր կապիտալիստների հեռացումից հետո, արդյունաբերության յուրաքանչյուր ճյուղի մեջ ծնում է խոշոր ֆաբրիկանտների աննշան քանակություն։ Սրանց միջև պայքարը ահռելի ձևեր է ստանում,

ամեն մեկը աշխատում է ազատվել իր ախոյանից։ Յերկու մրցող շոգենավային ձեռնարկությունների մասին մի զվարճալի պատմվածք կա.—նրանք գները իրարից այնքան են պակասեցնում, վոր մեկը սկսում է ճանապարհորդներին անվճար տեղափոխել, այն ժամանակ մյուսը, վորպեսզի վերջնականապես վոչնչացնի իր ախոյանին, սկսում է, բացի անվճար տեղափոխությունից, իրրև հավելում, ճանապարհորդներին մի մի «բուբլիկ» նվիրել։

Յերբ արդյունաբերության յուրաքանչյուր ճյուղում ծնում է խոշորագույն կապիտալիստների սակավաթիվ քանակություն, նրանց ձեռնտու չե իրար հետ համաձայնության գալ՝ գնորդին միասին թալանելու համար։ Այսպես են առաջանում կապիտալիստների միությունները—մոնոպոլիաները։

Ի՞նչ է մոնոպոլիան։ Մի գրող իր պատմվածքում գրում է այն մասին, թե ինչպես են հարստացել վոքրիկ, վողջ աշխարհից կտրված մի քաղաքից յեկած յերկու խարեբաներ։ Նրանք առնում են քաղաքի բոլոր յերեք գինետները, փակում են դրանցից յերկուսը, և յերրորդում սկսում են գինու մի բաժակը մի դոլլարով (2 ռուբլով) ծախել։ Կարճ ժամանակի ընթացքում վոչ միայն յետ են ստանում իրենց ծախսած գումարը, այլև մեծ ոգուտ են ստանում։

Այս օրինակը ընորոշում է մոնոպոլիայի էությունը։ Բանը նրանումն է, վոր մի վորևե ապրանք ամբողջովին, կամ գրեթե ամբողջովին դտնվում է մեկի մոտ։ Այդ դեպքում ամեն մի այդ ապրանքի կարիք ունեցողին կարելի յե ստիպել առանց այլևայլության վճարել այն գինը, վորը նրանից պահանջում են։

Հետևապես կապիտալիստական մոնոպոլիան կապիտալիստների մի պայմանագիր է, վորի նպատակն է ազատ կոնկուրենցիայի վոչնչացումը։

Բաժնետիրական ընկերությունների հանդես գալու ժամանակ բթամիտ սոցիալ-դեմոկրատները ու համաձայնողականները հիացած էին։ Ըստ նրանց խոսքերի գործը այնպես էր պատկերանում, վորպես թե այժմ ամեն մի բանվոր կարող է կապիտալիստ դառնալ, նա պետք է միայն բաժնետոմս գնի։ Սակայն սա մի անասելի անհեթեթություն է։ Իրոք բաժնետիրական ընկերությունների շնորհիվ ավելի ևս արագ հարստանում են խոշորագույն սեփականատերերը, կապիտալի արքաները։ Բանվորների

և ծառայողների խնայողությունները (բաժնետոմսերի գնման հա-մար հատկացված) այդ կապիտալիստական ակուլանները գործա-ծում են իրենց ձեռնարկությունների ընդլայնեցման և շահերի ավելացման համար։ Նույնպես չարգարացան համաձայնողական-ների այն յենթադրությունները, վոր խոշոր կապիտալիստական միությունների իշխանությունը կարող է վերացնել անտեսու-թյան անկազմակերպությունը (արտադրության անարխիան) և կրիզիսները (ճգնաժամերը)։ Ընդհակառակը, մոնոպոլիաների իշ-խանության ժամանակ կապիտալիստների պայքարը հարյու-րապատիկ դաժան է դառնում, քանի վոր առանձին ձեռնար-կողների փոխարեն առաջ են գալիս հզոր միություններ։ Կրիզիս-ները դառնում են ավելի կորստաբեր, խոշորագույն կապիտա-լիստները հազարավոր միջոցներ են գտնում կրիզիսների դևա-վոր հատուցումը, դևավոր վնասները բացառապես աշխատավոր մասսաներից առնելու։

Ազատ կոնկուրենցիայից դեպի մոնոպոլիաների իշխանու-թյունն անցնելը ունի շատ կարևոր հետևանքներ։ Առաջ ազատ կոնկուրենցիան տեխնիկական զարգացման գլխավոր շարժիչն եր։ Մրցակիցների հետ պայքարելը յուրաքանչյուր արդյունաբերողից պահանջում եր նոր և կատարելագործված մեքենաների գործա-դրություն։ Մոնոպոլիաների գերիշխանության ժամանակ այդ դրդապատճառը բացակայում է։ Ցեվ մենք իրոք շատ հաճախ տեսնում ենք, վոր կապիտալիստական արդյունաբերությունը տարիներ շարունակ չի գործադրում նոր գյուտերը։ Այսպիսով մոնոպոլիանները կապիտալիզմը հասցնում են իր նեխման շըր-ջանին։

Կապիտալիստների մոնոպոլիստական միությունները սով-րաբար ընդգրկում են միայն մի կողմը։ Յուրաքանչյուր առան-ձին յերկրի սահմաններում այդ միությունները վոչնչացնում են ազատ կոնկուրենցիան։ Սակայն ավելի ուժեղ և բորբոքվում պայքարը զանազան յերկրների զորեղ միությունների միջև։ Այդ պայքարի մեջ է քաշվում և պետությունը, վորը սովորաբար սպասարկու յե հանդիսանում նավթի, պողպատի, ածուխի ար-քաների։ Խոշոր յերկրների միջև այդ պայքարը խիստ դաժան է։ Կոնկուրենցիայի այս նոր ձևը հղի յե պատերազմներով և ցըն-ցումներով։

Մոնոպոլիստական միություններ կարեվորագույն յերկրներում.— Մոնոպոլիստական միությունները ամենից արագ տարածվում եյին Ամերիկայում. դրա համար Ամերիկան կոչվում է «տրեստ-ների յերկիր»։ Արդեն ներկա դարի սկզբին ամերիկական տրեստ-ները կենտրոնացրել եյին իրենց ձեռքերում արտադրության մե-ծագույն մասը։ Այսպես, նավթային տրեստը իր մեջ է կենտրո-նացրել նավթի ամբողջ արտադրության 95%-ը. նավթային տրեստը ոգտվելով իր մոնոպոլիայից բարձրացրեց իր շահույթը 5%-ից (1882 թվին) մինչև 48% (ներկա դարի սկզբին)։ Ֆի-միական տրեստը միացնում է արտադրության 81%, կապարա-յինը—85% և այլն։ Ամերիկական պողպատի տրեստը կապիտալի ամենազորեղ կազմակերպությունն է ամբողջ աշխարհում։ Նա 4 միլիարդ դոլար*) կապիտալի տեր է։ Նա ունի 147 գործարան, 500 հալոցային վառարան։ Այդ տրեստի ձեռնարկություններում աշխատում են 276.000 մարդ։ Այդքան էլ մոտավորապես աշխա-տում են մի այլ տրեստի ձեռնարկություններում՝ ամերիկական հեռագրական կամպանիայում, վորի մեջ կենտրոնացած են յեր-կրի հեռագրական և հեռախոսային գործի 80—85%-ը։ Ամերիկա-կան նավթային տրեստի կապիտալը մի միլիարդ դոլարից ավել է. այդ տրեստի 1926 թվի շրջանառությունը հավասար եր 1.120.000.000 դոլար կլորիկ գումարի։ Յերկու խոշորագույն ավ-տոմոբիլային ֆիրմաներից (մինչև որս իրար հետ մրցող) մեկը հայտնի Ֆորդի ֆիրման է, մյուսը նրա ախոյան ամերիկյան ավ-տոմոբիլային կամպանիան։ Ֆորդը մի միլիարդ դոլարից ավելի կապիտալ ունի, «ամերիկյան կամպանիան»—մեկուկես միլիարդ։ Սրանից առաջինը 1926 թվին ավտոմոբիլներ ծախեց մի միլի-արդ դոլարի, Ֆորդը—յերեք քառորդ միլիարդի։ Առաջինի զուտ ոգուտը հավասար եր 180 միլիոն դոլարի, իսկ Ֆորդինը մոտ 100 միլիոնի։

Գերմանիայում մինչ պատերազմը պողպատի «միությունը» իր մեջ եր կենտրոնացրել պողպատի արտադրության $^9/_{10}$-ը։ Քարածուխի արդյունաբերության մեջ Ռայն-վեստֆալյան սին-դիկատը դեռ իր հիմնադրման սկզբին միացրել եր գերմանիայի ածխաշատ շրջանի ածուխի արտադրության 87%-ը (հետա-գայում 95%)։ 1926 թ. վերջին Գերմանիայում գոյություն ունե-

*) Մի դոլարը հավասար է մոտավորապես 2 ռուբլու վոսկով։

ցող բաժնետիրական ընկերությունների 2/3 մասը մտնում էին այս կամ այն կապիտալիստական միությունների մեջ։ Ժամանակակից Գերմանիայի յերկու խոշորագույն տրեստները—քիմիականն ու կալիյի—ունեն մոտ յերկու միլիարդ մարկայի*) կապիտալ։

Գերմանիայում յետ-պատերազմյան շրջանում առանձնապես հռչակված եր Ստիննեսի հսկայական ձեռնարկությունը (կոնցերն)։ Այս արդյունաբերողը սաստիկ հարստացավ պատերազմական մատակարարումների շնորհիվ։ Պատերազմից հետո նա ոգավելով տիրող տագնապից, սկսեց ամենաժամն գներով գնել ամեն տեսակի ձեռնարկություններ՝ ածխահանքեր և ելեքտրական ձեռնարկություններ, հեռագրական գործակալություններ և բանկեր, թղթի ֆաբրիկներ և շոգենավային կամպանիաներ, մետաղագործական գործարաններ և լրագրներ։ Այդ հսկայական ձեռնարկությունը, վոր հարյուր հազարներով բանվորներ և ծառայողներ ուներ, իր հիմնադրի մահից հետո քայքայվեց։

Ցարական Ռուսաստանում ևս գոյություն ունեյին կապիտալիստների խոշոր մոնոպոլիստական մի շարք միություններ։ «Պրոդուգոլ» սինդիկատը միացնում եր գոնեցի ածուխի արտադրության կեսից ավելին։ «Պրոդամետա» մի այլ սինդիկատ իր մեջ եր կենտրոնացրել շուկա բերվող ամբողջ յերկաթի 95%-ը։ Հնագույններից եր շաքարի գործարանատերերի սինդիկատը։ Այս սինդիկատը հռչակ ուներ նրանով, վոր նա շաքարը Անգլիա եր արտահանում և ծախում այնպիսի եժան գներով, վոր անգլիացիք ռուսական շաքարով խոզերին եյին կերակրում։ Այս արվում եր շուկայի նվաճման նպատակով։ Այդ արտահանման վնասները ծածկվում եյին սինդիկատի՝ բուն յերկրի համար սահմանած բարձր գների միջոցով։

Ֆինանսական կապիտալ.—Խոշոր արդյունաբերողները հետզհետե ավելի սերտորեն են կապվում բանկերի հետ, սրանց հանձնելով ազատ դրամարկղ. յերբեմն ել ծառայողների և բանվորների խնայողությունները ևս հավաքվում են բանկերում։ Բանկը այդ փողերը տալիս և իրըև փոխատվություն կամ պարտք իրենց շրջանառության համար փողի կարիք ունեցող արդյունաբերողներին և առևտրականներին։ Այդ փողերի շնորհիվ ձեռնարկող-

*) Մի մարկան մեր 50 կոպեկից մի քիչ պակաս է։

ները կարող են լայնացնել իրենց գործը, ավելացնել իրենց շահույթը։ Այդ շահույթի մի մասը նրանք տալիս են բանկին, վորը այդ փողերի վորոշ մասը վճարում է նրանց, վորոնք իրենց փողերը դրել են բանկում։ Առաջ բանկերը հենց միայն սրանով եյին զբաղվում, «փողի առևտուր» եյին անում։

Բայց և բանկային ասպարիզում խոշոր կապիտալիստը կլանում է մանր կապիտալիստին։ Այսպես օրինակ, 1890 թ. մինչև 1912 թ. Անգլիայի բանկերի թիվը կրճատվել է 104-ից մինչև 44, իսկ կապիտալները ավելացել են 4,5 միլիարդից մինչև 8,5 միլիարդ։ Ավելի ու ավելի ահագին կապիտալներ են կլանում այժմյան բանկերը։ Այդ հսկայական գումարները նրանք մտցնում են արդյունաբերության մեջ։

Հասկանալի յե, վոր խոշորագույն բանկիրները (այսպես են կոչում բանկատերերին) սկսում են ավելի և ավելի մոտիկից ծանոթանալ արդյունաբերական ձեռնարկությունների գործերին։ Չե վոր գործերի վատ ընթանալու դեպքում բանկը իր արդյունաբերությանը տված փողերը կարող է կորցնել։

Բանկերը իրենց ձեռքերում են պահում արդյունաբերական ձեռնարկությունների բաժնետոմսերի մեծ մասը։ Այսպիսով նրանք ապահովում են իրենց ազդեցությունը այդ ձեռնարկությունների։ Խոշորագույն կապիտալիստները միաժամանակ հանդիսանում են և բանկերի և արդյունաբերության տերերն ու դեկավարները։ Կատարվում է բանկերի և արդյունաբերության կցումն։ Բանկային կապիտալը, վոր այդպիսով կցվում է արդյունաբերական կապիտալի հետ, կոչվում է ֆինանսական կապիտալ։

Ամերիկայում նավթային տրեստի տերը՝ Ռոկֆելլերը և պողպատի տրեստի տերը՝ Մորգանը յերկրի խոշորագույն բանկերի տերերն են հանդիսանում։

Ներկայումս յուրաքանչյուր կապիտալիստական յերկրում գոյություն ունեն սակավաթիվ բանկեր, վորոնք իրենց բռունցքում են պահում վոլջ տնտեսական կյանքը։ Այսպես, Անգլիայում կան հինգ այդպիսի բանկեր, Գերմանիայում վեց, Ֆրանսիայում հիմնական նշանակություն ունեն չորս հսկայական բանկեր։ Պետք է ավելացնել, վոր բոլոր այդ բանկերը սովորաբար շատ սերտ կապերով կապված են միմյանց հետ։

Բանկային կապիտալի և արդյունաբերության կցումը առաջ է բերում մի բուռը խոշորագույն կապիտալիստների իշխանությունն և կարողության հսկայական ուժեղացում։ Արդյունաբերության և բանկերի արքաները հսկայական յերկրների բացարձակ տերերն են հանդիսանում։ Իր շոշափուկներով ֆինանսական կապիտալը ամուր պատում է յերկաթուղիները, հանքերը և գյուղատնտեսությունը, ֆաբրիկաներն ու գործարանները, գլխոցներն ու համալսարանները։ Ֆինանսական կապիտալի գերիշխանության ժամանակ բանվորական շարժումը հանդիպում է աստակարգ ուժեղ, միացյալ և մինչև ատամները զինված հակառակորդի։ Դասակարգային հակասությունները խորանում են, դասակարգային պայքարը զորանում։

Գաղութների բռնի տիրացումն ու աշխարհի բաժանումը.— Մոնոպոլիաների և ֆինանսական կապիտալի շրջանում խիստ ուժեղանում է կապիտալիստական յերկրների բռնի տիրացման գործունեությունը։

Դեռ շատ առաջ յեվրոպացիք բերում էին իրենց ապրանքները գաղութներն ու յետամնաց յերկրները և ծախում ամենաթանգ գներով ամենաանպետք բանները, արտահանում թանգագին ապրանքներ։ Հզորագույն յերկրները հեղհեղուկ հափշտակում էին շատ հողեր ահագին բնակչությամբ։ Անգլիական իմպերիալիստները սիրում են պարծենալ, վոր «Անգլիայի արքայի տիրապետությունների մեջ արևը յերբեք մայր չի մտնում»։ Եվ իրոք, անգլիական իմպերիալիստների տիրապետությունները ցրված են ամբողջ աշխարհում, այնպես, վոր ամեն մի վայրկյան մի վորևե տեղ արևը փայլում է։ Յերկրագնդի $1^3/_4$ միլիարդանոց բնակչությունից մոտ 600 միլիոնը ապրում է ճնշված գաղութներում, իսկ 400 միլիոնը կիսագաղութներում (Չինաստան, Պարսկաստան և այլն)։ Այսպիսով մարդկության կեսից ավելին մոտավորապես մի միլիարդ մարդ, դտնվում է գիշատիչ յերկրների գերիշխանության ներքո, վորոնց բնակչությունը հավասար է միայն $^1/_4$ միլիարդ մարդու։

Աշխարհի բաժանումը առանձնապես արագ ընթացք ստացավ նախապատերազմական վերջին տասնամյակների ընթացքում։ Այսպես կոչված «մեծ պետությունները» սկսած 1876 թ. մինչև 1914 թ. տիրապետեցին 25 միլիոն քառակուսի կիլոմետր. այսպիսով նրանք հափշտակեցին Յեվրոպայից յերկու անգամ ավելի մեծ տարածություն։ Ամենից շատ հողեր ստացան այնպիսի գիշատիչները, ինչպիսիք են Անգլիան ու Ֆրանսիան։ Ավելի յերիտասարդ գիշատիչները՝ Գերմանիան, Իտալիան և ուրիշները հասան միայն բաժանման վերջին։ Բոլոր՝ շահագործման համար շատ թե քիչ պիտանի յերկրները արդեն հափշտակված էին։ Պետք եր կամ բավականանալ այլոց սեղանների մնացորդներով, և կամ փորձել ատամներով խլել համեղ պատառներն այլ գիշատիչների յերախներից։

Ազատ հողեր այլևս չկան։ Մի նոր բան իմպերիալիստները կարող են ստանալ միայն մի միջոցով—իրենց հակառակորդներից նրանց ավարի մի մասը խլելով։ Այժմ յերկրագնդի նոր վերաբաժանման համար անհրաժեշտ են կռիվներ իմպերիալիստների միջև։ Իսկ նման պայքարը անխուսափելիորեն հասցնում է զինյալ ընդհարումների, պատերազմների։

Ի՞նչու աշխարհի բաժանումը այդպիսի արագ քայլերով շարժվեց վերջերս։ Բանը նրանումն է, վոր իմպերիալիզմի ժամանակ արմատապես փոփոխվում է գաղութների դերն ու նշանակությունը։ Առաջ կապիտալիստները գաղութներն էին բերում իրենց ապրանքները և այնտեղից արտահանում էին ամեն տեսակի ոտարերկրյա ապրանքներ։ Այդպիսի առևտուրը շահավետ եր։

Այլ և այժմ, յերբ իշխում են մոնոպոլիստներն ու ֆինանսական կապիտալը։ Կապիտալիստների համար խիստ նեղ են յեվրոպական յերկրների սահմանները։ Իրենց յերկրներում անբաժան իշխանություն ձեռք բերած մոնոպոլիստները ձգտում են տիրել ոտար յերկրների, ուր կան հում նյութերի աղբյուրներ և սպառման շուկաներ։ Կապիտալիստական յերկրներում շահը կարելի յե բարձրացնել մինչև վորոշ սահմանի։ Այդ սահմանից ավել բարձրացումը ուժեղացնում է բանվոր դասակարգի ընդդիմադրությունը, վորը սպառնում է կապիտալիստական կարգերի գոյության։ Հարստանալու անհագ ծարավը քշում է կապիտալը դեպի նոր յերկրներ, ամենից առաջ դեպի գաղութները։

Կատաղի արագությամբ սկսում են կառուցվել յերկաթուղիները, առաջ են գալիս քաղաքներ, բարձրանում են դեպի յերկինք գործարանների ու ֆաբրիկաների ծխնելույզները։ Դրանց վրա ծախսվում են հին կապիտալիստական յերկրներից հոսող միլի-

արդները, այդ միլիարդները տալիս են լավ շահ, քանի վոր այդ յերկրներում աշխատանքը շատ էժան է, որինակ Չինաստանում բանվորը մի բաժակ բրնձի համար աշխատում է 12—14 ժամ։ Ջեռքի տակ է առատ հում նյութերները։ Պատրաստի ապրանքները սպառվում են առատորեն, քայքայվող արհեստավորության վոսկրների վրայով հաղթականորեն ընթանում է կապիտալիստական տեխնիկան։

Այսպիսով առաջվա ապրանքների արտահանման փոխարեն, իմպերիալիզմի շրջանում առաջին հերթին կատարվում է կապիտալի արտահանումը։ Այս փոփոխությունը մեծ նշանակություն ունի։ Սովորական առևտրի ժամանակ առևտրով զբաղվող յերկրների կապը շատ թույլ է։ Այժմ պարտապան յերկրները պողպատյա շղթայով են կապված կապիտալ արտահանող յերկրների հետ։

Կապիտալի մուծումը շատ արագացնում է յեռաճնաց գաղութների աճումը։ Ոտար կապիտալի ոգնությամբ բոլոր յերիտասարդ յերկրները վոտքի յեն կանգնում։ Այդ ոգնությունը շատ հաճախ հնարավորություն է տալիս յերիտասարդ յերկրին իրեն ախոյանից շատ առաջադիմել։ Ուժեղանում և առանձին յերկրների զարգացման անհամաչափությունը։

Թե ինչ նշանակություն ունի ժամանակակից պետությունների համար կապիտալի արտահանումը, այդ յերևում է հետևյալ հաշվից։ 1925 թ. Անգլիան արտահանեց իր արդյունաբերության ապրանքներ 7 միլիարդ ռուբլու։ Այդ արտահանման շահը կազմում և մոտավորապես մի միլիարդ։ Ցեվ նույն 1925 թ. Անգլիան իր այլ յերկրներում գործ դրած կապիտալներից միայն շահ ստացավ 4.200 միլիոն ռուբլի։ Այս յեկամուտը գերազանցում է արդյունաբերական ապրանքների արտահանումից ստացվող յեկամուտը՝ ավելի քան չորս անգամ։ Ահա թե ինչու, իմիջի այլոց, անգլիական իմպերիալիստները 1927 թ. խզեցին իրենց հարաբերությունները Խորհրդային Միության հետ, չնայելով այն հանգամանքին, վոր այդ խզումը հասցնում էր Անգլիայի առևտրին և արդյունաբերությանն։ Նրանց համար ավելի կարևոր էր գաղութներում և ճնշված յերկրներում իրենց հանգիստն ապահովել, քանի վոր այնտեղից են հոսում ահռելի ոգուտները դեպի իրենց անհատական գրպանները։ Նրանք կարծում են, թե գաղութների հեղափոխական շարժումը կատարում են կոմինտերնի գործակալները, և խզելով մեզ հետ իրենց հարաբերությունները, հույս ունեն կասեցնել գաղութների հեղափոխական շարժման աճումը։

Ոտար յերկրների բաժանման հետ միաժամանակ կազմակերպվում են կապիտալիստների միջազգային միությունները (տրեստները, կարտելները), վորոնք և սպառման շուկաները բաժանում են իրար մեջ։ Սակայն այդ չի կատարվում առանց դաժան պայքարի, վորի մեջ կենդանի մասնակցություն ունեն խոշորագույն յերկրների կառավարությունները։ Այսպես, դեռ մինչև պատերազմը գերմանական և ամերիկական յերկու ելեքտրոտեխնիքական միությունները բաժանեցին իրար մեջ սպառման շուկաները։ Համաշխարհային նավթի շուկան գտնվում է ամերիկական և անգլիական յերկու հսկայական տրեստների ձեռքում։ Նրանց միջև տեղի ունի մի անընդհատ պայքար, վորը միջոցների խարությունն չի ճանաչում։ Ցեվրոպական յերկրների մեսագործարանների տերերը 1927 թ. կազմեցին պողպատի տրեստ։

Ինչ է իմպերիալիզմը.—Այսպիսով մենք տեսնում ենք, վոր վերջին կես դարի ընթացքում կապիտալիստական տնտեսության մեջ կատարվել են արտակարգ լուրջ փոփոխություններ։ Անցյալ կապիտալիստական զարգացման հատուկ աստիճանը, նրա վերջին աստիճանը։ Ներկա դարաշրջանի կապիտալիզմը մենք անվանում ենք իմպերիալիզմ։ Լենինը իմպերիալիզմը բնորոշում է հետևյալ կերպով.

«Իմպերիալիզմը—կապիտալիզմ է զարգացման այն շրջանի (այսինքն աստիճանի), յերբ ավարտվել և մոնոպոլիաների և ֆինանսական կապիտալի գերիշխանությունը, աչքի ընկնող նշանակություն է ձեռք բերել կապիտալի արտահանությունը, սկսվել է աշխարհի բաժանումը միջազգային տրեստների կողմից և վերջացել է հողի ամբողջ տերրիտորիայի բաժանումով խոշորագույն կապիտալիստական յերկրների միջև»։

2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ՈՒ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ֆինանսական տեորեմների իմաստությունը.— Պետությունը միշտ դասակարգային բռնության գործիք է հանդիսանում։ Կապիտալի գերիշխանության որոք պետությունը բուրժուազիայի գործիք է հանդիսանում (այս մասին ավելի մանրամասն կասվի հետևյալ գլուխներում)։ Իմպերիալիստական դարաշրջանում պետու-

թյան դասակարգային բնույթը արտահարդ կերպով է մերկանում։ Բուրժուական պետության իշխանությունը խաղալիք է դառնում կապիտալի արքաների այն փոքրիկ խմբակի ձեռքում, որը վողջ մարդկության մահն և կյանքն է տնօրինում։

Մոնոպոլիաների գերիշխանության ժամանակ մարդկանց մի փոքրիկ խմբակ իր ձեռքում է պահում ժողովրդական կյանքի բոլոր ճյուղերի բանալիները։ Կապիտալիստական Գերմանիայի ղեկավարներից մեկը, էլեքտրոտեխնիքական արհեստի դիրեկտոր Ռաթենաուն մի անգամ անկեղծաբար հայտարարեց, թե «իրար ճանաչող յերեք հարյուր մարդ ղեկավարում են աշխարհի անտեսական կյանքը և իրենց հաջորդներ նշանակում իրենց իսկ շըրջանից». հաշված է, որինակ, վոր Ֆրանսիայում 50—60 խոշոր ֆինանսական տնօրենները 108 բանկերի, ծանր արդյունաբերության (այսինքն՝ ածխային, մետաղային և այլն), 105 ձեռնարկությունների, 101 յերկաթուղային ընկերությունների և 107 այլ կարևոր ձեռնարկությունների տերերն են հանդիսանում։

Տնտեսությունը ամեն մի յերկրի կյանքի հիմքն է։ Տնտեսական կյանքում աննահման միահեծաններ դարձած կապիտալիստների խմբերը շուտով և այլ շրջաններում դառնում են «չթագադրված արքաներ»։ Պետական իշխանությունը դառնում է կապիտալի տնօրենների փոքրիկ խմբակների հլու գործակալը։

«Մոնոպոլիան, յերբ նա կազմվել է և միլիարդների գործեր է անում, բացարձակ անխուսափելիությամբ թափանցում է հասարակական կյանքի բոլոր կողմերը, անկախ քաղաքական կարգից»—գրել է Լենինը։

Բանկերի և արհեստների տերերը պետական մեքենան իրենց յենթարկելու շատ միջոցներ ունեն։ Այսպես կոչված դեմոկրատիկ պետություններում որենքները ընդունվում են պարլամենտներում, վոր կազմված են ընտրյալ մարդկանցից՝ պատգամավորներից։ Խոշորագույն բանկերն ու արհեստները կաշառում են պարլամենտի պատգամավորներին՝ թե առանձին առանձին, թե խմբերով, պահում են լրագրների մեծամասնության, վորոնք համապատասխանորեն վերամշակում են իրենց ընթերցողների ուղեղները։ Բուրժուական կուսակցությունները իրենց աշխատանքի համար վող են ստանում բանկերից և արհեստներից։

Ֆինանսական կապիտալը սրում է դասակարգային հակասությունները ծայր աստիճանի։ Հարուստ յերկրների բուրժուազիան կաշառում է բանվորական արիստոկրատիայի սակավաթիվ շերտերը ի հաշիվ գաղութներից ստացվող թալանի։ Բարձր վըրակյալ բանվորներին վճարում են բարձր աշխատավարձ, նրանց վիճակը բարելավվում է, նրանց մեջ աճում են համաձայնողական տրամադրություններ։ Սակայն պրոլետարիատի հիմնական մասսաները, գաղութների ճնշված ժողովուրդները և գյուղացիության աղքատացող մասսաները ավելի ու ավելի հավաստիանում են, վոր կապիտալիզմի որով կյանքը անլուսա տանջանքի յե վերածվում։ Ամրապնդվում և պայքարելու կամքը։

Արտաքին քաղաքականությունն յեվ պատերազմը.—Ժամանակակից բուրժուական պետությունների արտաքին քաղաքականությունն ևս լիովին ու ամբողջապես յենթարկվում է ֆինանսական կապիտալին։ Որինակ, Ամերիկայում մոտ ժամանակներս կառավարությունը Մեքսիկայում դեսպան նշանակեց Մորգանի խոշորագույն արհեստի ծառայողներից մեկին։ Իմպերիալիզմի շըրջանում կապիտալի համար արտաքին քաղաքականությունը բացառիկ կարևոր նշանակություն ունի։ Զորեղ պետությունը ապացուցում է և կապիտալիստներին նրանց՝ արտասահմանում գործադրվող կապիտալներից մեծ շահ ստանալու հնարավորությունը։ այսպես որինակ, յերբ կապիտալները տրված են Հնդկաստանին կամ Չինաստանին, անհրաժեշտ է ուժեղ իշխանություն, վոր կարողանա չինացիներին և հնդիկներին հնազանդեցնել։

Բայց և հայրենիքում շահ ստանալու համար անհրաժեշտ է ուժեղ պետական իշխանություն, վորը ամբողջովին յենթակա յե ֆինանսիստների և արդյունաբերողների շահերին։ Յուրաքանչյուր պետություն անջրպետվում է վողջ աշխարհից բարձր մաքսերով։ Գերմանիայում մուծված հաճարի ամեն մի փթի համար սերով։ Գերմանիայում մուծված հաճարի ամեն մի փթի համար պետք է մաքս վճարել. դրանից ստացվում է բավական լավ ընծա կալվածատերերի համար. յեթե մաքսը չլիներ, նրանք ստիպված կլինեին իրենց հաճարը ավելի եժան գնով ծախելու։ Մաքսերից տուժում է բանվոր դասակարգը, վորը ավելի թանգ գներով է գնում թե հացը և թե այլ ապրանքները։ Ներկայումս գրեթե բոլոր ապրանքները բարձր մաքսերով են և ապահովում են կապիտալիստների մեծ շահերը։

1936—5

Սպառազինությունների աճումը.— Ինչ առաջ մենք համոզվեցինք, որ իմպերիալիզմի շրջանում կապիտալիստական պետությունների պայքարը անողորմ բնույթ է ստանում։ Պետական ծախքերի եւ ավելի մեծ բաժինը ընկնում է բանակի ու նավատորմիղի վրա։ Պատրաստվում են մեծ քանակությամբ հրացաններ, հրանոթներ, ռումբեր, գնդացիրներ, ռազմական այերոպլաններ։ Զարմանալու չէ, որ ռազմաարդյունաբերողները բոլոր յերկրներում պատերազմի յեն դրդում իրենց պետություններին, քանի որ պատերազմը ռազմաարդյունաբերությանը հսկայական շահեր է բերում։

Սպառազինությունների (կամ ինչպես ասում են միլիտարիզմի) աճումից ամենից շատ տուժում են աշխատավորական մասսաները։ Նրանք են, որ միջոցներ են տալիս ռազմական ծախքերի համար։ Կյանքի լավագույն տարիները անց են կացնում իմպերիալիստական բանակներում ծառայություն անելով՝ նրանց կամայականության և դազանակային դիսցիպլինայի ներքո։ Վերջապես, պատերազմի ժամանակ միլիոնավոր աշխատավորներ իրար սպանում են՝ մի բուռը կապիտալիստների շահերի համար կռվելով։

Դրա համար է, որ միլիտարիզմի աճման հետ միաժամանակ աճում է նաև լայն մասսաների վրդովմունքը ընդդեմ ռազմական ճնշումների։ Իմպերիալիստներին ավելի ու ավելի դժվար է լինում միլիոնավոր զինված աշխատավորներին—զինվորներին հնազանդության մեջ պահել։ Սակայն տեսակի տեխնիկական նորույթների միջոցով նրանք փորձում են սահմանափակել կենդանի մարդկային ուժի նշանակությունը ռազմական գործերում։ Տենդագին աշխատում է ռազմական քիմիան նորանոր թունավոր գազերի դյուտեր անելով։ Ուժեղանում է ավիացիան և արտիլլերիան։ Կապիտալիստները և նրանց հավատարիմ ծառաները յերազում են այնպիսի կարգերի հաստատումից, յերբ կարելի կլինի սաստիկ քայքայումներ առաջացնող կոճակները սեղմելու միջոցով պատերազմել։ Սակայն դրանք անհիմն յերազներ են։ Առանց հսկայական մարդկային մասսաների, մեր որերում պատերազմել չի կարելի։ Իսկ մասսաները ավելի ու ավելի հրաժարվում են հնազանդությունից։

3. ՊԱՏԵՐԱԶՄԸ ԳԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Իմպերիալիզմը պրոլետարական հեղափոխության նախորյակն է.—Իմպերիալիզմի շրջանում կապիտալիստական կարգերը անյելանելի վիճակում են լինում։ Վորոշ ժամանակի ընթացքում կապիտալը զարգացնելով տնտեսությունը, բարելավելով տեխնիկան, ավելացնում եր մարդկության հարստությունը։ Ամեն մեկը դիտե, որ մարդիկ այժմ ապրում են վոչ այնպես, ինչպես մի դար սրանից առաջ։ Այն ժամանակ չկային յերկաթուղիներ, հեռախոսներ, ավտոներ։ Ձեր կարելի ոդում թռչել, չկար ռադիո, վորը այժմ կարելի յե գտնել քիչ թե շատ մեծ դյուղերում։ Զկային և այժմյան ֆաբրիկաներն ու գործարանները իրենց հսկա մեքենաներով։ Կապիտալիստների ներքին պայքարի մրցակցության շնորհիվ խիստ առաջադիմում եր տեխնիկան։

Այժմ կոնկուրենցիային փոխարինում է մոնոպոլիան։ Մոնոպոլիստները հնարավորություն ունեն, առանց տեխնիկայի բարելավման, իրենց շահն ավելացնել գների բարձրացման միջոցով։ Բոլոր նոր մեքենաները չեն գործադրվում, քանի վոր այդ դեպքում հարկ կլիներ դեն գցելու հները և այդ շատ թանգ կնստեր խոշոր ձեռնարկությունների տերերին։

Իմպերիալիզմը անտանելի յե դարձնում մարդկության հոծ մասսաների կյանքը։ Իմպերիալիստական պատերազմները բնաջինջ են անում միլիոնավոր մարդկանց կյանքեր ծաղիկ հասակում և զարհուրելի դժոխք են դարձնում մյուս տասնյակ միլիոնների կյանքը։

Իմպերիալիզմի շրջանում կապիտալիստական կարգի բոլոր հակասությունները ծայրահեղ սուր բնույթ են ստանում ու մերկանում։ Իմպերիալիստական բռնությունը և սորկությունը տապալելու համար յերկու գլխավոր ուժեր են ասպարեզ իջնում։ Առաջինը՝ կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգն է, իսկ յերկրորդը՝ ոտար կապիտալից ճնշված գաղութների ժողովրդական մասսաները, վոր ընթանում են պրոլետարիատի ղեկավարությամբ։

Համաշխարհային ֆինանսական կապիտալի դեմ բարձրանում են համաշխարհային հեղափոխական պրոլետարիատն ու գաղութների ճնշված ժողովուրդները։

Միաժամանակ, իմպերիալիստական շրջանում, տնտեսությունը միանգամայն պատրաստված է սոցիալիստական հիմունքներով վերաշինելու համար։ Բազում սերունդների նախընթաց աշխատանքը այժմյան մարդկության համար պատրաստել է հրաշալական հարստություններ։ Այդ հարստությունները այժմ վայելում են կապիտալիստներն ու նրանց վոհմակները։ Սակայն այդ հարստությունները կարելի չէ ոգտագործել աշխատավոր մարդկության բարիքի համար։

Իմպերիալիզմը կյանքի չէ կոչում հսկայական, մինչև որս նիրհած հարստություններ։ Նա չերկրագնդի բոլոր չերկրները իրար է կապում ու անբաժանելի դարձնում։ Սակայն համաշխարհային աշխատակցության բոլոր արդյունքները իրագործելի չեն—չերկրների միջև անընդհատ ընդհարումներ ու պատերազմներ հարուցող իմպերիալիստական կարգերի տապալումից հետո միայն։

Միայն սոցիալիզմն է տալիս հետագա զարգացման, հետագա առաջխաղացության հնարավորություններ։ Միայն սոցիալիզմի որով հնարավոր է մարդու լայն իշխանություն բնության վրա։ Միայն սոցիալիզմը կարող է ապահովել աշխատավոր մասսաներին մարդու արժանավայել գոյություն։

Համաշխարհային պատերազմն ու նրա հետեվանքները.—*1914 թ. մինչև 1918 թ. տևած պատերազմը ժողովրդական մասսաներին անհաշիվ տանջանքներ պատճառեց։ Պատերազմին մասնակցող բոլոր չերկրներում զենքի էին կոչված 62 միլիոն մարդ։ Այդ պատերազմում սպանված մարդկանց թիվը հասնում է 10 միլիոնի. վիրավորների, ամբողջ կյանքում հաշմանդամ դարձածների թիվը հասնում է 24 միլիոնի։ Աշխարհի ամենածաղկած չերկրների հսկայական հարստությունները անմտաբար հոդս էին ցընդում։ Այդ պատերազմի ծախքերը հավասար են 1.200 միլիարդ մարկի։ Համեմատության համար ավելորդ չի լինի ասել, որ պատերազմի նախորյակին բոլոր պատերազմող չերկրների հարըստությունը միասին կազմում էր 2.400 միլիարդ մարկի։ Այսպիսով պատերազմը կլանել է մի գումար, որ հավասար է Եվրոպայի պատերազմող չերկրների բազում սերունդների ստրկական աշխատանքով հավաքած գումարի կեսին։*

«Այդ պատերազմը զուտ իմպերիալիստական պատերազմ էր, որ վարում էին և գերմանական, և անգլո-ֆրանսիական բուրժուազիան՝ ոտար չերկրները թալանելու, մանր ազգություններ խեղդելու, ամբողջ աշխարհի վրա ֆինանսական կապիտալի գերիշխանությունը հաստատելու համար, գաղութների բաժանման և վերաբաժանման համար, կործանվող կապիտալիստական կարգի փրկության համար՝ զանազան չերկրների բանվորներին հիմարացնելու և անջատելու միջոցներով»։

Պատերազմի սարսափները խիստ զգալի չեն բանվոր դասակարգին։ Դրա համար մենշևիկական դավաճանները վրկելով կապիտալիզմը պրոլետարական հեղափոխությունից, խաբում են բանվորներին, հավատացնելով, թե իմպերիալիզմի շրջանում հնարավոր է հետագա պատերազմների խուսափումն, և վոր իմպերիալիստական չերկրները կարող են միմյանց հետ համաձայնության գալ և բոլոր վիճելի հարցերը լուծել խաղաղ միջոցներով։ Սակայն իրոք, միայն կապիտալիզմի տապալումը կարող է մարդկությունը փրկել դուցե ավելի տևական ու սարսափելի հակաշխարհային սպանդանոցի կրկնությունից։ Բանի վոր իշխանությունը մի բուռն կապիտալիստական ձրիակերների ձեռքումն է—անխուսափելի չեն հետագա ընդհարումները՝ շուկաների և գաղութների բաժանման համար։ Վերջիվերջո այդ ընդհարումները պիտի տեղի տան հակառակորդին զինված ուժով «համոզելուն», այսինքն՝ պատերազմին։

Ժողովրդական մասսաները հիմարացնելու նպատակով ստեղծված է «Ազգերի լիգա» կոչված կազմակերպությունը, վորն աղաղակում է վիճելի հարցերի վորոշման «խաղաղ միջոցների» մասին, իսկ նրա գլխավոր մասնակիցները միևնույն ժամանակ կոտորում են անհնազանդ գաղութային բնակիչներին—Անգլիան՝ Զինաստանում, Ֆրանսիան՝ Աֆրիկայում։ Բոլոր չերկրների համաձայնողականները պաշտպանում են «Ազգերի լիգան», այդպիսով իմպերիալիստական դիշատիչներին ծառայություն մատուցելով։

Պատերազմից հետո ժողովուրդները մեացին կոտրած տաշտակի առաջ։ Պրոլետարական հեղափոխությունը հաղթեց միայն Ռուսաստանում, այլ չերկրներում բանվորները իշխանությունը նվաճելու հերոսական փորձեր են անում, վորոնք առայժմ ան-

հաջող են անցնում։ Անհաջողության պատճառները շատ են։ Արտահայտվում բուրժուազիան ավելի խորամանկ, միացած և ուժեղ եր, քան մեղանում, և ընդհակառակը՝ բանվորները պառակտված էին։ Չկար ուժեղ և փորձված հեղափոխական կուսակցություն։ Պրոլետարիատի շարքերը ճեղքում էին այն համաձայնողականները, որոնք պրոլետարիատին ուղղակի մատնում էին նրա մահացու թշնամի բուրժուազիային։

Կապիտալիզմի այժմյան ստաբիլիզացիան յեվ նրա հակասությունները.—Պրոլետարիատի հեղափոխական ապստամբությունները դաժանորեն ճնշելուց հետո, բուրժուազիան անցավ իր կոտրած տաշտակը կարկատելու գործին։ Պատերազմը խոշորագույն տնտեսական կորուստներ առաջացրեց։ Նա յերկրների մի՛ջև գոյություն ունեցող կապերը խորտակեց։ Պետք եր այս բոլորը նորից կարգի բերել։ Հաշտության առաջին տարիների ընթացքում այդ այնքան էլ չեր հաջողվում։ Մի շարք կարևորագույն յերկրներ բռնված էին տևական կրիզիսներով։ Միայն վերջին տարիների ընթացքում նկատվում է տնտեսական կյանքի բարելավումն։ Բուրժուազիան նկատելի հաջողություններ ունեցավ—արժեքազուրկ փողերը, պատերազմի այդ ծայր աստիճանի անհաճո ժառանգությունը—փոխարինվեցին կայուն դրամներով։ Վերջին յերկու տարվա ընթացքում ամբողջ աշխարհի կարևորագույն ապրանքների արտադրությունը նախապատերազմական չափերին հասավ։

Ի՞նչ գնով էին ձեռք բերված բոլոր այդ հաջողությունները։ Բանվոր դասակարգի նորանոր նեղումների գնով։ Պատերազմի հասցրած վերքերը բուժվում էին ի հաշիվ բանվորների լարված աշխատանքի և ցածր աշխատավարձի։ Պատերազմող յերկրներում բանվորների հետ միասին խիստ տուժեցին նաև մի՛ջին խավերը—գյուղացիությունը, մանր առևտրականները և ինտելիգենցիան։

Այսպիսով բուրժուազիային հաջողվեց առժամանակ նորից ամրացնել իր գերիշխանությունը։ Այժմ նրա դրությունը այնպես խախուտ չէ, ինչպես յետպատերազմյան առաջին տարիների ընթացքում։ Կա վորոշ ստաբիլիզացիա (այսինքն քիչ թե շատ կայուն վիճակ) կապիտալիզմի։ Այս ստաբիլիզացիան չի նշանակում, սակայն, համաշխարհային կապիտալիզմի տևական

և լուրջ ամրապնդումը։ Նա յերկարակյաց չէ։ Մեր ժամանակը կապիտալիզմի պարտության և պրոլետարական հեղափոխությունների հաղթության ժամանակ է։ Կապիտալիստական ստաբիլիզացիան կրում է իր մեջ շատ հակասություններ, վորոնք վերջ ի վերջո պիտի նրան տանեն դեպի պարտություն ու կորուստ։

Պատերազմից հետո ավելի ուժեղ կերպով, քան առաջ, զգվում է կապիտալիստական յերկրների զարգացման անհամաչափությունը։ Ամեն վոք գիտե, վոր կապիտալիզմը բոլոր յերկրներում միաժամանա՛կ չէ առաջ յեկել։ Միայն աստիճանաբար կապիտալիստական կարգը ընդգրկում է մի յերկիրը մյուսի յետևից։ Ավելի յերիտասարդ յերկրները հին յերկրներին և հաճախ իրենց զարգացմամբ ավելի առաջ են անցնում։ Այսպես, Գերմանիան և Ամերիկան (Միացյալ Նահանգները) դեռ նախապատերազմյան շրջանում առաջ էին անցել Անգլիայից և Ֆրանսիայից։ Առանձին յերկրների զարգացման անհամաչափությունը շատ ուժեղանում է իմպերիալիզմի շրջանում։ Հին յերկրներում տնտեսությունը սկսում է նեխվել, կանգ են առնում շարժումն ու զարգացումը։ Ավելի յերիտասարդ պիշնները ձգտում են գրավել առաջնակարգ տեղերը։ Այս հողի վրա անխուսափելի յեն դեպի պատերազմը տանող ընդհարումները։ Պատերազմն էլ, իր հերթին, մի քանի յերկրների տնտեսական կյանքը կասեցնում է, իսկ այլ յերկրներինը՝ ուժեղացնում։ Առանձին յերկրների զարգացումը կատարվում է, ասես թե, վոստյուններով։

Առանձին յերկրների զարգացման անհամաչափությունը յետպատերազմական տարիների ընթացքում դրսևորվում է առանձնապես վառ ու պարզորեն։ Պատերազմից ամենից շատ շահվեց Ամերիկան։ Նա ամենից շատ ոգտվեց ուրիշների կռվից։ Առաջ Ամերիկան պարտ եր մյուս յերկրներին, գլխավորապես Անգլիային։ Հիմա գրեթե վողջ աշխարհն է Ամերիկային պարտ, դրանց թվում և Անգլիան։ Ամերիկայի արդյունաբերության մի շարք ճյուղեր այժմ մեկ և կես անգամ ավելի յեն արտադրում, քան պատերազմից առաջ, իսկ մի քանի տեսակի ապրանքներ յերկու անգամ ավելի յեն արտադրվում։ Սակայն խիստ պակասեց Անգլիայի արտադրությունը, վորը պատերազմից առաջ համաշխարհային տնտեսության մեջ առաջին տեղն եր բռնում։

հաջող են անցնում։ Անհաջողության պատճառները շատ են։ Արտասահմանում բուրժուազիան ավելի խորամանկ, միացած և ուժեղ եր, քան մեզանում, և ընդհակառակը՝ բանվորները պառակտված էին։ Չկար ուժեղ և փորձված հեղափոխական կուսակցություն։ Պրոլետարիատի շարքերը ճեղքում էին այն համաձայնողականները, որոնք պրոլետարիատին ուղղակի մատնում էին նրա մահացու թշնամի բուրժուազիային։

Կապիտալիզմի այժմյան ստաբիլիզացիան յեվ նրա հակասությունները.—Պրոլետարիատի հեղափոխական ապստամբությունները դաժանորեն ճնշելուց հետո, բուրժուազիան անցավ իր կոտրած ուշտակը կարկատելու գործին։ Պատերազմը խոշորագույն անտեսական կորուստներ առաջացրեց։ Նա յերկրների մինչև դոյությունն ունեցող կապերը խորտակեց։ Պետք եր այս բոլորը նորից կարգի բերել։ Հաշտության առաջին տարիների ընթացքում այդ այնքան էլ չեր հաջողվում։ Մի շարք կարևորագույն յերկրներ բռնված էին տևական կրիզիսներով։ Միայն վերջին տարիների ընթացքում նկատվում է տնտեսական կյանքի բարելավումն։ Բուրժուազիան նկատելի հաջողություններ ունեցավ—արժեքազուրկ փողերը, պատերազմի այդ ծայր աստիճանի անհաճո ժառանգությունը—փոխարինվեցին կայուն դրամներով։ Վերջին յերկու տարվա ընթացքում ամբողջ աշխարհի կարևորագույն ապրանքների արտադրությունը նախապատերազմական չափերին հասավ։

Ի՞նչ գնով էին ձեռք բերված բոլոր այդ հաջողությունները։ Բանվոր դասակարգի նորանոր նեղումների գնով։ Պատերազմի հասցրած վերքերը բուժվում էին ի հաշիվ բանվորների լարված աշխատանքի և ցածր աշխատավարձի։ Պատերազմող յերկրներում բանվորների հետ միասին խիստ տուժեցին նաև մինչև խավերը—դյուղացիությունը, մանր առևտրականները և ինտելիգենցիան։

Այսպիսով բուրժուազիային հաջողվեց առժամանակ նորից ամրացնել իր գերիշխանությունը։ Այժմ նրա դրությունը այնպես խախուտ չէ, ինչպես յետպատերազմյան առաջին տարիների ընթացքում։ Կա վորոշ ստաբիլիզացիա (այսինքն քիչ թե շատ կայուն վիճակ) կապիտալիզմի։ Այս ստաբիլիզացիան չի նշանակում, սակայն, համաշխարհային կապիտալիզմի տևական

և լուրջ ամրապնդումը։ Նա յերկարակյաց չէ։ Մեր ժամանակը կապիտալիզմի պարտության և պրոլետարական հեղափոխությունների հաղթության ժամանակ է։ Կապիտալիստական ստաբիլիզացիան կրում է իր մեջ շատ հակասություններ, վորոնք վերջ ի վերջո պիտի նրան տանեն դեպի պարտություն ու կորուստ։

Պատերազմից հետո ավելի ուժեղ կերպով, քան առաջ, դրսևորվում է կապիտալիստական յերկրների զարգացման անհամաչափությունը։ Ամեն վոք գիտե, վոր կապիտալիզմը բոլոր յերկրներում միաժամանակ չէ առաջ յեկել։ Միայն ստիճանաբար կրներում միաժամանակ չէ առաջ յեկել։ Միայն ստիճանաբար կապիտալիստական կարգը ընդգրկում է մի յերկիրը մյուսի յետևից։ Ավելի յերիտասարդ յերկրները անոյան են դառնում հին յերկրներին և հաճախ իրենց զարգացմամբ ավելի առաջ են անցնում։ Այսպես, Գերմանիան և Ամերիկան (Միացյալ Նահանգները) դեռ նախապատերազմյան շրջանում առաջ էին անցել Անգլիայից և Ֆրանսիայից։ Առանձին յերկրների զարգացման անհամաչափությունը շատ ուժեղանում է իմպերիալիզմի շրջանում։ Հին յերկրներում անտեսությունը սկսում է նեխվել, կանգ են առնում շարժումն ու զարգացումը։ Ավելի յերիտասարդ գիշատիչները ձգտում են դրավել առաջնակարգ տեղերը։ Այս հողի վրա անխուսափելի յեն դեպի պատերազմը տանող ընդհարումներ։ Պատերազմն էլ, իր հերթին, մի քանի յերկրների տնտեսական կյանքը կասեցնում է, իսկ այլ յերկրներինը՝ ուժեղացնում։ Առանձին յերկրների զարգացումը կատարվում է, ասես թե, վոստյաններով։

Առանձին յերկրների զարգացման անհամաչափությունը յետպատերազմական տարիների ընթացքում դրսևորվում է առանձնապես վառ ու պարզորեն։ Պատերազմից ամենից շատ շահվեց Ամերիկան։ Նա ամենից շատ ոգտվեց ուրիշների կռվից։ Առաջ Ամերիկան պարտ եր մյուս յերկրներին, գլխավորապես Անգլիային։ Հիմա գրեթե վողջ աշխարհն է Ամերիկային պարտ, դրանց թվում և Անգլիան։ Ամերիկայի արդյունաբերության մի շարք ճյուղեր այժմ մեկ և կես անգամ ավելի յեն արտադրում, քան պատերազմից առաջ, իսկ մի քանի տեսակի ապրանքներ յերկու անգամ ավելի յեն արտադրվում։ Սակայն խիստ պակասեց Անգլիայի արտադրությունը, վորը պատերազմից առաջ համաշխարհային տնտեսության մեջ առաջին տեղն եր բռնում։

Անգլիական կապիտալիստները չվում են արտասահման, ուր նրանք ավելի չեն շահ ստանում, քան թե իրենց հայրենիքում։ Անգլիան ավելի ու ավելի չե դառնում վաշխառու յերկիր, և արդյունաբերության մի շարք կարևորագույն ճյուղեր—մանավանդ ածխային արդյունաբերությունը—մնում են կայուն վիճակում, իսկ ախոյան երկրները հառաջադիմում են։

Վերջին յերեք-չորս տարվա ընթացքում առանձնապես արագ և հառաջադիմում Գերմանիան։ Համաշխարհային պատերազմում Գերմանիան կոտորված եր և հաղթված։ Գերմանիայի վրա դրված եր հսկայական, ուժից վեր հարկ։ Սակայն Գերմանական Բուրժուազիան կարողացավ ռազմական քայքայման վողջ ծանրությունը աշխատավորների ուսերին դնել*)։ Հաղթողներին այդ հարկը նա համարյա թե չեր վճարում, պատճառաբանելով իր յերկրի ծայր աղքատությունը։ Այդ հարկի ստացումը շատ տարիների ընթացքում անվերջ ձգձգվում եր. ֆրանսիական կառավարությունը յերկար ամիսների ընթացքում իր զորքերով գրավել եր Գերմանիայի կարևորագույն ածխային շրջանը՝ Ռուրը, այն նպատակով, որ Գերմանացիներին ստիպե վճարելու։

Վերջապես հաղթողները համաձայնվեցին Գերմանիայի հարկի վճարման հետաձգելուն, իսկ Ամերիկան տվեց խոշոր փոխառություններ տնտեսությունը վերականգնելու համար։ Գերմանական բուրժուազիան շատ մեծ համառությամբ ողտագործեց այդ ընդմիջումը։ Կարճ ժամանակվա ընթացքում ահագին աշխատանք կատարվեց՝ ամերիկական տեխնիկան և աշխատանքի ամերիկյան մեթոդները գերմանական արդյունաբերությանը պատվաստելու։ Մեծ անողոք ռացիոնալիզացիա կատարվեց, վորը փողոց շպրտեց հարյուր հազարավոր բանվորների։ Բանվոր դասակարգի արած մեծ զոհողությունների գնով գերմանական բուրժուազիան շոշափելիորեն պակասեցրեց ինքնարժեքը և նորից ձգտում է պատերազմի ժամանակ ուրիշների ձեռքն անցած սպառման շուկաները վերստին նվաճել, իրեն վերադարձնել։

---

*) Այդ հարկին «ռեպարացիոն վճարներ» անունն եր տրված, այսինքն վճարներ, վորոնցով իբրև թե պիտի վերականգնվեր այն ամենը, ինչ վոր գերմանացիք վոչնչացրել էին պատերազմի ժամանակ։

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

1. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

Պրոլետարիատը իր հեղափոխական պայքարի ժամանակ ընդհարվում է վոչ միայն առանձին կապիտալիստների հետ։ Նա ընդհարվում է նաև պետական իշխանության հետ, վորը կապիտալիստների դասակարգի շահերն է պաշտպանում։ Աշխատանքի և կապիտալի յուրաքանչյուր լուրջ ընդհարման ժամանակ, կապիտալիստական հասարակության մեջ բանվոր դասակարգը համոզվում է, վոր պետական իշխանությունը անցնում է կապիտալիստների կողմը՝ հանդեպ բանվորների։ Բուրժուազիայի հետ դասակարգային պայքար վարելու փորձից նա համոզվում է, վոր այդ պայքարում պետական իշխանությունը ամենևին «չեզոք» չե, և ընդհակառակը, դասակարգային պայքարում նա բուրժուազիայի ամենազորեղ գործիքն է։ Բուրժուական պետությունը կարող է «մեղմել» ընդհարումը՝ միայն բուրժուազիայի կողմից պրոլետարիատի ճնշումը ուժեղացնելով և ամրապնդելով։ Պետությունը չի յել կարող դասակարգային պայքարից վեր լինել, քանի վոր ինքը դասակարգային հակասությունների անհաշտության արդյունք է։ Պետությունը վորոշ դասակարգի իշխանության որգանն է, դասակարգի, վորը չի կարող հաշտվել իրեն ներհակ դասակարգի հետ (Լենին)։ Բուրժուական պետությունը մշտապես հանդիսանում է բուրժուական դասակարգի լոկ կամակատարը։

Տիրող դասակարգի նպատակները և շահերին համապատասխան կառուցվում է պետական ապպարատը։ Կապիտալիզմի պայմաններում պետական ամեն տեսակի հիմնարկությունների—դատարանների, վոստիկանության, բանտերի և բանակից կազմված ապպարատը ամբողջովին ի սպաս է դրված

կապիտալի շահերին։ Պետության վողջ մեքենան աշխատում է ընդդեմ վոտքի կեղնող պրոլետարական դասակարգի։ Կապիտալիզմի իշխանության հաստատման և նրա շահերի պահպանության համապատասխան՝ հավաքվում են բանակի կադրերն ու գրվում են որենքները։

Վերցնենք յուրաքանչյուր կապիտալիստական յերկրի դատարանը։ Նրա հիմնական նպատակն է գոյություն ունեցող կապիտալիստական շահագործության կարգի պահպանումը։ Բրեական գործերի բնագավառում դատարանի նպատակն է մասնավոր սեփականության բացարձակ պահպանումը. մասնավոր սեփականությունը կապիտալիզմի կարևորագույն հիմքերից մեկն է և բուրժուական սեփականության խախտումը առանձնապես խստորեն պատիժներ է կրում։ Բացի այդ, դատարանը հետապնդում է բոլոր հեղափոխականներին, բոլոր գործադուլների մասնակիցներին, կապիտալիզմին թշնամական յելույթների և ցույցերի մասնակիցներին, ամբողջովին կատարելով տիրող դասակարգի կամքը։

Նույն նպատակին են ծառայում վոստիկանությունը, ժանդարմները, շպիոնաժը վարող ոխրագործ։ Կալվածատերերի դեմ բարձրացող հեղափոխական բանվորների և գյուղացիների դեմ պայքարելիս գործի յեն կանգնում զորքերը։ Նույնիսկ այն դեպքերում, ուր, շնորհիվ ընդհանուր զինվորական պարտականության, զինվորների մասսան բաղկացած է բանվորներից և գյուղացիներից, բանակը ծառայում է շահագործիչ տիրող դասակարգին, վորովհետև բանակում մտցված է դաժանագույն դիսցիպլինա և անողոք պայքարում են զինվորների գիտակցական քաղաքական ակտիվության դեմ։ Բանակում զեկավարի դերը պատկանում է հրամանատարական կազրերին, վորոնք իրենց ունեցած արտոնություններով, կրթությամբ և դասակարգային ընտրությամբ սերտ կապված են տիրող դասակարգի հետ։ Այդ հրամանատարական կադրերի ոգնությամբ բանակում տարածվում են հայրենասիրություն ու շովինիզմը, վորոնք զենքի կոչված բանվորների ու գյուղացիների գիտակցությունն են մթագնում։ Այդպիսի դեր են կատարում և պետական մեքենայի այլ մասերը։

«Բանի վոր պետությունը առաջացել է այն պահանջից, վոր դասակարգերի ներհակությունը սանձի տակ պահվի, քանի

վոր նա առաջացել է այդ դասակարգերի ընդհարումներից, հետևապես՝ նա հանդիսանում է ամենազորեղ, տնտեսապես տիրող դասակարգի պետությունը, մի դասակարգի, վորը պետության ոգնությամբ նույնպես դառնում է քաղաքականորեն տիրող դասակարգ և այսպիսով նոր միջոցներ է ձեռք բերում՝ ճնշված դասակարգին ընկճելու և շահագործելու համար» (Ենգելս)։

Պետությունը միշտ ել տիրող դասակարգի ձեռքում բռնության գործիք է հանդիսանում։ Սակայն բուրժուական հասարակության մեջ, ինչպես և ամեն մի հասարակության մեջ, ուր իշխանությունը շահագործող դասակարգերին է պատկանում, նա չնչին փոքրամասնության համար բռնության գործիք է հանդիսանում՝ հանդեպ այդ հասարակության ճնշող մեծամասնության։ Այդ պատճառով է, վոր բուրժուազիան սոսկ բռնությամբ յերկար ժամանակ չի կարող իշխանությունը իր ձեռքում պահել, նա պահում է իշխանությունն իր ձեռքում նրանով, վոր իրեն ի նպաս է դնում մասսաների վրա գաղափարական ազդեցության բոլոր միջոցները, բուրժուազիայի իշխանության դասակարգային բնույթը քողարկելու նպատակով համոզելով աշխատավորներին, վոր բուրժուական կարգերը հավերժական են, վոր աշխատավորները վատ են ապրում վոչ թե շնորհիվ կապիտալիստական հասարակական հարաբերությունների գոյության, այլ ուրիշ պատճառներով։ Այդ գործին և ծառայում աշխատավորների գիտակցությունը բթացնող, համբերություն և հնազանդություն քարոզող կրոնը. այդ նպատակին է ծառայում և դպրոցը, վոր մանկանց և յերիտասարդության գլուխները լցնում է հայրենասիրության և շովինիզմի մտքերով, այսինքն հայացքներ, վոր իբր թե բուրժուազիայի շահերը ամբողջ ազգի, ամբողջ ժողովրդի շահերն են հանդիսանում։ Լրագրները, գիտությունը, արվեստը, մասսաների վրա գաղափարական ազդեցություն գործելու բոլոր միջոցները բուրժուազիան իրեն ի սպաս և դնում մասսաներին հիմարացնելու, կապիտալիստական աշխարհը իրրև (աշխարհներից լավագույնը) փառաբանելու գործում։

Դրա հետ միասին, յուր մամուլի, յուր դպրոցների և համալսարանների, յուր գիտության և արվեստի միջոցով բուրժուազիան բոլոր միջոցներով աշխատում է հավատացնել բանվորներին և գյուղացիներին, վոր իշխանությունը կապիտալիս-

տական յերկրներում պատկանում է վոչ միայն իրեն բուրժուազիային, այլ ամբողջ ժողովրդին, վոր միայն կապիտալիստական յերկրներում գոյություն ունի իսկական դեմոկրատիա (ժողովրդավարություն), վոր կապիտալիստական յերկրներում իշխանությունը վոչ թե բռնությամբ է պահվում, այլ ամբողջ ժողովրդի կամավոր հոժարությամբ։ «Ձե՞ վոր պարլամենտի ընտրություններում — ասում են բուրժուական դրչակները բանվորներին և գյուղացիներին—մասնակցում են վոչ միայն կապիտալիստները, այլ և բանվորներն ու գյուղացիները։ Ժողովրդի ընտրած պարլամենտը նշանակում և այնպիսի կառավարություն, վորը կառավարում է յերկիրը պարլամենտի սահմանած որենքների համաձայն, իր ամեն մի քայլի համար կառավարությունը հաշվետու յե պարլամենտի առաջ։ Ասել է, վողջ իշխանությունը պատկանում է պարլամենտին, իսկ պարլամենտը ընտրված է ամբողջ ժողովրդի կողմից։ Ասել է, մենք ունենք իսկական, ղուտ դեմոկրատիա, և վոչ թե դասակարգային պետություն։ Այնպես չե, ինչպես ԽՍՀ Միության մեջ, վորտեղ իրոք դասակարգային պետություն կա, այնտեղ պրոլետարիատի դիկտատուրան է, այնտեղ իշխանությունը հիմնված է բռնության վրա, այնտեղ չկա իսկական դեմոկրատիա»։

Նման խոսքերով մասսաներին խաբելը ամենաբիրտ միջոցներից մեկն է։ Պարլամենտը ընտրվում է «ժողովրդի կողմից», բայց չխոսելով նույնիսկ բուրժուական յերկրների ընտրությունների մեխանիկայի, ամեն տեսակ խաբեբայությունների, ահաբեկության, անհաճո ցուցակների վոչնչացման և այլն նման հանգամանքների մասին, բավական է հիշել միայն, վոր պարլամենտը միայն քննության և առնում հարցերը, իսկ յերկիրը կառավարում և պետական ապպարատը, վորի ամենազոր բյուրոկրատիան կազմված է տիրող դասակարգերից և իր ձեռքերումն է կենտրոնացնում բանակի ու վոստիկանության հրամանատարական դիրքերը։ Բուրժուական յերկրներում պարլամենտը միայն այն ժամանակ է իշխանություն հանդիսանում, յերբ այդ ձեռնտու յե շահագործողների դասակարգին։ Յեթե պարլամենտը մի վորևե կետում հակասում է բուրժուազիայի շահերին, կամ տվյալ մոմենտին ուղղակի ծանրաբեռնում է բուրժուազիային, վորը ուժեղ իշխանության կարիք ունի, իսկույն գինվորի կրունկի

հարվածն է իջնում նրա գլխին և ցույց է տալիս պարլամենտի իսկական դերը։ Բանի-քանի դեպքեր գետե պատմությունը յերբ ցրիվ են տրվել պարլամենտները, և ամեն անգամ այդ նշանակել է, վոր վոչ թե պարլամենտին է պատկանում իշխանությունը, այլ նրանց, ովքեր իրենց ձեռքերում են պահում գործարանները ու ֆաբրիկանները, յերկաթուղիները ու բանկերը, ովքեր պետական ապպարատի, բանակի, վոստիկանության և դատարանների հրամանատարական դիրքերն են գրավում։ Բուրժուազիային ձեռնտու յե, վոր բանվորների և գյուղացիների մասսաները հավատան պարլամենտի ամենազորության, քանի վոր այդպիսի հավատը մասսաներից ծածկում է պետության և իշխանության դասակարգային բնույթը, շահագործվողներից քողարկում է նրանց գլխավոր թշնամուն, դյուրացնում է կապիտալիստների համար մասսաների շահագործումը։ Բավական և բուրժուական իշխանության մի թեթև յերերում, վորպեսզի բուրժուազիան ինքը առաջինը յերես դարձնի իր որինականությունից, պարլամենտարիզմից և դեմոկրատիայից։ Նա մոցնում է գինվորական դրություններ, արտակարգ որենքներ, վերացնում է ամեն տեսակի ազատություններ, ցրում է պարլամենտները, բացարձակապես ցուցադրելով բուրժուական դեմոկրատիայի իսկական գինը։ Այն ժամանակ բոլորի համար բացարձակապես պարզվում է, վոր բուրժուական յերկրներում, ուր կապիտալիստական արտադրության ձևն է տիրում, քաղաքական իշխանությունը իր ձեռքումն է պահում կապիտալիստների դասակարգը և վոր այդ իշխանությունը վոչ մի որենքով սահմանափակված չե, և վոր նա հիմնված է բռնության վրա, և վոր նա բուրժուազիայի դիկտատուրան է։ Բուրժուազիան այս ճշմարտությունը աշխատում է ամեն կերպ թագցնել, քանի վոր ինքը կազմում է բնակչության չնչին փոքրամասնությունը, քանի վոր այդ դիկտատուրան ուղղված է բնակչության հսկայական մեծամասնության դեմ՝ հոգուտ չնչին փոքրամասնության շահերի։

Ընդհակառակը, պրոլետարիատի դիկտատուրան բացարձակապես հայտարարում է, վոր ուղղված է բնակչության չնչին փոքրամասնությունը կազմող շահագործողների դեմ՝ ճնշող մեծամասնության շահերի պաշտպանության համար։

Բուրժուազիան խափում է մասսաներին խոսելով ապադասակարգային դեմոկրատիայի հնարավորության մասին, յերբ «գայլերը կուշտ կլինեն, իսկ վոչխարները վողջ»։ Իրականության մեջ այդպիսի ապադասակարգային, «զուտ» դեմոկրատիա չի կարող լինել։ Բուրժուազիայի իշխանության որոք, նրա դիկտատուրայի ժամանակ կարող և գոյություն ունենալ միմիայն բուրժուական դեմոկրատիա, և միայն այն սահմաններում և այն չափով, ինչ չափով վոր չեն սպառնում բուրժուազիայի իշխանությանը։ Պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ գոյություն ունի պրոլետարական դեմոկրատիա, վոր անհամեմատ բարձր է «դեմոկրատիկ» բուրժուական դեմոկրատիայից, թեկուզ նրանով, վոր նա բանվորների և գյուղացիների լայն մասսաներին մասնակից է անում կառավարչության գործում։

Կապիտալիստների դեմ վարած պայքարում պրոլետարիատը իսկույն ընդհարվում է պետական գործող իշխանության հետ, վորը ունի պրոլետարիատի դեմ ուղղված բռնության և հարկադրության բոլոր միջոցները։ Դրա համար պրոլետարիատի հեղափոխական պայքարը վերածվում է տիրող դասակարգի իշխանության տապալման պայքարի, և իշխանության հարցը դառնում է դասակարգային պայքարի կենտրոնական հարց։ Իշխանությունը նվաճելով, պրոլետարիատը չի կարող գործ դնել բուրժուական պետական մեքենան և այդ մեքենան ոգտագործել իր նպատակների համար, քանի վոր նա ամբողջովին, վերից վար, իր բոլոր ճյուղավորումներով, իր կադրերի վողջ կազմով, իր բոլոր մեթոդներով հարմարեցված է միայն կապիտալիստների շահերին ծառայելու և շահագործվող դասակարգերի դիմադրությունը ճնշելու համար։ Պրոլետարիատը պետք է կոտրի, ջարդ ու փշուր անի հին պետական մեքենան և ստեղծի պետության նոր տիպ։ Կապիտալիզմին վոխարինող նոր հասարակակարգը միանգամից չի ստեղծվում։ Բանվոր դասակարգը ստիպված է լինում քայլ առ քայլ հաղթահարել ներքին բուրժուազիայի դիմադրությունը, իր նվաճումները պաշտպանել շրջապատի կապիտալիստական պետություններից ու վերափոխել վողջ անտեսական ու հասարակական սիստեմը։

Պրոլետարիատի դիկտատուրան պրոլետարական հեղափոխության գործիքն է։ Բուրժուազիայի իշխանությունը կարելի է տապալել և առանց պրոլետարիատի դիկտատուրայի։ Սակայն հեղափոխության հետագա հաջողություններն ապահովել, ամրապնդել, անմատչելի անել բուրժուական վոտնձգությունների դեմ — անհնար է՝ առանց պրոլետարիատի դիկտատուրայի, վորը հեղափոխությունն ավարտելու միջոցն է։

Պրոլետարիատի դիկտատուրայի առաջին պարտականությունն է՝ ճնշել բուրժուազիայի դիմադրությունը, խորտակել նրա ամեն մի փորձը՝ իշխանությունը վերադարձնելու։ Դրա համար պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ չեն կարող գոյություն ունենալ պրոլետարիատին թշնամի կազմակերպություններ, հակապրոլետարական պրոպագանդ մղող և բուրժուազիային քաղաքական իրավունքներ վերապահող կազմակերպություններ։ Տապալված բուրժուազիան չի դադարում ընդդիմանալ, ընդհակառակը, նրա՝ դեպի բանվոր դասակարգն ունեցած տեսակետը տասնապատկվում է, նա դեռ ուժեղ է շնորհիվ իր միջազգային կապերի, արտասահմանյան բուրժուազիայի ոգնության, ունեցած կրթության առավելությունների, պետական գործերը վարելու հմտության և այլն։

Պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը չի վերացնում դասակարգային պայքարը։ Ընդհակառակը, պրոլետարիատի դիկտատուրան դասակարգային ավելի դաժան և լարված պայքարի ձևերից մեկն է հանդիսանում։ «Առաջին լուրջ պարտությունից հետո տապալված շահագործողները, վորոնք իրենց պարտությունը չեյին սպասում, չեյին հավատում վոր իրենք պարտված են, այդ մասին նույնիսկ չեյին էլ մտածում — տասնապատկված էներգիայով, կատաղի կրքով, հարյուրապատկված տեսնելու համար կորցրած «դրախտը» վերադարձնելու համար, իրենց ընտանիքների համար, վոր այնքան լավ եյին ապրում և վորոնց հասարակ ամբոխը դատապարտել է կորստյան ու աղքատության (և կամ «հասարակ աշխատանքի»)։ (Լենին)։

Բուրժուազիայի պայքարը պաշտպաններ է գտնում հանձին այսպես կոչված «սոցիալիստական» կուսակցությունների, սոց.-դեմոկրատների, սոցիալիստ-հեղափոխականների (մենշևիկների և եսերների)։ բուրժուազիայի հետ ուղիղակի համաձայնած այդ կուսակցությունները պրոլետարիատի դիկտատուրան ավելորդ են համարում և պայքարում են նրա դեմ։ Եսերները Լենինի դեմ

մահափորձ կազմակերպեցին, մասնակցում էին Յարոսլավլի և Կրոնշտադտի ապստամբության, սպիտակ-գվարդիական կառավարությունների մեջ։ Մենշևիկները փորձեցին բանվորական շարժում առաջ բերել խորհրդային իշխանության դեմ, նրա դեմ պրոպագանդ էին մղում, մասնակցում էին կերենսկու բուրժուական կառավարության և հակա-հեղափոխական կազմակերպությունների մեջ։

Չնայած ապստամբությունները ճնշող կարմիր բանակի, հակահեղափոխական դավադրությունները կասեցնող Միացյալ Պետական Քաղաքական Վարչության, խորհրդային իշխանության դեմ ուղղված ամենայն փորձերը դատապարտող հեղափոխական դատարանի ոգնությամբ—պրոլետարիատի դիկտատուրան ջախջախում և շահագործող դասակարգերի ուժը և սոցիալիստական շինարարության պայմաններ ստեղծում։

Սակայն պրոլետարիատի դիկտատուրան չի կարող սահմանափակվել բուրժուազիայի քաղաքական խորտակումով։ Եթե բուրժուազիան իր ձեռքում պահեր ֆաբրիկաներն ու գործարանները, տրեստներն ու բանկերը—բանվոր դասակարգը չէր կարող իր իշխանությունը յերկար պահել։ Տնտեսական գերակշռումը այն ժամանակ կլիներ հոգուտ բուրժուազիայի։

Վերցնենք ամենադաժան քաղաքացիական կռվի շրջանը։ Միանգամայն պարզ է, որ յեթե կապիտալիստների ձեռքում լինեին ֆաբրիկաներն ու գործարանները և նրանց պատկանային բանկերը, պրոլետարիատի դիկտատուրան իր դասակարգային թշնամու դեմ պայքարելու համար ուղղակի զուրկ կլիներ նյութական միջոցներից։

Դրա համար պրոլետարիատի դիկտատուրան յենթադրում է ֆաբրիկաները, գործարանները, յերկաթուղիները և բանկերը դարձնել պետական սեփականություն (ազգայնացում)։ Քանի որ չսահմանափակված և մասնավոր մարդկանց ձեռքում գտնվող առևտուրը արտահանման հետ՝ տնտեսական գերակշիռ ունեցող միջազգային կապիտալի ձեռքում կարող եր պրոլետարիատի դիկտատուրայի վրա ազդելու գործիք հանդիսանալ—բանվոր դասակարգը հաստատում է նաև արտաքին առևտրի մոնոպոլիա։ Արտադրության միջոցների և հողի, յերկաթուղիների և բանկերի ազգայնացումը, նաև արտաքին առևտրի մոնոպոլիան պրոլետա-

րիատի զարգացման և կառավարելու տնտեսական պայմաններն են հանդիսանում։

Սակայն պրոլետարիատի դիկտատուրան վոչ միայն շահագործող դասակարգերի ճնշման որգան է հանդիսանում։ Բացի պրոլետարիատից և բուրժուազիայից կան էլի աշխատավորական մասսաներ, վորոնք այդ յերկու դասակարգերի միջև միջին տեղ են գրավում։ Նրանց թվում են ուրիշների աշխատանքը չշահագործող գյուղացիները, նաև տնայնագործները, արհեստավորները և այլն։ Նրանց վերաբերմամբ այլ նպատակներ ունի պրոլետարիատի դիկտատուրան։ Պրոլետարիատի դիկտատուրան ճնշում է բուրժուազիային, իսկ մանր սեփականատերերին նա նպատակ ունի վերափոխելու—նրանց տնտեսությունը տանելու սոցիալիստական զարգացման հունով, գործնականորեն ցույց տալով սոցիալիստական տնտեսության առավելությունները։ Դրա համար մանր սեփականատերերի, մանր ապրանք-արտադրողների վերաբերմամբ, վորոնց տիպիկ ներկայացուցիչն է հանդիսանում միջակ գյուղացիությունը — պրոլետարիատի դիկտատուրան անհրաժեշտ է համարում նրանց հետ կայուն դաշն կապելը, այդ դաշինքի մեջ ապահովելով պրոլետարիատի ղեկավար դերը՝ սոցիալիստական տնտեսություն կառուցելու նպատակով։ Պրոլետարիատի և գյուղացիության հարաբերությունները հսկայական դեր են կատարում՝ շնորհիվ այն դրության, վոր ունի գյուղացիությունը դասակարգերի ընդհանուր դասավորման մեջ։

Ըստ իր կազմի, գյուղացիությունը միատարը դասակարգ չի հանդիսանում։ Գյուղացիության մեջ յեղած շերտավորումները հեղափոխության տարբեր շրջաններում տարբեր վերաբերմունք են արտաբերում։ Դրա համար և, վոր հեղափոխության տարբեր շրջաններում մեր յերկրում փոխվում էին բանվոր դասակարգի և գյուղացիության փոխհարաբերությունները։ Առաջին շրջանում—ցարիզմի և կալվածատիրական հողատիրության դեմ մղվող պայքարի շրջանում—մենք նպատակ ունեինք բանվոր դասակարգից և ամբողջ գյուղացիությունից միասնական ֆրոնտ ստեղծել ընդդեմ կալվածատերերի և ցարական ռեժիմի։ Յերկրորդ շրջանում—պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման և ամրապնդման պայքարի շրջանում—մեր նպատակն եր բանվոր դասակարգի և չքավոր գյուղացիության միասնական ֆրոնտ ստեղ-

ծելը ընդդեմ կալվածատերերի և կուլակների, աշխատելով չեզոքացնել միջակ գյուղացիությունը, քանի վոր այդ շրջանում չեր կարելի միջակ գյուղացիության հետ դաշնադիր լինել։ Այդ հնարավոր դարձավ միայն բանվոր դասակարգի իշխանության ամրապնդումից հետո։ Պրոլետարիատի իշխանության զորացումից հետո մեր նպատակն է բանվոր դասակարգի և չքավոր գյուղացիության ու միջակ գյուղացիության միությունը։ «Պետք է գիտենալ համաձայնության գալ միջակ գյուղացիության հետ, վոչ մի րոպե չհրաժարվելով կուլակի դեմ պայքար մղելուց և ամուր հենվելով միայն չքավորության վրա»։

Միջակ գյուղացիությունը հանդիսանում է գյուղացիության հիմնական մասսան։ Գյուղատնտեսական տեխնիկայի հետամնացության շնորհիվ նա ունի համեմատաբար ավելի ամուր տնտեսական արմատներ և դեռ շատ ժամանակ, պրոլետարական հեղափոխության առաջին շրջանից հետո, կարող է մնալ։ Այստեղից անհրաժեշտություն է բղխում՝ միջակ գյուղացիության և պրոլետարիատի աշխատակցության, միջակ գյուղացիությանը սոցիալիստական շինարարության մասնակից անելու։

Դրա համար պրոլետարական դիկտատուրան հանդիսանում է գյուղացիության հետ դաշնադիր լինելու հատուկ ձև։ Գյուղացիության հետ դաշնադիր լինելը պրոլետարական դիկտատուրայի բարձրագույն պրինցիպն է հանդիսանում, քանի վոր այդ դաշնի խզումն անհնար է դարձնելու հաղթական սոցիալիստական շինարարությունը։ Սակայն գյուղացիության հետ դաշն կապելը ինքնանպատակ չի հանդիսանում։ Դա մեզ հարկավոր է՝ գյուղացիությանը աստիճանաբար վերափոխելու, հասարակության դասակարգային բաժանման վոչնչացման աշխատանքը տանելու համար միայն։ Պրոլետարիատի դիկտատուրայի յերկրորդ նպատակն է՝ գյուղացիության և առհասարակ բոլոր մանր ապրանքարտադրողների հետ դաշնադիր լինելը, նրանց վերակրթելու, սոցիալիզմի շինարարության գործին մասնակից անելու նպատակով։

Վերջապես, պրոլետարիատի դիկտատուրայի յերրորդ և հիմնական նպատակն է սոցիալիզմի կառուցումը։ Ինչպես տեսանք այլ պրոյեկտներում, կապիտալիստական հասարակական հարաբերությունները ստեղծվում են շուկայի հարաբերությունների հիման վրա, հասարակ ապրանքային տնտեսության զարգացման հետևանքով։ Սոցիալիստական հարաբերությունները կարող են զարգանալ և ամրանալ, կապիտալիստական հասարակական հարաբերությունները վերջնականապես վերացնել և ժողովրդական տնտեսությունը համայնացնել՝ միայն բանվոր դասակարգի գիտակցորեն վարած քաղաքականության հետևանքով, ըստ վորում այդ քաղաքականությունը հիմնվում է տնտեսական հրամայական բարձունքների և, առաջին հերթին, պետական իշխանության վրա։ Այսպիսով, պրոլետարիատի դիկտատուրան հանդիսանում է՝ 1) շահագործող դասակարգերի ճնշման գործիք, 2) բանվոր դասակարգի և գյուղացիության միության հատուկ ձև և 3) սոցիալիզմի կառուցման գործիք։

Մենք արդեն ասացինք, վոր պրոլետարիատի դիկտատուրան չի նշանակում դասակարգային պայքարի դադարում։ Ընդհակառակը, այդ պայքարի նոր ձևերը ավելի դաժան են։ Գյուղացիության հետ միությունն հաստատելը, գյուղացիությանը սոցիալիստական շինարարության մասնակից անելը և այդ շինարարությունը—բանվոր դասակարգի առաջ դրված դժվարագույն խնդիրներից են։

Այսպիսի պայմաններում բանվոր դասակարգը պիտի առավելապես միահամուռ և կազմակերպված լինի։ Բուրժուազիային հաղթելը անհնար է առանց տևական, համառ և կատաղի կռվի, կյանքի և մահվան կռվի, մի կռվի, վորը պահանջում է տոկունություն, դիսցիպլինա, անհողդողդություն և կամքի միասնականություն։ Անպայման կենտրոնացումն ու խստագույն դիսցիպլինան պրոլետարիատի հաղթության հիմնական պայմաններից մեկն է (Լենին)։ Առանց այդ դիսցիպլինայի և միահամուռության բանվոր դասակարգը չի կարող ընդդիմադրել բուրժուազիային, վորը կենտրոնացրել է իր ձեռքում ահագին նյութական միջոցներ և ունի կազմակերպության անհրաժեշտ փորձառություններ։ Առանց այդ դիսցիպլինայի բանվոր դասակարգը չեր կարող սահմանադրությունը պահպանել կրիտիկական րոպեներում, չեր հեղափոխությունը դեմ առ դեմ կանգնած դժվարագույն փորձությունների՝ սովի, ցրտի, տնտեսական քայքայման և կապիտալիստների ժամանակավոր հաղթանակների։ Առանց այդ դիսցիպլինայի բանվոր դասակարգը չեր կարող իր տակի-

կայի անհրաժեշտ շեղապտույտը անել։ Որինակ, այնպիսին, ինչպիսին է նոր տնտեսական քաղաքականության անցնելը։ Բայց պրոլետարիատի այդպիսի միահամուռությունը և դիսցիպլինան անհնար են առանց ամուր կուսակցության, որը իր դրոշի շուրջն է հավաքում պրոլետարիատի լավագույն տարրերը։ Բանվոր դասակարգն ունի իր առավել գիտակից, առավել ակտիվ և առաջավոր տարրերը, որոնք կազմում են նրա կուսակցությունը։

Առանց ղեկավար միջուկի, պրոլետարիատի դիկտատուրան չի կարող իրագործվել։ Պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում կուսակցությունն է կատարում այդ ղեկավարող դերը։ Կոմունիստական կուսակցությունը որոշում է սոցիալիստական շինարարության կարևորագույն խնդիրները, այդ խնդիրների կատարումը ղեկավարում է, կարևորագույն պետական աշխատանքի համար մարդիկ է առաջ քաշում։ Դուցե մենք պրոլետարիատի դիկտատուրայի փոխարեն կուսակցության դիկտատուրա ունենք։ Ռուսական և արտասահմանյան մենշևիկները բոլոր փողոցներում աղաղակում են, որ մեզ մոտ ոչ թե պրոլետարիատի դիկտատուրա չէ, այլ կուսակցության դիկտատուրա։ Դա նրանց պետք է, որպեսզի դասակարգը հակադրեն կուսակցությանը, կուսակցության և անկուսակցական մասսայի միջև անջրպետ կանգնեցնեն։ Հայտնի է, որ ժամանակակից պայմաններում դասակարգերը քաղաքական կուսակցությունների միջոցով են կազմակերպվում, կուսակցությունն է դասակարգին ղեկավարում. դրա համար էլ մեր երկրում կոմունիստական կուսակցությունը պրոլետարիատի դիկտատուրային ուղղություն ավող ուժն է հանդիսանում։ Սակայն այդպիսի ուժ հանդիսանալու համար պետք է գիտենալ «կապվել, մինչև վերջ ամրիճան մոտիկանալ աշխատավորների լայն մասսաների հետ»։ Կուսակցությունը միայն այն ժամանակ կարող է ղեկավարել, երբ լայն մասսաները սեփական փորձով համոզվել են այդ ղեկավարության անսխալության մեջ։

Դրա համար կուսակցության ղեկավարությունը պահանջում է ոչ միայն անսխալ քաղաքականություն, այլ նաև մի շարք այլ պայմաններ, որոնք կապում են կուսակցությունը լայն մասսաների հետ։ Կուսակցությունը կապված է բանվոր դասակարգի հետ իր անդամների միջոցով և մասսայական կազմակերպությունների—խորհուրդների և արհմիությունների—միջոցով։ Խորհուրդներում և արհմիություններում կան հազարավոր և հարյուր հազարավոր անկուսակցական աշխատավորներ. խորհուրդներն ու արհմիությունները իրենց հաշվետվությունները տալիս են անկուսակցական ժողովներում, սրանց վորոշումները իրագործում են անկուսակցականները։ Նույն դերն են կատարում կոմյերիտը, կոոպերատիվները, աշխատավորուհիների պատվիրակային ժողովները և հասարակական գործունեության բոլոր այլ մարմինները։ «Ստացվում է՝ ընդհանուր առմամբ և ամբողջովին վերցրած՝ ձևականորեն ոչ-կոմունիստական, ճկուն և համեմատաբար լայն, շատ ուժեղ ապպարատ, մի ապպարատ, որի միջոցով կուսակցությունը սերտ կապված է դասակարգի և մասսայի հետ և որի միջոցով կուսակցության ղեկավարությամբ իրագործվում է դասակարգի դիկտատուրան» (Լենին)։ Ցավ չլիներ կուսակցությունը չլիներ, ո՞վ կարող էր առաջ մղել աշխատանքը այդ բոլոր կազմակերպություններին, որոնք պրոլետարիատին անհրաժեշտ են՝ պայքարի և շինարարության զանազան բնագավառներում իր դիրքերը ամրապնդելու համար։ «Ինչո՞ւմն է խեթությունը, որ բազում կազմակերպությունների առկայությունը չի ջատի ղեկավարության ամբողջականությանը։ Կարող են ասել, որ այդ կազմակերպություններից յուրաքանչյուրը իր աշխատանքը տանում է առանձին սֆերայում, և դրա համար նրանք իրար չեն կարող խանգարել։ Դա, իհարկե, ճիշտ է, բայց ճիշտ է և այն, որ բոլոր այդ կազմակերպությունները աշխատանքը պիտի տանեն մի ուղղությամբ, քանի որ նրանք դասակարգի չեն սպասարկում, այսինքն, պրոլետարիատին։ Հարց է առաջանում, թե ո՞վ և որոշում այն գիծը, այն ընդհանուր ուղղությունը, որին պիտի հետևեն իրենց աշխատանքում այդ կազմակերպությունները։ Ո՞ւր է այն կենտրոնական կազմակերպությունը, որը վոչ միայն շնորհիվ անհրաժեշտ փորձի առկայության ընդունակ է այդ գիծը մշակելու, այլև հնարավորություն ունի, շնորհիվ բավականաչափ հեղինակավորության առկայության, հետևել, որ այդ կազմակերպությունները կիրառեն այդ գիծը այնպես, որպեսզի ղեկավարության միասնականությունը ապահովված և անկանոնությունների հնարավորությունը վերացված լինի։ Այդպիսի կազմակերպու-

թյուն է հանդիսանում պրոլետարիատի կուսակցությունը» (Ստալին)։ Այսպիսով կուսակցությունը պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմի մեջ է մտնում իբրև վարող ուժ և շնորհիվ իր հեղինակավորության, մասսաների հետ ունեցած իր կապերին, սեփական միահամուռության և կազմակերպվածության, պրոլետարիատի բոլոր մնացյալ մասսայական կազմակերպությունների վրա իր ազդեցությունը տարածում է։

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ — ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՑԻ ՁԵՎ

Հեղափոխությունը ջախջախեց հին բուրժուական պետական մեքենան, այն պետական ապպարատը, որը հարմարեցված էր շահագործող դասակարգերի շահերի սպասարկման համար։ Հետևապես, անհրաժեշտ էր նոր կազմակերպություն, որի մեջ պրոլետարիատ կարողանար մարմնացնել իր պետական իշխանությունը։

Այդպիսի կազմակերպություն են հանդիսանում խորհուրդները։ Խորհուրդները ստեղծվեցին հեղափոխական պայքարի պրոցեսում և այդ պայքարի հետևանքով դարձան պետական իշխանության կազմակերպություն։ Խորհուրդները չեն քողարկում բանվոր դասակարգի դիկտատուրան այնպես, ինչպես բուրժուական դեմոկրատիան է քողարկում և զարդարում կապիտալիստների գերիշխանությունը։ Այդպիսի քողարկումը անհրաժեշտ է բուրժուական պետությանը, որը աշխատավորների ճնշող մեծամասնության վերաբերմամբ իրագործում է իր բռնությունը։ Պրոլետարիատի դիկտատուրան ուղղված է բնակչության չնչին փոքրամասնության դեմ, և դրա համար էլ խորհուրդները բացարձակապես հանդիսանում են պրոլետարիատի դիկտատուրայի որգաններ։

Խորհրդային սահմանադրությունը կալվածատերերին, կապիտալիստներին, նախկին վոստիկաններին, ժանդարմներին, տերտերներին և այլն զրկում է խորհուրդների մեջ ընտրելու և ընտրվելու իրավունքից, այսինքն շահագործող դասակարգերին ու նրանց սպասարկուներին հեռացնում է իշխանի կառավարման գործում վորևե մասնակցություն ունենալուց։ Խորհրդային որենքները ուղղված են հոգուտ բանվորների շահերի պաշտպանության և ընդդեմ կապիտալիզմի։ Այդպիսի իմաստ ունեն աշխատանքի վերաբերյալ բոլոր որենքները, վոր սահմանում են միասնական բանվորական որ, պայմանավորում են աշխատավարձի մինիմումը և այլն։ Այդպես է նաև յեկեղեցու (վոր բուրժուական ազդեցության գործիքն է հանդիսանում)՝ պետությունից անջատման, և դպրոցի՝ յեկեղեցուց անջատման որենքները։ Այդ միևնույն պրոլետարիատի դասակարգային շահերը պաշտպանելու նպատակին է ծառայում նաև բանակի դասակարգային կառուցումը,—բանակում տեղ չեն գտնում անաշխատավոր տարրերը։

Խորհուրդները, հանդիսանալով պրոլետարիատի դիկտատուրայի ձև, աշխատավորության նախկին ճնշված խավերի վերաբերմամբ ներկայացնում են աշխարհում մինչ այժմ չտեսնված իրոք դեմոկրատիայի ընդլայնում։ Կապիտալիստական պայմաններում ճնշված և քաղաքական կյանքի ամեն մասնակցությունից հեռու քշված բանվորների և գյուղացիների մասսայական կազմակերպություններ հանդիսացող խորհուրդները հնարավորություններ են ստեղծում բանվորներին և գյուղացիներին մասնակից անելու յերկրի կառավարության գործին, պետական իշխանության ապպարատի վերանորոգման գործին։

«Բուրժուազիան ստիպված է կեղծավորել «համաժողովրդական իշխանություն» կամ առհասարակ դեմոկրատիա կամ «զուտ դեմոկրատիա» անուններով տալով բուրժուական «դեմոկրատիկ» հանրապետության, որը իրոք միայն բուրժուազիայի դիկտատուրան է, դիկտատուրա՝ աշխատավորների վրա... Մի խոսքով պրոլետարիատի դիկտատուրան է ի վիճակի ազատել մարդկությունը կապիտալի ճնշումից, բուրժուական դեմոկրատիայի, հաշտասների համար հատատած այդ դեմոկրատիայի ստից, կեղծիքից և կեղծավորությունից, միայն պրոլետարիատի դիկտատուրան է ընդունակ հատատել դեմոկրատիա չքավորների համար, այսինքն դեմոկրատիայի բարիքները փաստորեն մատչելի դարձնել բանվորների և չքավոր գյուղացիների համար այն ժամանակ, յերբ նույնիսկ հիմնական բուրժուական ամենադեմոկրատիկ հանրապետության հանգամանքներում այդ բարիքները փաստորեն մատչելի չեն աշխատավորության մեծամասնության։ Վերցնենք, որինակ, հավաքույթների և մամուլի ազատությունը...

Ցեվ իսկապես, կապիտալիստները, շահագործողները, կալվածատերերը, սպեկուլյանտները տիրացել և ժողովրդի համար լավագույն, հարմար շենքերին, Թղթի պաշարին,—տպարաններին և բոլոր հարմարություններին։

«Դեմոկրատական» (բուրժուական — դեմոկրատական) դերմանական հանրապետության մեջ այժմյան «հավաքույթների և մամուլի ազատությունը» խաբեբայություն ու կեղծավորություն է, քանի որ իրոք դա ազատություն է հարուստների համար՝ մամուլը գնելու և կաշառելու, ազատություն է հարուստների համար՝ բուրժուական լրագրարական ստի սիվուխայով ժողովրդին արբեցնելու, ազատություն է հարուստների համար՝ պահելու իրր իրենց սեփականություն կալվածատիրական ընտրը, լավագույն շենքերը և այլն։ Պրոլետարիատի դիկտատուրան, հոգուտ աշխատավորների, կապիտալիստներից խլում է կալվածատերերի տները, լավագույն շենքերը, տպարանները, Թղթի պահեստները» (Լենին)։

Այսպիսով խորհրդային իշխանությունը աշխատավորների համար ապահովում է իսկական դեմոկրատիա, «դեմոկրատական բարիքներից» վաստորեն օգտվելը։

Բացի այն, որ խորհուրդները տալիս են աշխատավորներին պայմաններ՝ իրենց դեմոկրատական բարիքները օգտագործելու համար, նրանք իրենց ձևով առավելապես հարմար են պրոլետարական դեմոկրատիայի իրագործման համար։ Բուրժուական պետական ապարատը այնպես է կազմակերպված, որ աշխատավոր մասսաները բոլորովին հեռու լինեն կառավարության ապարատից։ Ընտրությամբ է կազմվում միայն որևէ օրգան, որ հրատարակող մարմինը, պարլամենտը։ Բոլոր տեղերի պետական պաշտոնյաները նշանակովի են և պատասխանատու են իրենց պետերին և պաշտոնե։ Մինիստրների խորհուրդը պատասխանատու է պարլամենտի առաջ,—պարլամենտը կարող է մինիստրներին իր անվստահությունն արտահայտել, սակայն մինիստրները նույնպես վոչ Թե ընտրվում են, այլ նշանակվում։ Այդ պատճառով կապիտալիստական յերկրների համբողջ կառավարչական մեքենան հանդիսանում է բյուրոկրատական ապարատ։ Մեր իշխանության կազմակերպությունը հարմարեցված է այնպես, որ ամենալայն աշխատավորական մասսաները պետության կառավարման գործում դյուրությամբ մասնակցեն։ Պարլամենտի փոխարեն մենք ունենք տեղական խորհուրդների այնպիսի խիտ ցանցեր, որոնք անմիջականորեն աշխատում են իրենց շրջաններում կամ ռայոններում, և որոնք հաշվետու յեն, պատասխանատու յեն իրենց ընտրողների առաջ։ Ընտրողները իրավունք ունեն իրենց վստահությունը չարդարացրած պատգամավորներին յեթե կանչելու։ Խորհուրդների համագումարներ են հավաքվում պարբերաբար, և այդ համագումարներում մասնակցում են գործնական աշխատանքի անմիջական մասնակիցները։ Որենսդրական և գործադիր իշխանության բաժանումը վերացված է։

Բացի այդ, պետական կառավարության աշխատանքի բոլոր բնագավառներում աշխատելու և սովորելու համար անմիջականորեն առաջ են քաշվում շարքային բանվորներն ու գյուղացիները։ Խորհուրդներին առընթեր կան տնտեսության առանձին ճյուղերի սեկցիաներ։ Այդ սեկցիաներում մասնակցում են Թե զազգահի բանվորները՝ խորհրդի անդամները և Թե աշխատանքի այս կամ այն ճյուղով (դատարանական գործով, աշխատանքի հարցերով, կոմունալ տնտեսությամբ) հետաքրքրվող շարքային բանվորները։ Նրանք մասնակցում են զանազան հիմնարկությունների հետազոտության մեջ։ Այդ հետազոտությունների հիման վրա մի շարք առաջարկություններ են մտցնում աշխատանքը ուժեղացնելու համար։ Ժողովրդական դատարաններում գոյություն ունեն ժողովրդական ատենակալներ, դատարանի անդամներ, որոնք անմիջականորեն ուղարկված են բանվորների և գյուղացիների կողմից։

Խորհուրդները լրացվում են արհմիություններով, կոոպերատիվներով, չքավորության կազմակերպություններով, գյուղացիության փոխադարձ օգնության կոմիտեներով, պատգամավորուհիների ժողովներով, արտադրական խորհրդակցություններով—այս բոլոր կազմակերպությունները բաղկացած են բանվորներից և գյուղացիներից։ Այդ կազմակերպություններում բանվորներն ու գյուղացիները մասնակցում են տնտեսական և քաղաքական կյանքի զանազան ճյուղերի աշխատանքի քննության մեջ, օգնում են իշխանության մարմիններին, քննադատում են այդ

մարմինների գործնեությունը և միևնույն ժամանակ ձեռք են բերում կառավարչության գործում անհրաժեշտ փորձ։

Բացի դրանից, գյուղերից առաջ քաշված մեծ խմբակցություն, որ խորհրդային ապպարատի մեջ է մտցվել՝ կառավարչական գործը ստուգելու համար։

Մասսաների՝ կառավարչության գործի մեջ, իշխանության մարմինների գործնեության վերստուգման մեջ ունեցած անմիջական մասնակցությամբ խորհուրդները դառնում են բուրժուական դեմոկրատիայից անհամեմատ ավելի բարձր տիպի՝ պրոլետարական դեմոկրատիայի օրգաններ։ Պետական ապպարատի մաշկելության շնորհիվ, աշխատավորները ստուգանաբար յուրացնում են այն փորձն ու գիտելիքները, որոնք կապիտալիստական պայմաններում նեղ-վարչական-պաշտոնեական կադրերի արտոնություն են հանդիսանում։ Մարքսը ասում էր բանվորներին՝ «դուք պիտի անցնեք 15, 20, 50 տարվա քաղաքացիական և միջազգային պատերազմներ, ոչ միայն նրա համար, որպեսզի փոխեք հարաբերությունները, այլ և նրա համար, որպեսզի ինքներդ փոխվեք և ձեզ ընդունակ դարձնեք քաղաքական գերիշխանության»։ Խորհուրդները անհրաժեշտ պայմաններ են ստեղծում բանվորներին «քաղաքական գերիշխանության ընդունակ դարձնելու» համար։

3. ԱԶԳԱՑԻՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԹՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Աշխատավորների համար միակ հնարավոր դեմոկրատիա հանդիսանալով, խորհրդային հասարակակարգը պայմանավորում է ազգությունների, առանց ազգային ճնշման, առանց ազգային կուլտուրայի բնաջնջման, ապահովում և նաև պետական համակեցություն։

Ցարական Ռուսաստանում ռուսները տիրող ազգ էին։ Ռուսներին առավելություններ էին վերապահված «այլազգիների» (ուկրաինացիների, լեհերի, հրեաների, թուրքերի, հայերի, վրացիների, ուզբեկների, բուրյատների և այլոց) հանդեպ, որոնք կազմում էին ընդհանուր բնակչության պատկառելի տոկոսը։ Պետական լեզուն, որով գրվում էին օրենքները, որով վարում էին դատը, գործավարությունը, ուսուցանում էին դպրոցների մեծամասնության մեջ՝ ռուսերենն էր։ Վրացիները, հայերը, լեհերը, ուկրաինացիք և այլն զուրկ էին իրենց ազգային կուլտուրան զարգացնելու հնարավորությունից։ Կառավարությունը պահպանում էր միայն ռուսական դպրոցները։ Այլ ազգությունների դպրոցների դեմ նա նույնիսկ պայքար էր մղում, փակելով այն դպրոցները, որոնք ըստ վոստիկանության կարծիքի կարող էին ճնշված ազգության մեջ ազատասիրություն առաջացնել։ Ազգային դպրոցները մասնավոր էին և չէին տալիս այն իրավունքները, որ տալիս էին արքունի գիմնազիաները ու դպրոցները։ Նույնպես հետապնդվում էր ազգային մամուլի այն մասը, որ վորևե դժգոհություն էր արտահայտում ազգային ճնշման առթիվ։ Այնպիսի յերկրներում, ինչպիսիք են Միջին Ասիան կամ Ադրբեջանը, որոնք ցարիզմի ժամանակ յուրահատուկ գաղութներ էին հանդիսանում, ազգային ճնշումը շատ ցայտուն էր դրսևորվում։ Բնակչությունը ամբողջովին հանձնված էր չարամիտ և բիրտ վարչապետների կամայականության։ Կազակստանում 1916 թվին քոչվոր ցեղերին զինակոչի և թիկունքային աշխատանքների կոչելու հողի վրա, ծագեց ապստամբություն, որի ժամանակ կոտորվեցին հազարավոր մարդիկ։ Ադրբեջանում անընդհատ լարում էին թուրքերին հայերի դեմ և ընդհակառակը։ Մի ազգությունը մյուսի դեմ լարելու քաղաքականությունը կառավարությունը վարում էր սիստեմատիկորեն, աշխատելով այդպիսով ուշադրությունը բոլոր չարիքների իսկական պատճառից՝ միապետական հասարակակարգից՝ հեռու կացուցանել։ Ուկրաինացիներին լարում էին լեհերի դեմ, հեռու կացուցանել։ Ուկրաինացիներին լարում էին լեհերի դեմ, թուրքերին հայերի դեմ և բոլորին հրեաների դեմ։ Սկսած XIX դարու յերկրորդ կիսից Ռուսաստանում հրեական ջարդերը կրկնվում են սիստեմատիկաբար։ Հրեական ջարդերի զոհերի թիվը միայն մի քաղաքում հասնում էր մի քանի հարյուրների և հազարների։ Քաղաքացիական պատերազմի շրջանում բուրժուական բանակը կազմակերպեց պագրոմներ, որոնց ժամանակ կոտորվեցին 200.000 մարդուց ավելի։ Հրեաները հետապնդվում էին, նրանք զրկված էին շատ իրավունքներից, մի շարք քաղաքներում ապրելու իրավունքից, միջնակարգ և բարձրագույն դպրոցներում վորոշ տոկոսից ավել սովորելու իրավունքից և այլն։ Նախկին ցարական Ռուսաստանի այն մասերում, վորտեղ գոյացել են

բուրժուական պետություններ, ազգային քաղաքականությունը իր առաջվա կերպարանքն ունի։ Տարբերությունը միայն նրանում է, որ ռուսների տեղը գրավել են լեհերը, ֆիններն և այլն։ Առանձնապես բնորոշ է այդ կողմով Լեհաստանը, որի սահմաններում կան բելոռուսներով, ուկրայինացիներով, լիտվացիներով և գերմանացիներով բնակեցված տերրիտորիաներ։ Ազգային կուլտուրայի հետամնացումն և ուկրայինացիների, գերմանացիների և այլն ազգային անկախության ձգտումների ճնշումն Լեհաստանում վոչնչով չեն տարբերվում այն միջոցներից, որ գործադրում եր ցարական կառավարությունը լեհացիների վերաբերմամբ։ Ցարական կառավարությունը կատարում եր Լեհաստանի և այլ շրջանների բռնի ռուսացումն։ Լեհաստանը այժմ բռնի լեհացումն է կատարում, բռնությամբ մոցնելով իր լեզուն ու դպրոցները և հակառակվողներին անողորմաբար հետապնդելով։

ԽՍՀ Միությունը հանդիսանում է սոցիալիստական հանրապետությունների միություն, հանրապետությունների, որ միացել են կամավոր համաձայնությամբ։ Այդ հանրապետություններում վողջ խորհրդային աշխատանքը, վողջ լուսավորության գործը տարվում է տեղական բնակչության լեզվով։ Դրանով դյուրացվում է՝ տեղական բնակչությունից բանվորների և դյուղացիների աշխատանքի առաջ քաշումն, և ինքը խորհրդային ապպարատը ավելի յե մոտենում մասսաներին։ Նույնիսկ տեղական վինվորական մասերում ուսուցումը տարվում է տեղական լեզվով։ Յեթե մի վորևե ազգություն կազմում է բնակչության վոքրամասնությունը, նրա կուլտուրական կարիքները սպասարկում են լուսավորության մարմինների հատուկ սեկցիաները։ Յենթադրենք, որ ռուսական շրջանում կան յերեք թուրքական դյուղեր։ Այդ դյուղերը կազմում են առանձին ազգային ռայոն։ Այդպիսի ազգային ռայոնում խորհրդային աշխատանքը տարվում է մայրենի լեզվով, դպրոցներում դասավանդությունը կատարվում է մայրենի լեզվով։ Առանձնաշնորհյալ ազգություններ չեն ճանաչվում և ազգությունների իրավահավասարությունն է հայտարարված։

Խորհրդային իշխանությունը պայքարում է հրեաներին հետապնդելու, անտիսեմիտիզմի դեմ։ Դրանք միշտ հակահեղափո-

խության սիրելի գործիքներն են յեղել, դրանցով հիմարացրել են մասսաները և հեռացրել մասսաների զայրույթը կալվածատերերից, կապիտալիստներից, ցարական պաշտոնյաներից։ Այժմ հրեա աշխատավորները այլ աշխատավորների հետ հավասար իրավունքներ են վայելում։ Խորհրդային իշխանությունը ոգնում է հողագործությամբ և դյուղատնտեսությամբ պարապել ցանկացող հրեաներին, նա դյուրություններ է տալիս նրանց այդ իրագործելու։ Ցարական կառավարությունը հնարավորություն չեր տալիս հրեաներին դյուղատնտեսության մեջ մասնակցելու։ Հրեաները վոքր քաղաքները (մեստեչկի) խիստ լեցված եյին և հրեաների մեծագույն մասը չքավորության մեջ եր։ Այժմ հրեաների համար հատկացված են հողամասեր, վորոնց վրա դյուղատնտեսական աշխատանք են վարում ավելի քան 100 հազար հրեաներ։

Այսպիսով, խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը կայանում է բոլոր ազգերի աշխատավորներին իսկական իրավահավասարություն ապահովելու մեջ։ Սակայն բանվոր դասակարգը պայքար մղելով ազգերի ճնշման դեմ, պայքարում է և նացիոնալիզմի դեմ՝ ինչ ծագում էլ ունենա այդ նացիոնալիզմը, քանի վոր նացիոնալիզմը բուրժուական գաղափարախոսության հիմնական մասն է հանդիսանում, բուրժուազիայի՝ մասսաների վրա ազդելու փորձված գործիքներից մեկը և բուրժուազիայի դեմ մղվող պայքարում ջլատում և պրոլետարիատի ուժերը։

Յերկու տեսակի նացիոնալիզմ կա։ Դեռ կան միապետականության մնացորդներ, յերը նախկին տիրող ազգի ներկայացուցիչները չեն կարող հաշտանալ ազգերի իրավահավասարության սկզբունքը, վերից վար են նայում անցյալում ճնշված ազգերի վրա, պայքարում են նրանց ազգային կուլտուրայի դեմ։ Այդպիսի թեքումներ հանդես են յեկել շատ հանրապետություններում և շրջաններում՝ ապպարատի այսպես կոչված ազգայնացումն իրագործելու ժամանակ։ Շատ բանվորներ և նույնիսկ կոմունիստներ թշնամական վերաբերմունք են ցույց տվել այն բանի դեմ, վոր պետական աշխատանքը պետք է վարել տեղական լեզվով և արմատական բնակչության միջից ղեկավար դիրքերի աշխատողներ

առաջ քաշել։ Նման դժգոհության մեջ լսելի չեն անցյալի արձագանքները, չերը ռուսը իրեն համարում եր ավելի լավ և պետական պետական աշխատող, քան ճնշված ազգի ներկայացուցիչը, «այլազգին»։ — Սակայն կա և տեղական շովինիզմ։ Անցյալում ճնշված ազգերի նեպմանները, կուլակները և բուրժուական ինտելլիգենտները փորձում են անվստահություն հարուցել դեպի բանվոր դասակարգը, տվյալ ազգի հին կենցաղի իդեալիզացիան են ջատագովում, ձգտում են վողջ միությունից անկախ ազգային տնտեսության։ Բայց դրանք անհաջող փորձեր են։ Այդպիսի տեղական շովինիզմն ևս դատապարտելի չե պրոլետարական ազգային քաղաքականության կողմից, վորը կողմնակից է զանազան ազգերի կուռ միությանը։

Պայքարելով ազգային հալածման դեմ, հանուն բոլոր ազգերի կուլտուրայի բարգավաճման, պրոլետարիատը միաժամանակ չախչախում է բոլոր այն անչքպետները, վոր ձգել եր կապիտալիզմը ազգերի միջև և վորը փոխադարձ անվստահություն եր հարուցում։ Փոքր ազգերի լիակատար ազատագրության համար տարվող այս պայքարը, վերացնելով ազգամիջյան թշնամության պատճառները, հող է պատրաստում ազգերի միացման, նրանց իրար մերձեցման, նրանց մի ապապետական և ապադասակարգային հասարակության մեջ միացնելու համար։

4. ՊԱՅՔԱՐ ԸՆԴԴԵՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՊՊԱՐԱՏՈՒՄ ԴՈՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԲՅՈՒՐՈԿՐԱՏԻԶՄԻ

«Իրեն գերիշխանության ընդունակ դարձնելու» և ամբողջ մասսայով կառավարչական գործին մոտից ծանոթանալու նպատակը պրելետարիատին համառորեն թելադրում է անողոք պայքար մղել բանվորական պետության մեջ տեղի ունեցող բյուրոկրատիզմի դեմ։ Բյուրոկրատական այլանդակությունների հիմնական պատճառները այն մանր-բուրժուական տարերքի մեջ են, վորից բաղկացած են մանր ապրանք-արդյունարերողների միլիոնավոր տնտեսությունները։ «Բյուրոկրատիզմի տնտեսական արմատները... գլխավորապես... յերկուսն յեն. մի կողմից՝ զարգացած բուրժուազիան հեղափոխական բանվորների (մասամբ և գյուղացոց) դեմ մաքառելու համար բյուրոկրատական ապպարատի կարիք ունի, առաջին հերթին զինվորական, հետո դատարանային և այլն։ Այդ մենք չունենք։ Մեր դատարանները դասակարգային են և ուղղված են բուրժուազիայի դեմ։ Մեր բյուրոկրատիզմի արմատները այլ են՝ մանր արտադրողի ցրվածությունն ու բաժան-բաժան լինելը, նրա անկուլտուրականությունը, ճանապարհների բացակայությունը և անգրագիտությունը» (Լենին)։ Այդ պայմանները դժվարացնում են կառավարչական մարմինների գործնեության վերաստուգությունը, դյուրացնում են կամայականությունը, ապպարատը կառավարչական աշխատանքների համար առաջ քաշած մարդկանցը մասսաներից հեռու պահում։ Մանր արտադրողների մասսայի անկուլտուրականությունը խանգարում է, վոր նա կառավարչական գործին ակտիվ մասնակցի։ Բացի այդ, նախկին պետական ապպարատի աշխատողների մեծագույն մասին պրոլետարիատը ստիպված եր ոգտագործել խորհրդային որգաններում։ Ինչպես գիտության բնագավառում, այնպես էլ ֆինանսա-հարկային աշխատանքների համար անհրաժեշտ եյին մասնագետներ։ Այդ մասնագետները կապիտալիստական պետության պայմաններում եյին զարգացած և իրենց սովորություններն իրենց հետ պիտի բերեյին։

Այդ կադրերի ազդեցությունը անդրադարձավ ապպարատի այն մասի վրա, վորը նորոգված եր մասսաներից առաջ քաշված բանվորներով և գյուղացիներով։ Այստեղ վորոշ դեր են կատարում տնտեսական պայմանները։ Բանի վոր մենք դեռ չափազանց աղքատ ենք, մենք ստիպված ենք ավելի ևս լավ ապահովել մեր շինարարության համար կարևոր աշխատողներին։ Այս հանգամանքը բանվոր դասակարգի առաջ քաշած աշխատողների և իրեն մասսայի կյանքի պայմանների մեջ տարբերություն է առաջացնում, մասսաներից կտրվելու վտանգ է ստեղծում։

Բյուրոկրատիզմը վերջնականապես վոչնչացնելու, նրա առաջացման բոլոր պատճառները վերացնելու համար, պետք է վերացնել կառավարողի և կառավարվողի միջև յեղած սահմանը։ Պրոլետարիատը պայքարում է հանուն ապադասակարգային հասարակության, վորտեղ պետությունը մահանում է։ Պրոլետարիատը վոչնչացնելով բոլոր դասակարգային տարբերությունները ու դասակարգային ներհակությունները—վոչնչացնում է և պետությունը։

Այդ իրականացնելու միջոցներից մեկն է՝ բանվորներին ամբողջովին կառավարության գործին մասնակից անելը։ «Բանվորները, քաղաքական իշխանությունը նվաճելուց հետո, կջախջախեն հին բյուրոկրատական ապարատը, հիմքից կքանդեն՝ քարը քարի վրա չթողնելով, և կվերաբերնեն այն նորով, որ բաղկացած կլինի նույն բանվորներից և ծառայողներից, որոնց բյուրոկրատանալու դեմ անմիջապես ձեռք կառնվեն հետևյալ միջոցները. 1) ոչ միայն ընտրողության, այլ և վերընտրելության մշտական հնարավորություն, 2) վարձը բանվորի վարձից ոչ ավել, 3) անմիջապես անցնել այնպիսի կարգերի, որ ամենքը վերատեղության և հսկողության ֆունկցիաներ կատարեն, և որ բոլորն էլ ժամանակավորապես «բյուրոկրատներ» դառնան և որպեսզի ոչ ոք չկարողանա «բյուրոկրատ» լինել (Լենին)։ Այստեղ նախատեսված են բյուրոկրատիզմի դեմ պայքարելու այն գլխավոր գծերը, որոնք մեր օրերում էլ պահում են իրենց ուժն ու թարմությունը։

Խորհրդային ապարատում բյուրոկրատիզմը ծայր աստիճանի զգալի չէ։ Բյուրոկրատական այլանդակությունները դժվարացնում են բանվոր դասակարգի և գյուղացիության միության գործը։ Շնորհիվ բյուրոկրատիզմի, գյուղացին շատ հաճախ չի նկատում մեր պետական ապարատի առավելությունները, նա չի զգում, որ մեր սիստեմը ավելի լեժան, լավ, ավելի արագ է աշխատում, որ նա ավելի ճկուն է քան կապիտալիստական ապարատը։ Բյուրոկրատիզմը խոչընդոտ է հանդիսանում գյուղացիների և բանվորների միացմանը՝ պետական շինարարության ասպարիզում, քանի որ փակում է գյուղացու առաջ խորհրդային որգանների դռները, չի թույլ տալիս, որ նա մոտենա այդ որգաններին՝ իբրև այնպիսի որգանների, որոնց մեջ ինքը լիաբուռն մասնակցություն պիտի ունենա։ Իսկ գյուղացին գործնական, ռեալիստ մարդ է և նա ուզում է իր սեփական փորձով շոշափել նոր ձևի իշխանության կառավարության գործում կատարած բարելավումները։ Գյուղացին ցանկանում է լեժան պետական ապարատ, իսկ բյուրոկրատիզմը բազմացնելով հնոտանիները, ավելացնելով ոռճիկ ստացող մարդկանց թիվը, ահագին անհրաժեշտ ծախքեր է կատարում։ Ապարատի բարդությունը իր հերթին ձգտումներ և առաջացնում, որի շնորհիվ

դանդաղանում է կարևորագույն ձեռնարկումների գործադրությունը և պետական խոշոր միջոցներ են փչանում։ Խորհրդային իշխանությունն ու կուսակցությունը ամեն կերպ աշխատում են պետական ապարատի ծախքերը կրճատել, որպեսզի ի հաշիվ այդ խնայողությունների ուժեղանա սոցիալիստական շինարարությունը։ Այսպես, ՄՍՀ Միության կառավարությունը առաջադրեց բոլոր վարչական ծախքերը իջեցնել 20%-ով։ Այդ իջեցումը պետք է տա 300—400 միլիոն րուբլի։

Բյուրոկրատիզմի դեմ պայքարելը այնպիսի կարևորագույն պետական գործ է հանդիսանում, որ մի ամբողջ ժողկոմատ՝ ԲԳՏ ժողկոմատը բացառապես զբաղված է բյուրոկրատական այլանդակություններին, միջոցների անօգուտ ծախսման և այլն դեմ մաքառելով։ Այս պայքարը հենվում է աշխատավորների լայն մասսաների ինքնագործունեության վրա։ Կուսակցությունը դիմեց լայն մասսաներին՝ մեր պակասների քննադատությամբ, մեր սխալների մերկացումներով զբաղվելու կոչով։ Բանվոր դասակարգին խորթ է այն վախը, որ հատուկ է բուրժուական կարգին խորթ է այն վախը, որ հատուկ է բուրժուական կառավարություններին, որոնք վախենում են այն ամեն տեսակի քննադատությունից, որ կարող է գոյություն ունեցող հասարակակարգի հեղափոխական քննադատության վերածվել։ Այդ հասկանալի չէ, քանի որ բուրժուական յերկրներում բյուրոկրատիզմը, պաշտոնյանների ամենազորությունը բուրժուական իշխանության ապարատի հոգին են հանդիսանում, դրա համար էլ բուրժուական պետության մեջ բյուրոկրատիայի դեմ պայքարը դառնում է պայքար պետական իշխանության ապարատի դեմ, դառնում է հեղափոխական պայքար։ Խորհրդային պետության մեջ բյուրոկրատիզմը մի պակաս է, որ առաջ է գալիս շնորհիվ մեր անկուլտուրականության, մասսաների՝ ապարատի վերատեղության և կառավարման գործում մասնակցելու անբավականաչափ հմտությունից։ Խորհրդային իշխանության և կոմունիստական կուսակցության համար՝ աշխատավորների քննադատությունը միայն դյուրացնում է կառավարչության վողջ սիստեմի բարելավման աշխատանքը, դյուրացնում է՝ մասսաներին մերձեցնել և նրանց կառավարչական գործունեությանը մասնակից դարձնել։ Բանվոր դասակարգը և կուսակցությունը առանց վորևե վախի՝ բացարձակապես խոսում են իրենց պակա-

սուբյունների և սխալների մասին, քանի վոր չունեն, ինչպես այդ տեղի ունի կապիտալիստական պետության մեջ, թշնամաբար տրամադրված աշխատավոր մասսաները։ «Պրոլետարիատը չի վախենում խոստովանել, վոր հեղափոխության ժամանակ այս ու այն գործերը վատավոր կերպով հաջողվեցին, իսկ այն չհաջողվեց։ Բոլոր հեղափոխական կուսակցությունները, վորոնք մինչև որս կործանվել են, կործանվել են այն պատճառով, վոր շատ էին պարծենում և չէին կարողանում տեսնել թե ինչումն է ուժը։ Նրանք վախենում էին իրենց թուլությունների մասին խոսել։ Իսկ մենք չենք կործանվի, քանի վոր չենք վախենում մեր թուլությունների մասին խոսել և կսովորենք այդ թուլությունները հաղթահարել» (Լենին)։

Մեր զարգացման այս շրջանում, երբ մենք վերաշինում ենք վողջ ժողովրդական անտեսությունը նոր հիմերի վրա, առանձնապես կարևոր և ինքնաքննադատությունը։ Այդպիսի հսկայական գործում կարող են հազարավոր սխալներ, հազարավոր պակասներ տեղի ունենալ։ Այդ պակասները անհրաժեշտ է ուղղել։ Կան այնպիսի անտեսարարներ, վորոնք նեղկա շրջանում շեղվում են հեղափոխական գծից։ Կան այնպիսի կոմունիստներ և խորհրդային աշխատողներ, վորոնք բուրժուական տարրերի ազդեցության են ենթարկվում և մասսաներից կտրված լինելու պատճառով կաղմալուծվում և այլասերվում են։ Պետք է «գործնական, անողոք ճշմարիտ-հեղափոխական կռիվ մղել չարիքի կոնկրետ ներկայացուցիչների դեմ։ Խորհրդային իշխանությունը պետք է աջակցի քննադատական յելույթներին, յեթե դրանց մեջ ճշմարտության գոնե մի հատիկ կա։

ԲԳՎԺԿ ոգնելու համար կազմակերպվում են «կամավորներ» և «հետազոտողների» ժամանակ խմբակներ, կոմյերիտական «թռուցիկ կավալերիայի մասեր»։ Կոմյերիտական բջիջներն ու արհմիությունները սեփական ձեռներեցությամբ կազմակերպում են խմբեր, տեղերում, հիմնարկություններում և ձեռնարկություններում հետազոտում են գործերը, գրի առնում բյուրոկրատիզմը և նյութերը հանձնում են ԲԳՎ։ Սա բոլորին ասիճանաբար «վերստուգության և հսկողության գործին» մասնակից անելն է։ Առաջին անգամ միայն սոցիալիզմի որով քաղաքակրթված հասարակության պատմության մեջ բնակչության մասսան բարձրանում է ինքնուրույն մասնակցության ունենում վոչ միայն ընտրությունների և ձայնտվությունների մեջ, այլև կառավարչության առօրյա գործում։ «Սոցիալիզմի որով բոլորը հերթով կկառավարեն և արագ կընտելանան այն հանգամանքին, վոր վոչ վոք չկառավարի» (Լենին)։

Պատժելով առանձին բյուրոկրատներին, կբարձատելով հիմնարկությունների շատերը, վոչնչացնելով ավելորդ ինստանցիաները, անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ հիմնական նպատակը—ապպարատի և մասսաների մերձեցման, կառավարչության գործին մասսաներին մասնակից անելը։ Բյուրոկրատիզմի դեմ պայքարելու կարևորագույն գործիք է հանդիսանում մասսաների կուլտուրական մակարդակի բարձրացումը, քանի վոր բյուրոկրատիզմի դեմ հաջող պայքարելու համար անհրաժեշտ է մասսաների վորոշ կուլտուրականություն, վորը ցանկություն, համոզություն և հնարավորություն է ստեղծում բյուրոկրատիզմի դեմ պայքարելու, ապպարատի վերստուգությունը իրականացնելու։

Ջոզեֆ Ֆինգերուդ

ԿՈՄՈՒՆԻԶՄԸ — ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է

1. ՍՈՑԻԱԼԻԶՄ

Դասակարգերի անհետացումը սոցիալիզմի ուրվ. — *Կոմունիստները պայքարում են նոր հասարակակարգ ստեղծելու համար, մի այնպիսի հասարակակարգ, որտեղ չեն լինի դասակարգեր, չի լինի վիշ աղքատություն, վիշ շահագործում, և վիշ էլ մարդու ճնշում մարդու վրա։*

«Դասակարգերը, — ասում է Վլադիմիր Իլյիչը, — դրանք մարդկանց այնպիսի խմբեր են, որ շնորհիվ հասարակական տնտեսության որոշ ձևի մեջ բռնած իրենց տեղերի տարբերության, նրանցից մեկը կարող է յուրացնել մյուսի աշխատանքը»։ Կապիտալիստական տնտեսության մեջ մասնավոր սեփականությունը արտադրության գործիքների և միջոցների, այն է՝ ֆաբրիկանների և մեքենաների վրա, թույլ է տալիս կապիտալիստներին յուրացնել բանվորների աշխատանքը։ Ամբողջ ֆաբրիկան շարժման մեջ է դրվում և սպասարկվում հազարավոր բանվորների աշխատանքով, սակայն այդ հսկայական կոլեկտիվի կողմից արտադրած պրոդուկտն այստեղ պատկանում է մի կապիտալիստի։ Ամբողջ կապիտալիստների մի խմբակ, ամբողջ հասարակության միլիոնավոր բանվորների ձեռքով ստեղծված ապրանքների տերն ու տնօրենն է հանդիսանում, վորպես յուր սեփականության։ Կապիտալիստական հասարակակարգում արտադրությունը *համայնական*, կոլեկտիվ, իսկ յուրացումը՝ *մասնավոր*, անհատական։

Վորպեսզի վոչնչացնել դասակարգերը, վորպեսզի վերջ տալ մարդու շահագործմանը մարդու կողմից, անհրաժեշտ է վոչնչացնել դասակարգերի շահագործման հիմքը՝ սեփականությունը։ «Կոմունիստները, — գրում է Մարքսը «Կոմունիստական Մանիֆեստ»-ում, — կարող են արտահայտել իրենց տեսությունը մի խոսքով, այն է՝ *մասնավոր սեփականության վոչնչացում*»։ Աշխատանքի ամբողջ միջոցները և գործիքները, բոլոր մեքենաները, ֆաբրիկանները, գործարանները պետք է անցնեն ամբողջ հասարակության, պետք է անցնեն աշխատավորների ամբողջ կոլեկտիվի ձեռքը։ Դասակարգերի լիակատար վոչնչացման համար պետք է վոչ միայն տապալել կալվածատերերին և կապիտալիստներին, վոչ միայն վերջ տալ նրանց սեփականությանը, այլև պետք է վերացնել ամեն մի մասնավոր սեփականություն, նույն թվում և մանր արտադրողի սեփականությունը։ Պետք է վերանա բանվոր դասակարգի և մանր սեփականատերերի դասակարգի, այն է գյուղացիների միջև յեղած տարբերությունը։ Ապագա սոցիալիստական հասարակակարգում չի լինի վիչ բանվոր և վիչ գյուղացի. այնտեղ բոլորը պիտի լինեն հասարակական տնտեսության աշխատավորներ։

Սոցիալիստական հասարակակարգում չկան դասակարգեր. այդ պատճառով էլ նրա որոք արտադրության միջոցների տերն ու տնօրենն է հանդիսանալու վոչ թե վորևե դասակարգ, այլ ամբողջ մարդկությունն՝ ինչպես միասնական վիթխարի ընկերական մի արտել։ Վոչ մի ձեռնարկություն չի պայքարում ու չի մրցում մյուսների հետ, ինչպես դա լինում է կապիտալիզմի որոք, վորովհետև ամեն մի ֆաբրիկա, ամեն մի գործարան և հանք, ամեն մի խոշոր ձեռնարկություն գյուղատնտեսության մեջ, հանդիսանում են կարծես թե հասարակական ամբողջ տնտեսությունն ընդգրկող համաժողովրդական մի արհեստանոցի բաժանմունքները, մասերը։ Պրոդուկտներն այստեղ չեն արտադրվում ծախվելու համար, նրանք միմյանց հետ չեն փոխանակվում և այդ պատճառով էլ չկա վիչ առևտուր և վոչ փող։ Ամբողջ արտադրածը գնում է պահեստները և այնուհետև բաշխվում հասարակության անդամների վրա։

Սոցիալիստական արտադրության պլանայնությունը. — Սոցիալիստական տնտեսության վիթխարի, բարդ և միասնական կազմակերպությունը չի կարող գոյություն ունենալ առանց արտադրության ընդհանուր պլանի։ Եթե ամբողջ տնտեսությունը համայնական մի արտել է, ապա այստեղ ամեն ինչ պետք է նախորոք հաշված և համաձայնեցված լինի. ինչպես բաշխել բան-

վորական ձեռքերն արդյունաբերության առանձին ճյուղերի մի-ջև, ի՞նչպիսի ապրանքներ և վո՞րքան արտադրել, վո՞րտեղ և ինչ-պիսի ֆաբրիկաները ու գործարանները կառուցել, ո՞ւր ուղարկել պատրաստած պրոդուկտները և այլն։ Հակառակ կապիտալիստա-կան տնտեսության, վորտեղ թագավորում է արտադրության ան-արխիա, մրցում, անպլանաչափություն, սոցիալիստական տնտե-սությունը հիմնված է գիտակից ու պլանաչափ ղեկավարության, ճշգրիտ հաշվառման և կոնտրոլի (հսկողության) վրա։

Կապիտալիզմի որոք արտադրության ընթացքը կախում չունի մարդկանց կամքից, այստեղ տնտեսական որենքները յերևան են գալիս կույր ուժով, վորպես կործանարար ճգնաժա-մեր, վորոնք մրրկի նման վոչնչացնում են բազմաթիվ ձեռնար-կություններ և ապրանքներ։ Սոցիալիզմի որոք արտադրության ընթացքը կախում ունի մարդկային կամքից և ղեկավարվում է նրանով. մարդիկ իրենք են գիտակցաբար կանոնավորում ար-տադրության պրոցեսը, ղեկավարում այն։ Կապիտալիստական հասարակարգն անկազմակերպ, անիշխանական հասարակա-կարգ է, իսկ սոցիալիստականը՝ կազմակերպված հասարակակարգ է։

Կոմունիզմի յերկու ֆազաները (փուլերը). «Կապիտալիզմից,— գրում է Լենինը,— մարդկությունը կարող է անմիջապես անցնել միայն սոցիալիզմին, այսինքն արտադրության միջոցների ընդ-հանուր սեփականատեր և պրոդուկտների բաշխմանը՝ ըստ յու-րաքանչյուրի աշխատանքի։ Մեր կուսակցությունն ավելի հեռուն է նայում. սոցիալիզմն անխուսափելիորեն պետք է աստիճանա-բար աճելով վերածվի կոմունիզմի»։ Ինչպես տեսնում ենք, Լենինը սոցիալիզմը հաշվում է ապագա սակարգա-յին նոր հասարակության մի այն առաջին, սա-րին աստիճանը։ Նրա բարձր աստիճանը հանդի-սանում է լրիվ և լիակատար կերպով յուր զար-գացումն ստացած կոմունիզմը։ Սոցիալիզմի և կոմու-նիզմի միջև յեղած այդ ավելի ճշգրիտ և գիտականորեն հիմնա-վորված տարբերությունը առաջին անգամ սահմանեց Մարքսը։ Իսկ ինչով է տարբերվում ստորին աստիճանը՝ սոցիալիզմը, բար-ձրը աստիճանից՝ կոմունիզմից։

Նոր հասարակության այդ յերկու աստիճանները նման են միմյանց նրանով, վոր և՛ այստեղ, և՛ այնտեղ գոյություն չի

ունենալու մասնավոր սեփականություն արտադրության միջոց-ների վրա, գոյություն չեն ունենալու դասակարգեր, և արտա-դրությունն ունենալուչ կազմակերպված ու պլանային բնույթ*)։ Իսկ տարբերվում են նրանք միմյանցից հասարակու-թյան անդամների միջև մթերքները բաշխելու ձևով։

«Աշխատանքի հավասար քանակի համար, պրո-դուկտների հավասար քանակ» — այսպես է բաշխման կանոնը սոցիալիզմի որոք։

Յուրաքանչյուր մարդու աշխատանքը՝ ամբողջ հասարակական աշխատանքի մի վորոշ մասն է, վորոշ բաժինը. նրա համապա-տասխան էլ նա ստանում է ամբողջ հասարակության մեջ արտա-դրված պրոդուկտների յուր բաժինը։ Աշխատողը ներկայացնում է յուր գրքույկը կամ վկայագիրը, վորտեղ նշանակված է, թե վորքան աշխատանք է նա տվել կոլեկտիվին։ Նրանով նա ստա-նում է (դուրս գալով այն աշխատանքը, վորը գնում է հասարա-կական ֆոնդի համար) ճիշտ այնքան, վորքան նա յե տվել հա-սարակության։ Յեթե աշխատողն աշխատել է 5 ժամ՝ վորից մի ժամը նա տալիս է արտադրության լայնացման ու բարելավման և հասարակական ուրիշ կարիքների բավարարման անհրաժեշտ ֆոնդեր ստեղծելու համար, ապա նա կարող է ստանալ պրոդուկտ-ների այնպիսի քանակ, վորպիսին կարող է արտադրվել 4 ժամ-վա ընթացքում։

Կարծես թե թագավորում է լիակատար հավասարություն։ Սակայն Մարքսը յուշ տվեց, վոր պրոդուկտների այդպիսի իբր թե հավասար բաշխումով, վերջնականապես տակավին չի վերացվում առանձին մարդկանց բարեկեցության մեջ յեղած անարդար տար-բերությունը, ամբողջապես չի վերացվում անհավա-սարությունը։

Յեվ իսկապես, այստեղ տարբեր մարդկանց վերաբերյալ կեր-պավորում է միատեսակ չափ, միատեսակ մասշտաբ։ Սակայն մար-դիկ իրականում միատեսակ չեն, հավասար չեն միմյանց։

Յուրաքանչյուրը, հասարակական աշխատանքի մեջ ունե-նալով ուրիշների համեմատությամբ հավասար մաս, հասարարա-կան պրոդուկտից ևս ստանում է ուրիշների համեմատու-

*) Այդ պատճառով էլ հաճախ «սոցիալիզմ» և «կոմունիզմ» բառերը գոր-ծածվում են վորպես հավասարանիշ բառեր։

թյամբ հավասար բաժին։ Սակայն փաստական հավասարություն դեռ չկա, որովհետև մարդիկ հավասար չեն. մեկն ավելի ուժեղ է, մյուսն ավելի թույլ, մեկը միևնույն ժամանակամիջոցում կատարում է ավելի շատ աշխատանք քան մյուսը, մեկն ամուսնացած է, մյուսը ոչ, մեկը յերեխաները շատ ունի, մյուսը քիչ։ Ջե՛ որ հիմա յել հավասար աշխատավարձ ստացող բանվորները միևնույն առատության մեջ չեն ապրում. վոմանք ապրում են ավելի լավ, ավելի հարուստ և լիակատար կերպով բավարարում են իրենց պահանջները, իսկ վոմանք՝ վատ, ավելի աղքատ, զրկելով իրենց յուր բանում։ Բանից դուրս է գալիս, վոր հասարակությունից հավասար քանակությամբ պրոդուկտներ ստացող մարդիկ միատեսակ չեն ապրում։ Այսպիսով մենք գալիս ենք այն, առաջին հացքից, անհեթեթ յեզրակացության, վոր «հավասար իրավունքը» չի վոչնչացնում անհավասարությունը, քանի վոր պրոդուկտները բաշխվում են ըստ աշխատանքի քանակի և վոչ ըստ պահանջների, ինչպես կոմունիզմի ժամանակ։

«Կոմունիզմի առաջին ֆազան,—ասում է Վլադիմիր Իլյիչը,—արդարություն և հավասարություն տալ չի կարող։ Հարստության մեջ յեղած տարբերությունները մնալու յեն, տարբերություններ, վորոնք անխուսափելի յեն, բայց անկարելի յե լինելու մարդու շահագործումը մարդու կողմից, վորովհետև չի կարելի խլել և սեփականացնել արտադրության միջոցները—ֆաբրիկանները, մեքենաները, հողը և այլն»։ Սոցիալիզմի ժամանակ առանձին մարդկանց բաբեկեցության մեջ մի քանի տարբերություններ մնալու յեն, սակայն դրանք չեն լինի դասակարգային տարբերություններ, այսինքն հնարավորություն չեն տալու մարդկանց մի խմբակին իրեն յուրացնել մյուսի աշխատանքը.

Պետության մահացումը.—Մենք մնում է պարզել սոցիալիստական հասարակության մի նոր տարբերությունն ևս կոմունիստականից։ Մենք արդեն գիտենք, վոր ամեն մի պետություն մի մեքենա յե, վորով մի դասակարգ ճնշում է մյուս դասակարգին։ Վոր չափով չկան կապիտալիստները, չկա սեփականություն, չկա շահագործում, չկան դասակարգեր, վոր չափով բոլոր մարդիկ աշխատանքային մի մեծերիմ ընկերության անդամ են, այն չափով էլ պետությունը պետք է մահանա, վորպես մի դասակարգի

բռնության գործիք մյուս դասակարգի վրա։ Այստեղ վոչ մի հիմունք չկա մարդկանց վորևե խմբակին յետ մղելու ամբողջ հասարակական, տնտեսական գործերը ղեկավարելուց։ Այստեղ բոլոր մարդիկ, առանց վորևե բացառության մասնակցում են ղեկավարության գործին։

Սոցիալիզմի որոք, սակայն, պետությունը չի կարող ամբողջապես մեռնել։ Սոցիալիզմը ծնվում և ծագում է կապիտալիզմից, նա ամեն տեսակետից կրում է յուր վրա հին աշխարհի կնիքի հետքերը, նա,—ինչպես արտահայտվում է Մարքսը,—ծածկված է «հին հասարակության ժառանգական բծերով»։ Միանգամից չի ստեղծվելու նոր մարդը, վորի համար հանրակեցության որենքների և հասարակության շահերի պահպանումը սովորություն դարձած լինի։ Կազմակերպված հասարակությունը պիտի պաշտպանի աշխատանքային դիսցիպլինան, պիտի պայքարի ծուլության, աղայության, թափթփվածության և առանձին անձերի հանցագործության դեմ։ Բիչ ժամանակ չի անցնի մինչև մարդիկ մաքրվեն հին հասարակության կեղտից, մինչև նրանք սովորեն կատարել համայնականության հասարակ պայմանները և կանոնները, առանց վորևե բռնության, առանց վորևե յենթարկման, առանց վորևե ստիպողականության, և այդ պատճառով էլ «առանց բռնության առանձին ապպարատի, վորը կոչվում է պետություն» (Լենին)։ Սոցիալիզմի ժամանակ մարդը հասարակությունից տակավին չի կարող վերցնել այնքան մթերք, վորքան ինքն է ուզում. նա պիտի վերցնի ուզիղ այնպիսի քանակությամբ, վորի վրա ինքն իրավունք ունի։ Այդ պատճառով էլ պետք է մնա ստիպողականության ապպարատը, վոր կարողանա ստիպել նրան պահպանել այդ իրավունքը, ստիպել չկատարել այն, ինչի վրա նա իրավունք չունի։ Պետությունը սոցիալիզմի ժամանակ պետք է իրականացնի խիստ կոնտրոլ աշխատանքի չափի և սպառման չափի վրա, պետք է պաշտպանի աշխատանքի հավասարություն և պրոդուկտների բաշխման հավասարություն։

Ձեվ այսպես, պետության, այն է բռնության և ստիպողականության ապպարատի հետքերը սոցիալիզմի ժամանակ դեռ մնում են։ Սակայն այդ պետությունն արմատական կերպով տարբերվելու յե դասակարգային հասարակության պետությունից։

Նա չի լինելու մի վորևե դասակարգի, հասարակության վորևե, թեկուզ մեծ մասի, գործիքը, նա լինելու չե ամբողջ հասարակության կազմակերպությունը։ Այստեղ ստիպողականությունը և բռնությունը չեն ուղղվում հասարակական վորևե խմբի դեմ։ Այստեղ ամբողջ միլիոնների կոլեկտիվը, ամբողջ ընկերական արտելը ստուգում է, պատժում է առանձին մարդկանց հանցագործությունները։ Այդ խնդիրը շատ հասարակ է, հեշտ ու պարզ, և այդ պատճառով էլ պետության դերը հանգելու չե գլխավորապես հասարակ հաշվառման և հսկողության։ Աշխատանքը և աշխատողի ստացած մթերքների քանակը նշանակելու համար հարկավոր չե իմանալ ավելի, քան թվաբանական չորս գործողությունները։ Այդ պատճառով էլ այստեղ պետության աշխատանքը կատարելու չեն վոչ թե առանձին պաշտոնյաներ (չինովնիկները), այլ հասարակության յուրաքանչյուր անդամ, յուրաքանչյուր մարդ։ Այդ բոլոր պատճառների հետևանքով, Լենինը սոցիալիզմի ժամանակվա պետությանն անվանում է «նիրհող», «մահացող», «անհետացող» պետություն։

Կարող են հարցնել. իսկ ինչո՞ւ սոցիալիստական հասարակության մեջ պետք է մթերքները բաժանել յուրաքանչյուրի աշխատանքի չափի համաձայն։ Այդ հարցը շատ կարևոր է և պահանջում է յուր պատասխանը։

Սոցիալիզմը յեվ հասարակության արտադրական ուժերը.— Հասարակության ստեղծած անհրաժեշտ առարկաների քանակը կախում ունի արտադրական ուժերի զարգացման աստիճանից։ Յուրաքանչյուր աշխատող մինուչև ժամանակամիջոցում կարող է արտադրել մթերքների ավելի շատ կամ ավելի քիչ քանակություն, այլ կերպ ասած, նրա աշխատանքը լինում է ավելի կամ պակաս արտադրողական։ Աշխատանքի արտադրողականությունը կախում ունի և նրա լարվածությունից, բայց գլխավորապես՝ մեքենաների վորակից և ուժից, այն մեքենաների, վորոնց ոգնությամբ բանվորն աշխատում է։ Այսպես, հասարակության արտադրական ուժերն այնքան բարձր են, ամբողջ հասարակության արտադրած մթերքների քանակն այնքան շատ է, վորքան հասարակության տրամադրության տակ շատ են մեքենաները, վորքան նրանք ավելի լավ են, վորքան արտադրությունն ավելի խոշոր է։ Որինակ, Ամերիկայում, վորտեղ հասարակության արտադրության

ուժերը ներկայումս գտնվում են ամենաբարձր մակարդակի վրա, բնակչության յուրաքանչյուր անձին, հաշված և փոքրերին ու ծերերին՝ ընկնում է 50 պողպատյա մեխանիկական ստրուկ (այսինքն մեխանիկական ուժով և փոխարինված 50 մարդու ուժ)։

Սոցիալիզմի կառուցման համար անհրաժեշտ է արտադրական ուժերի զարգացման շատ բարձր մակարդակ։ Սոցիալիզմի որոք աղքատությունը պետք է անհետանա, յուրաքանչյուրը պետք է ապահովված լինի լավ և առատ կյանքով, իսկ դա հնարավոր կլինի միայն այն ժամանակ, յերբ հասարակության բոլոր անդամների աշխատանքը դառնա ավելի արտադրողական։ Սոցիալիզմն անհնար է՝ քանի դյուղերն ունեն մեքենաներ չգործադրող միլիոնավոր մանր դյուղացիական տնտեսություններ։ Սոցիալիզմն անհնար է՝ քանի դյուղացին աշխատելով մինչև քրտնքի մեջ խեղդվելը, ապրում է աղքատ և սոված, շնորհիվ յուր աշխատանքի արտադրողականության ցածր լինելուն։ Բայց և ճշգրիտ հաշվառման ու հսկողության վրա հիմնված պլանային և կազմակերպված տնտեսություն էլ չի կարելի ստեղծել՝ քանի դյուղերն ունեն ահագին քանակությամբ մանր, անջատ-անջատ տնտեսություններ։

«Սոցիալիզմն անյերևակայելի յե,—գրում է Լենինը,—առանց նորագույն գիտության վերջնական խոսքի համաձայն կառուցված խոշոր կապիտալիստական տեխնիկայի»։ Սոցիալիզմը կարող է լրիվ կերպով կառուցվել միայն քաղաքն ու դյուղն ընդգրկող խոշոր արդյունաբերության և էլեկտրիֆիկացիայի հիման վրա։

Սոցիալիզմ մտցնելու համար անհրաժեշտ արտադրական ուժերի զարգացման այդ բարձր մակարդակը (այնպիսի մակարդակ, վորը համապատասխանի գոնե արտադրության զարգացման այն բարձրության, վորին արդեն հասել են ամենաառաջավոր կապիտալիստական յերկրները) սակայն բավական չե, վորպեսզի յուրաքանչյուրն ստանա ըստ յուր պահանջների, և վոչ ըստ յուր աշխատանքի։ Նրա համար, վորպեսզի բոլոր մարդիկ կարողանան լիակատար կերպով բավարարել իրենց բոլոր և ամենաբազմազան պահանջները, հարկավոր է արտադրության այնպիսի վերելք, անհրաժեշտ է այնպիսի արդյունաբերություն, վոր նորագույն կապիտալիզմի ստեղծած արդյունաբերությունը նրա առաջ յերևա վորպես վոչնչություն։

Բացի դրանից, միանգամից չեն դաստիարակվում այնպիսի մարդիկ, որոնք կամավոր կերպով տան հասարակության այնքան աշխատանք, որքան կարող են, և որոնք կամավոր կերպով վերցնեն հասարակությունից միայն այն, ինչ իրենց անհրաժեշտ է։ Միանգամից չի անհետանալու դարերով ստեղծված՝ կուտակելու սեփականատիրական սովորությունը։ «Բանվոր դասակարգը,—ասում է Լենինը,—չի կարող մի հարվածով իրենից դեն գցել՝ կապիտալիստների և կալվածատերերի հասարակությունից, շահագործողների և աշխարհակալների հասարակությունից, կեղտոտ շահախնդրության ու քչերի անձնասեր հարստանալու և շատերի աղքատության հասարակությունից ժառանգած թուլությունները և պակասությունները»։ Այդ պատճառով էլ ստիպված պետք է պահպանել մթերքների բաշխումը ըստ աշխատանքի մինչ այն ժամանակ, քանի դեռ չի դաստիարակված՝ հին աշխարհի փոշին իր վրայից թափ տված նոր և ավելի լավ մարդը, քանի դեռ ահագին չափով չեն աճել մարդկային հասարակության արտադրական ուժերը և նրա իշխանությունը բնության վրա։

2. ԿՈՄՈՒՆԻԶՄ

Կոմունիստական հասարակության հիմնական հատկանիշները յեվ առավելությունները.—*Ազատասակարգային հասարակության մեջ մարդկության արտադրական ուժերն անխուսափելիորեն պիտի զարգանան և բարձրանան վեր, անհամեմատորեն ավելի արագ, քան կապիտալիզմի որոք։* Ցեղ հասկանալի յե. ազատվելու յե վիթխարի քանակությամբ էներգիա, որն այժմ մարդկությունը ծախսում է դասակարգային պայքարի վրա։ Դժվար է նույնիսկ հաշվել, թե որքան աշխատանք և ուժ է պահանջվում քաղաքականության, գործադուլների, ապստամբությունների, դատարանների, վոսթիկանության, պետական իշխանության և ամբողջ աշխարհում յեռացող ամենորյա պայքարի վրա։ Կոմունիստական հասարակության մեջ, որտեղ մարդկանց միմյանց դեմ մղվող պայքարը վերջանալու յե, ազատված ամբողջ ուժերը գնալու յեն արտադրական աշխատանքի վրա։

Այստեղ հասարակության տրամադրության տակ պիտի լեն նաև այն անսպառ ուժերը և միջոցները, որոնք քայքայվում և

ծախսվում են կապիտալիստների մրցման որոք, կործանարար կրիզիսների և սարսափելի ու ամեն ինչ ամայի դարձնող պատերազմների պայմաններում։ Միլիարդավոր բանվորական որեր են ծախսված՝ վոչնչացնող գործիքներ պատրաստելու վրա։ Տանյակ միլիոններով սպանվածներ, հաշմանդամ դարձած և աշխատանքի վորնակի շարքից դուրս ընկածներ —այսպես են համաշխարհային տնտեսության անվերադառնալի կորուստները վերջին պատերազմի հետևանքով։ Վորքան ծախսեր են լինում շնորհիվ կապիտալիստական արտադրության անկազմակերպվածության ու թափթփվածության, վորքան ձեռնարկություններ են կործանվում կապիտալիստների փոխադարձ պայքարի պատճառով։ Վերոհիշյալ պատճառների հետևանքով այժմ իզուր կորսվող աշխատանքի այդ հսկայական մասսան կոմունիստական հասարակակարգում միանում յե հասարակության արտադրության տակ։

Պլանաչափ և կազմակերպված տնտեսությունը վոչ միայն նախապաշտպանելու յե ավելորդ ծախսերից, այլ և բացե անելու լայն հնարավորություններ տնտեսությունը տեխնիքական տեսակետից բարելավելու համար։ Ձգետք է մոռանալ, վոր կապիտալիզմի որոք կատարելագործված նոր մեքենաները գործադրվում են վոչ թե այն ժամանակ, յերբ դա ոգնում է բարելավել արտադրությունը, այլ այն ժամանակ, յերբ դա խոստանում է նորանոր ոգուտներ և շահույթներ։ Կապիտալիստի համար կարևոր չեն, թե վորքան, ինչ վորակի և ինչպիսի ապրանքներ են արտադրվում յուր ֆաբրիկայում, նրան կարևոր է միայն շահույթի չափը։ Հասկանալի յե, վոր նա յերբեք չի սկսի գործադրել նոր և թանկ մեքենաներ միայն նրա համար, վոր դրա հետևանքով ավելանում է ֆաբրիկայի՝ հասարակության համար արտադրած մթերքների քանակը։ Նա չի մտածում հասարակության շահերի համար, նա հոգ է տանում միայն իր ոգուտների մասին։ Ցեթե մեքենան արժենա նշանակալի կերպով ավելի եժան, քան իր կողմից դուրս քշված բանվորական ուժը, յեթե մեքենայի գործադրումից նշանակալի չափով բարձրանա շահույթի չափը, ապա միայն այդ դեպքում կապիտալիստը կլինի մեքենայի, նոր տեխնիկայի կողմնակիցը։ Այսպիսով, կապիտալիզմի որոք աղքատությունը և բանվորների ցածր աշխատավարձը դառնում են տեխնիկայի զարգացմանը խոչընդոտ հան-

դիսացող պատճառներ։ Գյուղում, գյուղական տնտեսության մեջ, որտեղ բանվորական ձեռքերն ավելի եժան են քան քաղաքում, բարդ մեքենաների գործադրումն ուշանում է ավելի մեծ չափով։

Կոմունիստական հասարակության մեջ անհետանալու է շահույթի մասին հոգ տանելը, այնտեղ տեխնիկական ամեն մի բարելավում տարածվելու է անմիջապես և կիրառվելու է կյանքում ամեն տեղ։ Ցեվ այդ բարելավումներն ու կատարելագործումները լինելու են անհամեմատ ավելի շատ։ Անհամեմատ լինելու են ավելի շատ նաև գյուտերը, որովհետև մարդիկ լինելու են ավելի կրթված։ Արտադրության ամբողջ ընթացքը հասկացող միլիոնավոր աշխատողներ գիտակցաբար աշխատելու են նրա լավացման և կատարելագործման համար։

Կոմունիստական հասարակության մեջ անհետանալու են իրենց ամբողջ կյանքում անգործ թափառող և ուրիշի հաշվին անչափ ճոխության մեջ ապրող պարազիտ-կապիտալիստները։ Անհետանալու են լակեյները, պալատականները, պաշտոնյաները (չինովնիկները), պոռնիկները, տերտերները, այսինքն պարազիտ դասակարգերին սպասարկող մարդկանց ամբողջ մասսաները։ Անհետանալու են անգործների բանակը, աղքատներն ու մուրացկանները, անապատանները—մի հսկայական ուժ, որը կապիտալիզմի որոք չի ոգտագործվում արտադրության մեջ։ Հասարակության բոլոր անդամները, ամբողջ մարդիկ առանց բացառության պիտի աշխատեն, նրանք իրենց որևա մի մասը պիտի զբաղված լինեն արտադրական աշխատանքով ֆաբրիկներում, տրանսպորտում և հողագործության մեջ։

Մարդկային կուլտուրան, տեխնիկան և գիտությունը հասնելու են չեզած բարձրության և ծաղկման։ Պատրաստված մթերքների քանակն այնքան է ավելանալու, որ հնարավոր է լինելու բավարարել մարդկանց շարունակ աճող պահանջները։ Իսկ այդ պահանջները, իհարկե, լինելու են անհամեմատ ավելի բարձր, ավելի բարդ և ավելի բազմազան քան այժմ։

Ամբողջ կոլլեկտիվի հսկողության տակ, արտադրական աշխատանքը դաստիարակելու է մարդու մեջ հասարակության շահերին գիտակցաբար վերաբերվելու նոր սովորություններ և նոր գիտցիպլինա։ Մարդկանց բոլոր պակասությունների և բոլոր թուլությունների ծնողն են հանդիսանում կապիտալիստական տնտեսության

բանում թագավորող տառապանքը, չքավորությունը, մարդկանց տգիտությունը, մշտական հոգսը մի կտոր հացի համար, մշտական թշնամությունը, անարդարությունը և ճնշումը։ Ցերբ մարդ դևն շպրտի յուր ուսերից վրդովվեցուցիչ և տանջալի հոգսերը վաղվա մասին, յերբ վոչնչացվեն սովը, աղքատությունը և մարդկանց տառապանքները, յերբ անհետանան մարդկանց թշնամության բոլոր հիմքերը, այն ժամանակ մարդը վերջնականապես կդադարի ձգտել սեփականության, կդադարի մտածել անձնական շահի մասին։ Նրա գլխավոր նպատակը և գլխավոր ուզածը լինելու է՝ մարդկանց կյանքն ել ավելի լավացնելու, յուր աշխատանքով հասարակությանը հնարավորության չափ ավելի շատ ոգնելու ցանկությունը։ Ցեվ հենց ինքն աշխատանքն ել դադարելու է լինել հյուծող ու քայքայող մի բեռ. խոշոր ուժ ու լարվածություն պահանջող ամբողջ աշխատանքը, կեղտոտ և անդուրեկան ամեն տեսակի աշխատանքը սկսելու են կատարել մարդու պողպատյա ստրուկները—մեքենաները։ Արտադրության ուժերի զարգացման հետ միասին բանվորական որն ավելի և ավելի կրճատվելու է։ Այլ ևս վոչ մի պատճառ չի լինի, վոր ստիպի պահել մթերքների բաշխումն ըստ աշխատանքի. մարդիկ վերջապես կկիրառելու են կյանքում «յուրաքանչյուրից՝ ըստ իր ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ իր կարիքների» մեծ լոզունգը։

Մարդկությունը բարձրանալու է ապագա սոցիալիստական հասարակության բարձրագույն աստիճանին, այն է՝ լրիվ և լիակատար կերպով յուր զարգացումն ստացած կոմունիզմի աստիճանի վրա։

Այստեղ վերջնականապես անհետանում է ամեն մի ստիպողականություն և մարդկանց կառավարելու ամեն մի կարիք։ Մարդիկ աշխատում են վոչ թե նրա համար, վոր այս կամ այն որենքներն են իրենց ստիպում, այլ կամավոր կերպով, իրենց ցանկությամբ։ Ցեթե մի վորոշ արտադրության համար անհրաժեշտ են նոր աշխատողներ, ապա մարդիկ իրենք են գնում այնտեղ, առանց վորևե հրամանի՝ իրենք են գիտակցաբար կատարում այդ գործը, ղեկավարվելով ամբողջ լերկրագնդի վրա տարածված հաշվառման վիթխարի կայանների տված տեղեկություններով։ Կոմունիստական հասարակության

մեջ չկա նույնպես սպառման մթերքների բաշխման և վոչ մի կանոն։ Մեծ աշխատանքային ընկերության յուրաքանչյուր անդամ, առանց վորևե սահմանափակման վերցնում է իրեն այն մթերքները, վոր ինքն է ուզում և այնքան, վորքան իրեն պետք է։

Բուրժուական գրչակները քիչ չեն աշխատել, վորպեսզի ապացուցեն այդպիսի հասարակակարգի անկարելիությունը. «Յեթե ամեն մարդ սկսի տանել վորքան ուզում է, —ասում էին նրանք,—հասարակությունը կործանվելու է, վորովհետև, բնական է, վոր բոլորն էլ ցանկանալու են վերցնել ինչքան կարելի է ավելի շատ, վերցնել առարկաների անհաշիվ քանակ և այսպիսով թալանելու են ամեն ինչ»։ Այդ մարդիկ իրենց բոլոր ղառողությունների մեջ էլ ծալու է սովորական բուրժուական մարդը, «ոգավորը» և սեփականատերը։ Նրանք չեն հասկանում այն, վոր կոմունիստական հասարակակարգը «յենթադրում է վոչ այժմյան աշխատանքի արտադրողականությունը և վոչ էլ ներկայի քաղքենուն», վորն ընդունակ է «իզուր» փչացնել հասարակական հարստության պահեստները և պահանջել անկարելին» (Լենին)։ Ապագա հասարակության մարդիկ կարիք չեն ունենալու հավաքել իրենց համար ավելորդ մթերքներ, քանի վոր նրանց չպիտի սպառնա սով և աղքատություն և քանի վոր, մյուս կողմից, տիրանալով իրերին, անկարելի պիտի լինի դրանք դարձնել մարդկանց վրա իշխելու աղբյուր, անկարելի պիտի լինի իրենց յենթարկել և շահագործել մարդկանց։

Պրոդուկտների բաշխման կանոնի վերացման և մարդկանց մեջ հասարակական նոր սովորություններ ստեղծելու հետ միասին, վերջնականապես ավարտվելու է և պետության մահացման պրոցեսը։ Մարդիկ ապրելու են առանց վորևե կառավարության, առանց վորևե բռնության, հրամանի, ստիպողականության, այսինքն առանց պետության, վորովհետև դրա դերն այն է, վոր հարկադրում է, ստիպում է, ճնշում է։ Զկա վոչ մի իշխանություն, վոչ վոք չի կառավարում մարդկանց. ամբողջ կոլեկտիվը կազմակերպված կերպով ղեկավարում է արտադրության ընթացքը։ Հասարակությունը կառավարում է իրերը, ա կ ա յ ն վոչ վոք չի կառավարում հասարակության. վոչ վոք չի տիրապետում, վոչ վոք չի յենթարկվում։

Ապրանքային և ապա կապիտալիստական տնտեսության զարգացումը հասցնում է նրան, վոր քաղաքը բաժանվում է գյուղից։ Բուրժուազիան գյուղը յենթարկում է քաղաքին, կյանքի յե կոչում վիթխարի քաղաքներ՝ արդյունաբերության, առևտրի և կուլտուրայի կենտրոններ։

Կապիտալիզմի ստեղծած հակասությունը գյուղի և քաղաքի մեջ հասցնում է նրան, վոր գյուղական միլիոնավոր բնակիչներ ապրում են մոռացության գրկում, կտրված են քաղաքի յեռուն ու դարձով լիքը կյանքից, կտրված են կուլտուրայի աղբյուրներից, մատնված են նրան, ինչին Մարքսն անվանում է «գյուղական կյանքի ապշություն» (իդիոտիզմ)։ Իսկ այդ հակասությունն անքակտելի կերպով կապված է արդյունաբերության տեխնիկայից՝ գյուղական տնտեսության տեխնիկայի շարունակ յետ մնալու և հողագործական աշխատանքի ավելի ցածր արտադրողականության հետ։

Կապերի խզումը քաղաքի և գյուղի միջև, շատ ցավոտ կերպով հարվածում է նաև քաղաքում ապրողին։ Մարդկանց հակայական կուտակումը փոքր տարածության վրա, ջրի, ոդի և հողի թունավորումը, բնությունից կտրված լինելը, մի վորևե պրոֆեսիայի յենթարկված լինելու հետևանքով մարդու ֆիզիքական զարգացման միակողմանիությունը, այդ բոլորը քաղաքի բնակչին դարձնում են թույլ, ջղային, վախկոտ և հյուծված։ Մարդկության մի կեսի մտավոր յետամնացությունն, մյուս կեսի ֆիզիքական այլասերում—ահա քաղաքի՝ գյուղից բաժանվելու հետևանքը կապիտալիզմի որոք։

Կոմունիզմն անկարելի յե առանց այդ հակադրման վերջնական վոչնչացման, վորն սկսվում է արդեն սոցիալիզմի որոք։ Կոմունիզմի որոք չի լինելու վոչ քաղաք և վոչ գյուղ։ Արդյունաբերությունը տարածվելու յե ամբողջ յերկրի վրա, վորովհետև բնության ուժերի ոգտագործման տեսակետից դա ամենահարմարն է։ Տեղի յե ունենալու մարդկության նոր բաշխում ըստ բնակավայրերի։ Մեր յերկրագնդի յերեսն ինքը փոխվելու յե։ Անհետանալու են մեծ քաղաքները, վոչնչացվելու յե մարդկանց ահագին մասսաների անբնական կուտակումը մի տեղում, անհետանալու են նույնպես ամբողջ աշխարհից կտրված, առանձնացված գյուղերը և ագարակները (ֆերմաները)։ Նյու-Յորքը,

յուր յերկնահաս տներով, յուր խեղդող պողպատյա փոքրիկ ընտ-
կարաններով, ապագա մարդկանց թվալու չե վորպես անվերա-
դարձ անցյալի գիրկն ընկած կապիտալիզմի մռայլ հուշարձան:
Մարդիկ բնության դրկում դառնալու չեն ավելի ուժեղ և ավելի
առողջ:

Ամբողջ արտադրությունը և կոլեկտիվ աշխատանքը դյուղա-
կան տնտեսության մեջ, տեխնիկայի և գիտության բոլոր լավա-
գույն նվաճումների կիրառումը նրանում, հասցնելու չեն հո-
ղագործությանը չեզած ու չտեսնված ծաղկման:
Գյուղական միլիոնավոր աշխատողներ ներգրավվելու չեն մարդ-
կության լարված, յեռուն ու պայծառ կուլտուրական կյանքի մեջ:

Կոմունիստական հասարակության մեջ վերջնականապես խոր-
տակվելու չեն մարդկանց բաժանող բոլոր պատնեշները, նույն
թվում և ազգային պատնեշները:

Ազգերը — բուրժուական հասարակության անխուսափելի
պրոդուկտներ են: Սակայն հենց այդ կապիտալիստական զար-
գացումը պատրաստում է պայմաններ՝ ազգերի լիակատար վոչըն-
չացման համար: Ազգային առանձնացումը, տնտեսական փակ-
վածությունը և առանձին ժողովուրդների ոտարացումը, բոլորը,
աճող արդյունաբերության և առևտրի ճնշման տակ, գնալով
անհետանալու չեն: Ցերկրագնդի մի ծայրում արդյունագործված
հում նյութը մշակվելու չե մյուս ծայրում: Մի վորևե հսկա ֆաբ-
րիկայի պատրաստած պրոդուկտները ուղարկվելու չեն հազարա-
վոր վերստերի վրա և սպառվելու չեն շատ յերկրներում: Ստեղծ-
վելու չե համաշխարհային շուկա՝ յուր բոլոր մասերով միմիանց
հետ կապված համաշխարհային տնտեսություն:

Կապիտալիզմը յուր զարգացումով բանվորի համար չի թող-
նում վոչ մի հայրենիք: Բանվորը չունի հայրենիք. նրա հայրե-
նիքը՝ ամբողջ աշխարհն է: Առանց (դեռ Մարքսի արձակած)
«Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք» լոզունգի իրագործ-
ման, անկարելի չե պրոլետարիատի ազատագրումն ամբողջ աշ-
խարհում:

Կապիտալիզմի խորտակման հետ միասին վոչնչացվելու չե նաև ազգերի միջև յեղած թշնամական վե-
րաբերմունքը. ազատագրված ժողովուրդները համախըմբ-
վելու և միացնելու չեն իրենց ուժերը սոցիալիզմի կառուցման

գործում: Վերջնականապես անցյալի գիրկն են ընկնելու շահա-
գործումը և մի ազգի՝ մյուսին յենթարկվելը: Ամբողջ մարդկու-
թյան համերաշխ և կոլեկտիվ աշխատանքի պրոցեսում աստի-
ճանաբար վոչնչացվելու չեն ազգային տարբերությունները
մարդկանց միջև, անհետանալու չե ինքը մարդկու-
թյան բաժանումն առանձին ազգերի: Ցերկրագնդի
տարբեր ծայրերում ապրող մարդկանց կուլտուրական և տնտե-
սական սերտ հարաբերությունների անհրաժեշտությունը, տեխ-
նիկայի, գիտության և գեղարվեստի բոլոր նվաճումների ավելի
թեթև և արագ տարածելու կարիքը, համաշխարհային ամբողջ
տնտեսության ընթացքը հաշվի առնող և նրա համար պլան կազ-
մող համաշխարհային հաշվառման բյուրոների ստեղծումը,—ահա
այդ բոլորը հասցնելու չեն՝ ամբողջ յերկրագնդի մարդկանց համար
մատչելի մի ընդհանուր լեզվի ստեղծման:

Մարդկությունը, վորին կապիտալիզմը բաժանել և բազմա-
թիվ թշնամական մասերի, վերջապես նորից միանալու չե միաս-
նական, անբաժան համաշխարհային կոլեկտիվի մեջ:

Կոմունիստական հասարակակարգում ավարտվելու չե կա-
նանց ազատագրման և իրավահավասարեցման գոր-
ծը, հաստատվելու չե կանանց և տղամարդկանց փաստական
հավասարություն:

Դա հնարավոր և դառնալու միայն շնորհիվ բուրժուական
ընտանիքի վոչնչացման, ընտանիքի, վորի հիմքը հանդիսանում
է մասնավոր սեփականությունը: «Կոմունիստական Մանիֆեստ»-
ում Մարքսն այսպես է ասում ընտանիքի մասին: «Ինչի՞ վրա չե
պահվում ժամանակակից բուրժուական ընտանիքը: Կապիտալի,
մասնավոր վաստակի վրա: Լիովին զարգացած ձևով այդ ընտա-
նիքը գոյություն ունի միայն բուրժուազիայի համար, բայց նա
գտնում է յուր անհրաժեշտ լրացումը պրոլետարների հարկա-
դրյալ անընտանեկանության, ինչպես նաև բացարձակ պոռնկու-
թյան մեջ»: Ամուսնությունը բուրժուական միջավայրում՝ դրա-
մական շահերին յենթարկված տնտեսական մի գործարք է: Կինը
ծախվում է ինչպես ապրանք:

Շնորհիվ կապիտալիստական խոշոր արդյունաբերության
զարգացման, գնալով ավելի և ավելի չեն քայքայվում ընտանե-
կան կապերը պրոլետարական միջավայրում: Արդեն վոչ միայն

«ընտանիքի հայրն» է բանվոր, այլև կինը. իսկ շատ հաճախ, յերեխաները ևս ամբողջ որն անց են կացնում ֆաբրիկայում: Այստեղ այլևս ինչ ընտանեկան դյուրալիութիւն, ինչ ընտանեկան ոջախ կարող է լինել, յերբ ամբողջ ընտանիքը հավաքվում է միայն յերեկոյան, իսկ առավոտը նորից բաժանվում: Այլևս յերեխաների ինչ դաստիարակութիւն կարող է լինել, յերբ ծնողները ամբողջ որերով նրանց չեն տեսնում. յերեխաները կամ ապրում են առանց վորևե խնամքի և կամ վաղ հասակից զբաղված են ֆաբրիկայում իրենց ուժից վեր աշխատանքով: Կապիտալիզմի որոք, խոշոր մեքենայական ինդուստրիան ցիրուցան է անում, քայքայում է բանվորական ընտանիքը և իրականում, պրոլետարների խոշոր մասի համար, վոչնչացնում է ընտանեկան կյանքը:

«Ինչպես ել սարսափելի և զզվելի չթվա (ասում է Մարքսը) հին ընտանեկան հարաբերութիւնների քայքայումը կապիտալիստական սիստեմի որոք, այնուամենայնիվ, խոշոր արդյունաբերութիւնը տնտեսական նոր հիմք է ստեղծում ընտանիքի ավելի բարձր ձևի և յերկու սեռերի հարաբերութիւնների համար»: Շատ սարսափելի չարիքներ է բերում ընտանիքի այդ քայքայումը կապիտալիզմի որոք, սակայն նա հասցնում է նրան, վոր կինը տան աղախնուց դառնում է իրավահավասար աշխատող: Ավելի պակաս չէ՝ ֆաբրիկաներում յերեխաների անժամանակ ծանր աշխատանքից հասած ցավը ու վիշտը. այսպես ուրեմն, միայն կոլլեկտիվ աշխատանքի վրա կարող է հիմնվել դաստիարակութիւնը ապագա հասարակութեան մեջ:

Կապիտալիզմի և սեփականութեան վոչնչացման հետ միասին անհետանալու յե և բուրժուական ընտանիքը: Յերեխաների խնամքը և դաստիարակութիւնը, վոր հիմնված կլինի աշխատանքը ուսուցման հետ միացնելու վրա, դառնալու յե հասարակական գործ: Կինն այլևս չի լինելու խոհանոցի սարկուհին, վորովհետև կոմունիզմի ժամանակ լիակատար կերպով իրականացվելու յե հասարակական կերակրումը:

«Սեռերի հարաբերութիւնը դառնալու յե մասնավոր գործ, վոր վերաբերվելու յե միայն շահագրգռված անձերին և վորում հասարակութիւնը չի կարողանալու խառնվել: Վոչնչացվելու յեն մասնավոր սեփականութեան հետևանքով ծնվող ժամանակակից

ամուսնութեան յերկու հիմքերն էլ, այն է՝ կնոջ կախումն ամուսնուց և յերեխաներինը՝ ծնողներից» (Ենգելս): Մարդիկ միանալու յեն և բաժանվելու բոլորովին ազատ կերպով խորը և փոխադարձ գրավման հիման վրա: Վերջնականապես պիտի վոչնչացվեն կապիտալիզմի ստեղծած՝ կանանց ընդհանրացումը և կապիտալիստական ամուսնութեան մեջ ծաղկող կեղտոտ խաբեբայութիւնը: Տղամարդու և կնոջ հարաբերութիւնները լինելու յեն պարզ, աղնիվ և մաքուր:

Կապիտալիստական հասարակութեան մեջ աշխատանքը մարդկանց միջև բաժանված է այնպիսի ձևով, վոր բանվորը ստիպված է յերկար տարիների ընթացքում զբաղվել միևնույն պրոֆեսիայով: Կոշկակարը յուր ամբողջ կյանքում կարում է միայն կոշիկներ, դարբինը պատրաստում է յերկաթյա իրեր, դագաղագործը մեռելների համար դագաղներ և այլն: Շատ հաճախ վոքրիկ, միևնույն շարժումները պահանջող, չնչին և պարզ աշխատանքի ամենօրյա կատարումը բթացնում է մարդուն և նրան դարձնում հաշմանդամ ու մեքենայի կցորդ: Կոմունիզմը վոչնչացնում է կապիտալիստական աշխատանքի բաժանումը մարդկանց միջև և մարդու յենթարկումը պրոֆեսիային: Այստեղ պատրաստվում են բազմակողմանի կերպով զարգացած և սովորած մարդիկ, վորոնք ըստ Վլադիմիր Իլյիչի արտահայտութեան, «ամեն բան գիտեն անել»: Կրթութիւնը, նույնիսկ ամենաբարձրը, ամենախորը և հիմնականը, այլևս չի լինելու փոքրաթիվ յերջանիկների բաժինը, նա դառնալու յե մատչելի բոլորին, նա լինելու յե ընդհանուրի սեփականութիւն: Կարճ բանվորական որը թողնելու յե ահագին ժամանակ՝ գիտութեամբ և գեղարվեստով զբաղվելու համար, աշխատանքը դառնալու յե շատ ավելի բազմազան, ավելի հրապուրիչ, քան այժմ: Մարդը կարճ ժամանակամիջոցից հետո կարող է կատարել բազմազան աշխատանքներ. որինակ, մեքենայի վրա աշխատելուց կարող է անցնել լաբարատորիաներում հետազոտական աշխատանք կատարելուն, այնուհետև կարող է զբաղվել թռչող ապարատների վրա, վերջապես յեթե ցանկանա, կարող է զբաղվել այգիներն և անտառները խնամելով: Յուրաքանչյուր մարդ սկսելու յե տանել և՛ մտավոր, և՛ ֆիզիքական աշխատանք, անցնելու յե մեկից՝ մյուսին: Բաժանումն ուսում-

նականների և վոչ ուսումնականների, մտավոր և ֆիզիքական աշխատանքի մարդկանց — վերջնականապես անհետանալու չեն։ Մարդը կարողանալու չե զբաղվել այն աշխատանքով, վորն իր սրտին մոտ է, վորով նա ամենից շատ է հետաքրքրվում, վորին նա ավելի շատ է ընդունակ։ Աշխատանքն այլևս չի լինելու մի ծանր բեռ, նա լինելու չե ուրախություն և մարդու կենսական ամենաառաջին պահանջը։ Վերջնանալու չե անձնական գույության համար մղվող պայքարը, մոռացության են տրվելու ճնշող հոգսերը մի կտոր հացի համար, մարդը չուր ամբողջ ուժերը նվիրելու չե բնության դեմ պայքարելու և նրա ուժերին տիրելու համար։ Ապագա մարդը մեծ հաղթանակներ է տանելու բնության վրա և մեծապես ավելացնելու չե չուր ուժը։

Ամենահայտնի գյուտարարների, մտածողների, գեղարվեստագետների թիվը աճելու չե ահագին չափով։ Գիտությունները պիտի զարգանան ու տարածվեն չտեսնված արագությամբ և ուժով, մարդը դառնալու չե բնության և չուր սեփական վիճակի, բախտի տերը։ Նա կառուցելու չե չուր կյանքն առանց վորևե խոչընդոտի այնպես, ինչպես ինքն է ուզելու։ Առաջին անգամ նա դառնալու չե ազատ։

Գտնվեցին մարդիկ, վորոնք ճգնեցին ապացուցել, վոր կոմունիզմը—մի մեծ կազարմա չե, տխրության թագավորություն, վորտեղ մարդիկ, ինչպես սոլդատները շարքում, նման են միմիանց։ Այդ բոլոր խոսակցությունները հիմարություններ են և անմտություն։ Հենց կոմունիստական հասարակության մեջ չեբևան պիտի գան ամեն մի մարդու մեջ թաղնված բոլոր ուժերը, ընդունակությունները, առանձնահատկությունները։ «Միայն սոցիալիզմը,—ասում է Լենինը- վոչնչացնելով դասակարգերը և ժառանգաբար ստրկացված մասսաները, բաց է անում ճանապարհ մրցման համար իսկապես մասսայական մաշտաբով»։ Միայն այստեղ մարդ կարող է զարգացնել ու ամբողջ ընդունակությունը, միայն այստեղ նա կարող է հասնել իսկական և լիակատար ծաղկման։ Կոմունիզմը ստեղծելու չե նոր մարդ։

3. ԱՆՑՈՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՐԳ

Մենք արդեն գիտենք կապիտալիստական, սոցիալիստական և կոմունիստական կարգերի հիմնական հատկանիշները։ Իսկ

ինչպիսի կարգ գոյություն ունի այժմ մեր խորհրդային երկրում։ Մեր հանրապետության «Սոցիալիստական հանրապետությունների միություն» անունը չի՞ նշանակում արդյոք, վոր մենք արդեն ապրում ենք սոցիալիզմի մեջ։

Այդ հարցին Լենինը պատասխանում է, վոր վոչ մի կոմունիստ, թվում է, չի ժխտել այն, վոր «Խորհրդային սոցիալիստական հանրապետությունը» արտահայտությունը նշանակում է խորհրդային իշխանության՝ սոցիալիզմին անցնելն իրագործելու վճռողականություն և վոչ թե այն, վոր տվյալ տնտեսական կարգերն նա ընդունում է վորպես սոցիալիստական։ Ցեվ այսպես, այն հարցին, թե գոյություն ունի արդյոք սոցիալիզմ մեր երկրում, Լենինն ուղղակի պատասխանում է. «Վոչ, մեր գլխավոր խնդիրը հենց սոցիալիզմին անցնելն է հանդիսանում»։ Ցեվ Մարքսը, և՛ Լենինը վաղուց արդեն ցույց են տվել, վոր կապիտալիզմի և սոցիալիզմի միջև պիտի գոյություն ունենա անցողական չրջան, առաջինը յերկրորդով փոխարինելու չրջան։ «Անցողական» անունը, ինչպես մատնանշում է Լենինը, նշանակում է հենց այն, «վոր տվյալ կարգում կան և՛ կապիտալիզմի, և՛ սոցիալիզմի տարրեր, մասնիկներ, կտորներ»։ Կապիտալիզմը հաղթված և պրոլետարական հեղափոխության կողմից, բայց տակավին չի վոչնչացված։ Սոցիալիզմն արդեն ծնվել է, բայց տակավին չի կարողացել նեղել և դուրս մղել տնտեսական հին կարգերի ճնացորդները։ Յերկրի տնտեսությունը խայտաբղետ է, վոչ միատեսակ, կողք կողքի և միմիանց հետ պայքարելով գոյություն ունեն զանազան տնտեսական ձևեր։ Մեր ահագին յերկրում, Լենինը հաշվում է հինգ այդպիսի ձևեր։

Առաջինին Լենինն անվանում է «ն ա հ ա պ ե տ ա կ ա ն», այսինքն նշանակալի չափով գ յ ու ղ ա ց ի ա կ ա ն բ ն ա կ ա ն (ն ա հ ա ն ու ր ալ) տ ն տ ե ս ու թ յ ու ն»։ Լենինն այստեղ ի նկատի ունի այն փակ տնտեսությունները (որինակ. անասնապահ-քոչվորների), վորոնք համարյա վոչինչ չեն գնում և վոչինչ էլ չեն ծախում, իրենց համար անհրաժեշտ յեղած համարյա բոլոր իրերն իրենք են արտադրում և շատ քիչ ու թույլ են կապված շուկայի հետ։ Դրանք վոչ միայն մինչ-կապիտալիստական, այլև մինչ ապրանքային՝ հին պատենական տնտեսության ճնացորդներն

են։ Նրանք, իհարկե, մեր յերկրի տնտեսական կյանքի մեջ նշանակալից դեր չեն խաղում։

Բայց դրա փոխարեն, Լենինի թված ձևերից յերկրորդը՝ «մանր ապրանքային արտադրությունը», ունի տարածին նշանակություն։ Ըստ Լենինի, այստեղ է մտնում հացի ծախող գյուղացիների մեծ մասը, այստեղ են մտնում նաև շուկայի համար աշխատող տնայնագործները։ Այսպիսի մանր, ցիր ու ցան յեղած տնտեսություններ ԽՍՀՄ մեջ գոյություն ունեն ահագին քանակությամբ. նրանց թիվը հասնում է մոտ 25 միլիոնի և մեր գյուղական տնտեսության պրոդուկտների մեծ մասը նրանք են արտադրում։

Վորո՞նք են այդ ձևի գլխավոր հատկությունները։ Այստեղ մենք գործ ունենք մանր արտադրողների, մանր սեփականատերերի հետ, վորոնք ունեն իրենց սեփական արտադրության միջոցները՝ աշխատող անասունները և այլն (այն հողը, վորի վրա նրանք աշխատում են, պատկանում է պետության)։ Մանր արտադրող-գյուղացիները կապիտալիստներ չեն. նրանք բանվորներ համարյա չեն վարձում, ուրիշի հաշվին չեն ապրում։ Սակայն, մյուս կողմից, նրանք կազմում են յուր պրոդուկտների առևտուր անող մանր տերերի դասակարգ։ Իրենց դրությամբ նրանք կանգնած են պրոլետարիատի և բուրժուազիայի միջև։ «Գյուղացիները առանձին դասակարգ են,—ասում է Լենինը։—Վորպես ռանչպարներ, նրանք կապիտալիստական շահագործման թշնամիները են, բայց միևնույն ժամանակ նրանք սեփականատերը են. գյուղացին ձեռքով դաստիարակված է նրանով, վոր հացն իրն է, և վոր նա ազատ է այդ ծախելուց»։

Մենք գիտենք, վոր ապրանքային տնտեսության գոյության որոք, մանր տնտեսությունն անխուսափելիորեն կործանվում է և նրա տեղը բռնում է խոշորը։ Կապիտալիզմի պայմաններում գյուղում խոշոր տնտեսություն ստեղծվելու համար միայն մի ուղի կա. դա—գյուղացիների մեծ մասի քայքայման և կուլակ-աշխարհակերների ուռճացման ուղին է։

Մեր անցողական հասարակակարգում գոյություն ունեն և՛ միլիոնավոր սեփականատերեր, և՛ ապրանքների ազատ փոխանակություն»։ «Ազատ առևտրի հողի վրա,—ասում էր Լենինը,—կապիտալիզմը չի կարող չաճել»։ Այդ պատճառով էլ մեզ

մոտ, թեկուզ ավելի պակաս չափերով, քան կապիտալիզմի որոք, գյուղում աճում է կուլակային, կապիտալիստական տնտեսությունը։

Սակայն, խորհրդային յերկրում մանր գյուղական տնտեսությունները խոշոր տնտեսություններ դարձնելու համար զոյություն ունի մի ուրիշ, յերկրորդ ուղի յել, վորը կապիտալիզմի որոք չկա և չի կարող լինել։ Դա—առանձին գյուղացիական տնտեսությունների միացումն է մի խոշոր ընկերական, կոլլեկտիվ տնտեսության մեջ, վորտեղ բոլոր աշխատողները միահամուռ կերպով աշխատում են և մեքենայի ուժից ընդհանուր ձևով ոգտվում։

Անցողական կարգի գլխավոր հարցն այն է, թե այդ յերկու ուղիներից վո՞րն է հաղթելու.—շերտավորման, կապիտալիստական, թե՞ համախմբման, կոլլեկտիվացման՝ սոցիալիստական ուղին։ «Մե՞նք ենք, արդյոք, կազմակերպելու մանր գյուղացիությանը, թե՞ կապիտալիստներն են նրան յենթարկելու իրենց,—դրանից կախում ունի պայքարի յելքը»,—ասում է Լենինը։

Յերրորդ ձևը, յերրորդ աստիճանը — մասնավոր կապիտալիստական տնտեսությունն է։ Դա ներկայացնում են կապիտալիստների-շահագործողների դասակարգի պահպանված և նորից ծնված մասնիկները։ Այստեղ մտնում են բանվորների աշխատանքի հաշվին ապրող մանր և յերբեմն էլ միջակ ձեռնարկությունների տերերը, տնայնագործներին և մանր արտադրողներին ստրկացնող առևտրականները, վաշխառուները և գնորդ-միջնորդները։ Մեր յերկրում կապիտալիստական դասակարգի ամենաթույլ մասն է և դրա համար էլ ամենաուժեղ ու վտանգավոր մասը հանդիսանում է նրա գյուղական մասը—կուլակները։

Այնուհետև գալիս է «պետական կապիտալիզմը»։ Պրոլետարական դիկտատուրայի պայմաններում Լենինը պետական կապիտալիզմ է անվանում այն կապիտալիզմը, վորի վրա պրոլետարական պետությունը սահմանում է յուր հսկողությունը, վորի աշխատանքը նա ստուգում է, սահմանափակում, վորի աշխատանքը նա գնում է և վորոշ, նախորոք նշված «շրջանակի» մեջ, ըստ վորում, պետության կողմից դրված շրջանակներով յուր գործունեությունը սահմանափակելուն համաձայնվում է

ինքը կապիտալիստը (կապիտալիստի կնքած պայմանագիրը պրոլետարական պետության հետ՝ կոնցեսիա, կապալ և այլն վերցնելիս)։ Այստեղից էլ պրոլետարական պետության համար հնարավորություն է ստեղծվում — պետականացնել ոգտագործել՝ տնտեսությունը պլանային կերպով կանոնավորելու նպատակով։ Այդ չորրորդ ձևի (պետականացում) տարբերությունը հետևյալ՝ հինգերորդ ձևից (սոցիալիզմ) այն է, որ պետականացնելիս պետական ձեռնարկություններում շարունակում է մնալ աշխատանքի և կապիտալի հակադրությունը, այսինքն բանվորների աշխատանքի շահագործումը կապիտալիստի կողմից։ Ինչպես պետականացնելիս ավելի բնորոշ հատկանիշ հանդիսանում են մեզ մոտ կոնցեսիաները։ Այստեղ կապիտալիստական ձեռնարկությունը սկսում է իր աշխատանքը պրոլետարական պետության հետ կնքված պայմանագրի համաձայն։ Ոտարերկրյա կապիտալիստները ստանում են պետությունից անտառներ, հանքեր կամ հողի ընդերք՝ ճշգրիտ սահմանված պայմաններով և որոշ ժամանակով ոգտագործելու համար։

Հինգերորդ և վերջին ձևը Լենինն անվանում է «սոցիալիզմ»։

Արդյունաբերությունը, տրանսպորտը, հողի ազգայնացումը, արտաքին առևտրի մենաշնորհը, բանկերը, պետառևտուրը և կոոպերացիան, կոլեկտիվ տնտեսությունները և խորհրդային տնտեսությունները գյուղում, — ահա սոցիալիզմի հրամայողական բարձունքները մեր երկրում։

Պրոլետարական հեղափոխությունը ստեղծել է տնտեսության սոցիալիստական նոր տիպ։ Պետական յուրաքանչյուր ֆաբրիկա, յերկաթուղի, խանութ, — ամրացող սոցիալիզմի կտորներն ու մասնիկներն են։ Այստեղ բացակայում է կապիտալիստական ձեռնարկության գլխավոր հատկանիշը, բացակայում է մասնավոր սեփականատեր-կապիտալիստը, այստեղ չկա մասնավոր սեփականություն՝ արտադրության միջոցների և գործիքների վրա։

Կապիտալիստական ձեռնարկության մեջ հակադրված են միմիանց յերկու թշնամի դասակարգեր՝ սեփականատեր կապիտալիստը և բանվորը։ Մեր ձեռնարկությունների սեփականատերը հանդիսանում է պրոլետարական պետությունը, այսինքն

պետական իշխանության մեջ կազմակերպված ամբողջ պրոլետարիատը։ Խորհրդային արդյունաբերության մեջ կա միայն մի դասակարգ. նա և՛ աշխատում է արդյունաբերության մեջ, և՛ նրա տերն է, և՛ ղեկավարում է նրան՝ յուր պետության միջոցով։

Մեր ձեռնարկություններում չկա շահագործում։ Կապիտալիստական շահագործման էությունն այն է, որ բուրժուան, տնօրինելով արտադրության միջոցների վրա յեղած սեփականության, կարող է խլել բազմաթիվ բանվորների աշխատանքով ստեղծված հավելյալ արժեքը։ Մի դասակարգ, սեփականության հիման վրա, յուրացնում է մյուս դասակարգի աշխատանքով արտադրված պրոդուկտը։ Մեզ մոտ պրոդուկտի սեփականատերը հանդիսանում է կազմակերպված պետությունը, այն է՝ բանվոր դասակարգը. մեզ մոտ շահույթը ծախսվում է վոչ թե առանձին կապիտալիստին հարստացնելու համար, այլ սոցիալիստական արդյունաբերությունը լայնացնելու և լավացնելու, բանվոր դասակարգի և պրոլետարական պետության կարիքների համար։

Այդ պատճառով էլ տարբեր են նաև այն նպատակները, վոր ունեն կապիտալիստական և սոցիալիստական ձեռնարկությունները։ Կապիտալիստական ձեռնարկության նպատակը՝ շահույթ ստանալն է։ Սոցիալիստական արդյունաբերությունը, թեև խնդիր է դնում աշխատել շահույթով, նրա համար, վորպեսզի ստեղծի արտադրությունը լայնացնելու հնարավորություն, սակայն նրա նպատակը հանդիսանում է վոչ թե շահույթը, վորպես այդպիսին, այլ արտադրած պրոդուկտների քանակի շատացումը և վորակի լավացումը, արտադրության լայնացումը, այսինքն աշխատավորների կարիքների ամենալավ բավարարումն։

Ճիշտ է այն, վոր մեզ մոտ բանվորը չի ստանում յուր աշխատանքի ամբողջ պրոդուկտը, սակայն դա չի նշանակում, վոր մեզ մոտ շահագործում կա։ Վոչ սոցիալիզմի և վոչ էլ կոմունիզմի ժամանակ յերբեք աշխատողը չի ստանալու յուր աշխատանքի ամբողջ պրոդուկտը, վորովհետև միշտ էլ իր աշխատանքի պրոդուկտի մի մասը գնալու է արտադրության լայնացման և հասարակական կարիքների բավարարման վրա (յերեխաների դաստիարակությունը, ծերերի, հիվանդների խնամքը և այլն)։

Եթե ամբողջ բանվոր դասակարգի աշխատանքի մի մասը չհատկացվի ամբողջ արդյունաբերության ծավալման ֆոնդին, չհատկացվի նոր ֆաբրիկաների կառուցման և հների լավացման համար, ապա հասարակական զարգացումը կանգ և առնելու, հասարակական տնտեսությունը քայքայվելու չե և առաջ չի գնալու։

Մեր ձեռնարկությունները հաճախ վատ են աշխատում, մեզ մոտ առանձին մարդիկ գողություն են անում, չարաշահությամբ են զբաղվում։ Կապիտալիստական շատ ձեռնարկություններ մերիններից ավելի լավ են աշխատում, նրանցից շատերում չարաշահությունները ավելի քիչ են։ Սակայն կապիտալիստական ամենալավ ձեռնարկություններն աշխատում են կապիտալիստի համար, հանդիսանում են բանվորներին շահագործելու գործիք, իսկ մերն՝ առայժմ թեկուզ վատ են աշխատում, բայց աշխատում են բանվորների համար։ Այնտեղ ամեն մի բարելավում, չարաշահությունների ամեն մի պակասում կատարվում է կապիտալիստի օգտի համար, իսկ մեզ մոտ՝ բանվոր դասակարգի օգտի համար։

Մեր ձեռնարկություններն հիմնովին տարբերվում են կապիտալիստական ձեռնարկություններից։ Իզուր չե, որ Լենինը նրանց անվանում է «հետևողական սոցիալիստական տիպի (որովհետև նրանց մեջ և՛ արտադրության միջոցները, և՛ հողը, որի վրա կանգնած է ձեռնարկությունը, և ամբողջ ձեռնարկությունն՝ ամբողջովին վերցրած՝ պատկանում են պետության) ձեռնարկություններ»։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ անցողական հասարակարգում գոյություն ունեն տնտեսության զանազան ձևեր։ Նրանցից գլխավորները հետևյալներն են՝ սոցիալիստական, մանրագյուղացիական և կապիտալիստական։

Սոցիալիստական sտրեի դեկավարող դերը յեվ բանվոր դասակարգի անելիքները. — Մեր ժողովրդական տնտեսության մեջ սոցիալիստական և կապիտալիստական ձևերն անընդհատ պայքար են մղում միմյանց դեմ։ Այդ պայքարը միևնույն ժամանակ հանդիսանում է պայքար մանր գյուղացիական տնտեսության զարգացման ուղիների համար։ Սոցիալիստական տնտեսությունը հաղթելու չե, եթե մեր տնտեսության սոցիալիստական տարրերը գյուղը տանեն կոլեկտիվ աշխատանքի սոցիալիստական ուղիով, հակառակ դեպքում կապիտալիստական տարրերը շուռ են տալու գյուղը դեպի կապիտալիզմ։

Սոցիալիզմի խնդիրը, մեր ամբողջ տնտեսությունն առաջ տանող մեր խոշոր արդյունաբերության և պլանային տնտեսական ղեկավարության խնդիրն է — նեղել և դուրս մղել կապիտալիստական տնտեսությունը և վերակառուցել մանր-գյուղացիական տնտեսությունը՝ միլիոնավոր գյուղական տնտեսություններն ամբողջապես կոոպերացման յենթարկելու, կոլեկտիվ աշխատանքի և արտադրության միջոցներին կոլեկտիվ կերպով տիրելու հիման վրա։

Վոր չափով ճնում են տնտեսության զանազան ձևերը, այն չափով էլ ճնում են դասակարգերը և դասակարգային պայքարը։ Ահա թե ինչ է ասում Վլադիմիր Իլյիչը անցողական եղանակում գտնվող դասակարգերի մասին. «Դասակարգերը ճնացել են և ճնալու չեն պրոլետարական դիկտատուրայի եղանակի ընթացքում։ Դիկտատուրան պետք չի լինի, յերբ դասակարգերն անհետանան։ Նրանք առանց պրոլետարական դիկտատուրայի չեն անհետանալու։ Դասակարգերը ճնացել են, սակայն պրոլետարական դիկտատուրայի եղանակում նրանցից յուրաքանչյուրը կերպարանափոխվել է, փոխվել և նրանց փոխհարաբերությունը՝ պրոլետարական դիկտատուրայի որոք դասակարգային պայքարը չի անհետանում, այլ միայն ընդունում է նոր ձևեր»։

Բանվոր դասակարգի խնդիրն այն է, որ շարունակելով անխոնջ պայքարը, կապիտալիստներին ճնշելը, ուժեղացնելով հարձակումը նեպմանի վրա քաղաքում և կուլակի վրա գյուղում, ամուր պահի բանվոր դասակարգի դաշինքն աշխատավոր գյուղացիության հետ և այդ դաշինքի հիման վրա աշխատավոր գյուղացիության հիմնական մասսային ակտիվ կերպով մասնակից դարձնի սոցիալիզմի կառուցման գործին մեր յերկրում. նա պետք է գյուղացիության հիմնական այդ մասսային ներգրավի՝ սեփականատեր-գյուղացու, անհատ-գյուղացու աղքատ տնտեսությունը որինակելի կոլեկտիվ տնտեսություն դարձնելու գործի մեջ, մի տնտեսություն, որը հիմնված է ընդհանուր աշխատանքի վրա, արտադրության միջոցներին կոլեկտիվ կերպով տիրելու վրա։

ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԳՐՔԵՐԻՑ ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ ՀԵՏԵՎՅԱԼՆԵՐԸ

Սոցիալիզմի ուղին,—Ն. ԲՈՒԽԱՐԻՆ . . . . . 1 ռ. 25 կ.
Ազգայի՛ն Հարց,—Ի. ՍՏԱԼԻՆ . . . . . 1 ռ. 60 »
Գյուղացիական Հարց,—Ի. ՍՏԱԼԻՆ . . . . . 50 »
Լե՛նինի պատգամները ժողովրդ. լուսավորության մասին 20 »
Լենինի պատգամներ յերիտասարդության . . . . . 15 »
Հաւ. Կոմկուսի (բ) պատմությունը,—Վ. ՎՈԼՍԵՎԻՉ . . 1 ռ. 50 »
Բոլշեվիկ՛ների կուսակցությունը 1917 թվին,—
ՑԵՐ. ՑԱՐՈՒԼԱՎՍԻՑ . . . . . 85 »
Ի՞նչ տվեց Հոկտեմբերը բանվորներին,—Մ. ՏՈՒՄՍԿԻՑ . . 20 »
1905 թ. մեր I-ի՛ն բանվորա-գյուղացիական հեղափոխությո՛ւնը,—Ի. ՖԼԵՐՈՎՍԿԻՑ . . . . . 70 »
Քաղաքական բառարան,—կազմեց Վ. ԱԲՐԱՄՑԱՆ (656 եջ) 2 ռ. —
Պատմական մատերիալիզմի այբուբենը . . . . . 80 »
Գալիարի յի՛վ ճիւարաության տասը տարի,—Ի. ՆՈՎԱԿՈՎՍԿԻՑ . . . . . 70 »
«Ի. ՍՏԱԼԻՆ» (համառ. կենսագր.) . . . . . 7 »
Ինչպես աշխուժացնել գյուղխորհուրդները,—Զ. ԼԱՎՐԵՆՏՑԵՎ 30 »
Պատերազմ չենք ուզում, բայց դ մադ՛ելու պատրաստ ենք,—
ՑԱ. ԱՎԻՆՈՎԻՑԿԻՑ յեվ Վ. ՁԱՐՁԱՐ . . . . 10 »
Ինչով է ուժեղ կարմիր բանակը,—ՁՈՐԻՆ . . . . . 15 »
Տգիտությունը յեվ սնահավատությունը,—Վ. ԴՄԻՏՐԻԵՎ 15 »
Մե ոդական ձեռնարկ (ուսուցիչների համար) . . . . 70 »
Հասարակագիտությունը I-ին ասիճանի դպրոցում,—
Բ. ԺԱՎՈՐՈՆԿՈՎ . . . . . 65 »
Գեղջկուհին յեվ յերեխաները, ... 25 »
Ի՞նչպես է սարված տիյեզերքը,—Գ. ԳՐԱՎԵ (նկարազ.) 50 »
Աւրեվը, նրա վորդիները յեվ բռնները,—Բ. ՍԵՄԵՑԿԻՆ (նկ.) 40 »
Ինչպես է առաջացել յեվ զարգացել կյանքը յերկրի վրա,
Մ. ԳՐԵՄՑԱՑԿԻ (նկարազարդ) . . . . . 50 »

Մարդու յեվ կենդանիների ծագումը,—Դ. ԱԴՈԼ (նկ.) . 35 »
Մարդ-մեքենա,—Մ. ԳՐԵՄՑԱՑԿԻ (նկարազարդ) . . . . »
Մարդու անհետանալի բռնամիները ու բարեկամները,—
Լ. ՋԻԼԲԵՐ (նկարազարդ) . . . . . 20 »
Վnrոs, կայծակ, ելեfտրականությունը,—Մ. ԳՐԵՄՑԱՑԿԻ
(նկարազարդ) . . . . . 40 »
Պատանի Պիոներ (ժողովածու, նկարազարդ) . . . . . 60 »
Պիոներ, հետեվիր Լենինի պատգամներին . . . . . 20 »
Հոկտեմբերը (համառ. պատմ.) . . . . . 10 »
Մեր ավագ յեղբայրները—կոմյերիտականները,—Լ. ԿՈ-
ԼԵՍՆԻԿՈՎ . . . . . 33 »

ԳԵՎԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ

Հակոբ Պարոնյան (ընտիր յերկեր), պրակ I . . . . 40 »
Հակոբ Պարոնյան » » » II . . . . 35 »
Հակոբ Պարոնյան » » » III . . . . 35 »
Պատմվածքներ,—Ա. ՍԵՐԱՖԻՄՈՎԻՉ . . . . . 45 »
Մայր,—Ֆ. ԲԵՐԵԶՈՎՍԿԻՑ . . . . . 45 »
«Չապայեվ»,—Դ. ՖՈՒՐՄԱՆՈՎ . . . . . 50 »
Հոկտեմբերյան պատմվածք,—Ա. ՑԱԿՈՎԼԵՎ . . . . 20 »
Կոմիսարները.—Ա.Լ. ՖԱԴԵԵՎ
Ջաղացպան Ոսպայ,—Ա. ՖԼՈՐՈՎ . . . . . 20 »
Դալլեր,—Ֆ. ԳԼԱԴԿՈՎ . . . . . 25 »
Կանդալների Պատմությո ն,—Ն. ԼՑԱՇԿՈ . . . . . 20 »
Ջորացող բեվեր,— » . . . . . 25 »
Արտասովորը,—ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՑ . . . . . 40 »
Մրրկահավի յերգը, յեվ ուրիշ պատմ.—Մ. ԳՈՐԿԻՑ . . 15 »
Ցերիտասարդ գրողը: Մարդը,— » . . . 15 »
Թե ինչպես Սամոն կարմիր բանակային դարձավ,—
Ա. ԿՐԱՎՉԵՆԿՈ . . . . . 35 »
Ցերկրաշարժ (պատմվածք),—Դ. ԿԼԱՑՍ . . . . . 25 »
Ընկեր Վալյա,—Մ. ՑՈՒՐԻՆ . . . . . 15 »

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ.
ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ

ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԳՐՔԵՐԻՑ ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ ՀԵՏԵՎՅԱԼՆԵՐԸ

Սոցիալիզմի ուղին,—Ն. ԲՈՒԽԱՐԻՆ . . . . . 1 ռ. 25 կ.
Ազգայի՛ն Հարց,—Ի. ՍՏԱԼԻՆ . . . . . 1 ռ. 60 »
Գյուղացիական Հարց,—Ի. ՍՏԱԼԻՆ . . . . . 50 »
Լե՛նինի պատգամները ժողովրդ. լուսավորության մասին 20 »
Լենինի պատգամները յերիտասարդության . . . . . 15 »
Համ. Կոմկուսի (բ) պատմությունը,—Վ. ՎՈԼՍՆՎԻՋ . . 1 ռ. 50 »
Բոլշեվիկ՛ների կուսակցությունը 1917 թվին,—
ՑԵՐ. ՑԱՐՈՒԼԱՎՍԻՑ . . . . . 85 »
Ի՞նչ տվեց Հոկտեմբերը բանվորներին,—Ի. ՏՈՒՐՍԿԻՑ . . 20 »
1905 թ. մեր Ի-ի՛ բանվորա-գյուղացիական հեղափոխությո՛ւը,—Ի. ՖԼԵՐՈՎՍԿԻՑ . . . . . 70 »
Քաղաքական բառարան,—կազմեց Վ. ԱԲՐԱՄՑԱՆ (656 եջ) 2 ռ. —
Պատմական մատերիալիզմի այբուբենը . . . . . 80 »
Պայքարի յի՛վ ճիշտարարության տասը տարի,—Ի. ՆՈՎԱԿՈՎՍԿԻՑ . . . . . 70 »
«Ի. ՍՏԱԼԻՆ» (համառ. կենսագր.) . . . . . 7 »
Ինչպես աշխուժացնել գյուղխորհուրդները,—Զ. ԼԱՎՐԵՆՏՑԵՎ 30 »
Պատերազմ չենք ուզում, բայց դ մադ՛ելու պատրաստ ենք,—
ՑԱ. ԱՎԻՆՈՎԻՑԿԻՑ յեվ Վ. ՁԱՐՁԱՐ . . . . 10 »
Ինչով է ուժեղ կարմիր բանակը,—ՁՈՐԻՆ . . . . . 15 »
Տգիտությունը յեվ սնահավատությունը,—Վ. ԴՄԻՏՐԻՑԵՎ 15 »
ՄԵ ոդական ձեռնարկ (ուսուցիչների համար) . . . . 70 »
Հասարակագիտությունը Ի-ին ասիճանի դպրոցում,—
Բ. ԺԱՎՈՐՈՆԿՈՎ . . . . . 65 »
Գեղջկուհին յեվ յերեխաները, ... 25 »
Ի՞նչպես է սարված ցիլեզները,—Գ. ԳՐԱՎԵ (նկարազ.) 50 »
Աբեվը, նրա վորդիները յեվ բոռները,—Բ. ՍԵՐԵՑԿԻՆ (նկ.) 40 »
Ինչպես է առաջացել յեվ զարգացել կյանքը յերկրի վրա,
ՄԻ. ԳՐԵՄՑԱՑԿԻ (նկարազարդ) . . . . . 50 »

Մարդու յեվ կենդանիների ծագումը,—Դ. ԱԴՈԼ (նկ.) . 35 »
Մարդ-մեքենա,—ՄԻ. ԳՐԵՄՑԱՑԿԻ (նկարազարդ) . . . . »
Մարդու անհետանալի բջնամիները ու բարեկամները,—
Լ. ՋԻԼԲԵՐ (նկարազարդ) . . . . . 20 »
Վորոս, կայծակ, ելեկտրականություն,—ՄԻ. ԳՐԵՄՑԱՑԿԻ (նկարազարդ) . . . . . 40 »
Պատանի Պիոներ (ժողովածու, նկարազարդ) . . . . . 60 »
Պիոներ, հետեվիր Լենինի պատգամներին . . . . . 20 »
Հոկտեմբերը (համառ. պատմ.) . . . . . 10 »
Մեր ավագ յեղբայրները—Կոմյերիտականները,—Լ. ԿՈԼՆՆԻԿՈՎ . . . . . 33 »

ԳԵՎԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ

Հակոբ Պարոնյան (ընտիր յերկեր), պրակ I . . . . . 40 »
Հակոբ Պարոնյան » » » II . . . . . 35 »
Հակոբ Պարոնյան » » » III . . . . . 35 »
Պատմվածքներ,—Ա. ՍԵՐԱՖԻՄՈՎԻՋ . . . . . 45 »
Մայր,—Ֆ. ԲՈՐՆՋՈՎՍԿԻՑ . . . . . 45 »
«Զապայեվ»,—Դ. ՖՈՒՐՄԱՆՈՎ . . . . . 50 »
Հոկտեմբերյան պատմվածք,—Ա. ՑԱԿՈՎԼԵՎ . . . . . 20 »
Կոմիսարները.—Ալ. ՖԱԴԵՑԵՎ
Ջաղացպան Ոտապայ,—Ա. ՖԼՈՐՈՎ . . . . . 20 »
Գայլեր,—Ֆ. ԳԼԱԴԿՈՎ . . . . . 25 »
Կանդալների Պատմությո՛ւն,—Ն. ԼՑԱՇԿՈ . . . . . 20 »
Ջորացող բեվեր,— » . . . . . 25 »
Արտասովոր,—ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՑ . . . . . 40 »
Մորկաճավի յերգը, յեվ ուրիշ պատմ.—Մ. ԳՈՐԿԻՑ . . 15 »
Ցերեսասարդ գրողը: Մարդը,— » . . . 15 »
Թե ինչպես Սամոն կարմիր բանակային դարձավ,—
Ա. ԿՐԱՎՉԵՆԿՈ . . . . . 35 »
Ցերկրաշարժ (պատմվածք),—Գ. ԿԼԱՑՍ . . . . . 25 »
Ընկեր Վալյա,—Մ. ՑՈՒՐԻՆ . . . . . 15 »

ԻՄԱՐՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ՑԵՎ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՏՊԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հեռագիր, հեռախոս, ռադիո *(նկարազարդ)*
Զվարճալի պատմվածքներ «Աստվածաշնչից», 84 ծաղրանկարով,
Կրոնների ծագումը *(նկ.)* *(մասսայական)*:
Ոպպոզիցիոն հոսանքները Համ. Կոմկուսի *(բ)* մեջ:
Քաղգրագիտության դասագիրք *(կոմս. հաղաքային դպր. համար)*:
Քաղաքական զրույցներ *(կոմս. գյուղ. դպր. համար)*:
(վերջին 2 գրքերը առաջիկա 1928—29 ուսումն. տար. համար են):

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՊԱՀԵՍՏԸ
ԴՏՆՎՈՒՄ Է ՄՈՍԿՎԱՑՈՒՄ
(Москва, Никольская 10. Центриздат)
ՊԱՏՎԵՐՆԵՐՈՎ ԿԱՐԵԼԻ ԵՆ ԴԻՄԵԼ ՆԱՑԵՎ՝
ՌՈՍՏՈՎ (Դոնի վրա)—ՄԵՐ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ,
ՑԵՐԵՎԱՆ—ՊԵՏՀՐԱՏԻՆ,
ԲԱԳՈՒ—ԱԶԳԻԶԻՆ.
ՊԱՀԱՆՋԵՑԵՔ ՄԵՐ ԼՐԻՎ ԳՐԱՅՈՒՅԱԿԸ
ՎՈՐ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ՁՐԻ

ՀՀ Ազգային գրադարան
NL0188459

40 ч.

34034

УЧЕБНИК

для городских комсомольских политшкол

вып. I

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С. С. С. Р.
Москва, центр, Никольская, 10